

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կ. Յ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՆԵԴՈՒԸ

(դասախոսություն)

ԵՐԵՎԱՆ
ՏՆՏԵՍԱԳԵՏ
2006

ՀՏԴ 339. 5 (479. 25)
ՊՄԴ 65. 9 (23) 8
Գ 888

Հրատարակության է երաշխավորել ԵՊՏԻ
մակրոտեկոնոմիկայի ամբիոնը

Մասն. խմբագիր՝ տ.գ.թ., պրոֆ. Ի. Տիգրանյան

Գրախոսներ՝ տ.գ.թ., դոց. Յ. Հովհաննիսյան
տ.գ.թ., դոց. Ք. Վարդանյան
տ.գ.թ., դոց. Լ. Կիրակոսյան
տ.գ.թ., դոց. Զ. Թադևոսյան

Գրիգորյան Կ.Հ.
Գ 888 ՀՀ արտաքին առևտուրը և վճարային հաշվեկշիռը
(դասախոսություն).-Եր.: Տնտեսագետ, 2006. - 80 էջ

Դասախոսության տեքստում ներկայացված են արտաքին առևտրի ժամանակակից հիմնախնդիրները, ՀՀ արտաքին առևտրի զարգացման դինամիկան: Մեծ ուշադրություն է դարձված արտաքին առևտրի պետական կարգավորմանը, այդ ոլորտում Հայաստանի Հանրապետությունում իրականացվող քաղաքականության առանձնահատկություններին: Բացահայտված են վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնախնդիրները, ներկայացված են այդ հաշվեկշռի կազմման սկզբունքները, ինչպես նաև դրա ընդհանուր հավասարակշռվածության ձևավորման պայմանները: Բերված են վճարային հաշվեկշռում կատարվող գործարքների գրանցման թվային օրինակներ:

Դասախոսության տեքստը նախատեսված է տնտեսագիտական բուհերի ուսանողների համար:

Գ $\frac{0605010300}{719(01)-2006}$ 2006

ՊՄԴ 65. 9 (23) 8

ISBN 99941-51-16-9

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2006

Բովանդակություն

Թեմա 1. Արտաքին առևտրի պետական կարգավորումը

- 1.1. Արտաքին առևտրի պետական կարգավորման նպատակները, սկզբունքները և հիմնական ուղղությունները
- 1.2. Արտաքին առևտրի հիմնական տեսությունները
- 1.3. Արտաքին առևտրի ազատականացման դերը անցումային տնտեսության երկրներում
- 1.4. Արտաքին առևտրի պետական կարգավորման լծակները
- 1.5. Արտաքին առևտրի քաղաքականության առանձնահատկությունները
Հայաստանի Հանրապետությունում
- 1.6. ՀՀ արտաքին առևտրի զարգացման դինամիկան

Թեմա 2. Վճարային հաշվեկշռի պետական կարգավորումը

- 2.1. Վճարային հաշվեկշռի էությունը և կազմման սկզբունքները
- 2.2. Ընթացիկ գործառնությունների հաշվի մշակման սկզբունքները
- 2.3. Կապիտալի և ֆինանսական հաշվի մշակման սկզբունքները
- 2.4. Վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնական սկզբունքները
- 2.5. Ընթացիկ հաշվի և արժութային փոխարժեքի փոխկապակցվածությունը
- 2.6. Վճարային հաշվեկշռի ընդհանուր հավասարակշռվածության ձևավորման պայմանները

Վճարային հաշվեկշռում կատարվող գործարքների գրանցման վերաբերյալ օրինակներ

Գրականության ցանկ

Թեմա 1. Արտաքին առևտրի պետական կարգավորումը

1.1. Արտաքին առևտրի պետական կարգավորման նպատակները, սկզբունքները և հիմնական ուղղությունները

Արդի ժամանակաշրջանում համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող ինտեգրման գործընթացներն ավելի են խորացնում տարբեր երկրների տնտեսական կապերը, որոնք ուղեկցվում են այդ երկրների միջև ապրանքների, ծառայությունների, մտավոր գործունեության օբյեկտների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի ակտիվացմամբ:

Պետությունը նույնպես իր մասնակցությունն է ունենում արտաքին տնտեսական կապերի զարգացմանը: Արտաքին տնտեսական կապերի պետական կարգավորման համակարգը ձևավորելիս հաշվի են առնվում տնտեսական, սոցիալ-քաղաքական, աշխարհագրական, պատմական և մի շարք այլ գործոններ:

Արտաքին տնտեսական կապերի պետական կարգավորման ժամանակակից համակարգերի հիմնական առանձնահատկություններից է դրանց համապարփակ նորմատիվաիրավական ապահովվածությունը: Գործուն օրենսդրական բազան երաշխավորում է պետական կարգավորման իրավական կայունությունը: Ընդունվում են հատուկ օրենքներ, օրենսդրական ակտեր, որտեղ նշվում են գործադիր իշխանության մարմինների իրավասության շրջանակները, արտաքին առևտրային գործունեության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Երկրի արտաքին առևտրային կապերը ձևավորվում են՝ ելնելով տվյալ երկրի տնտեսական կայունացման ու զարգացման պահանջներից: Սովորաբար փոքր երկրներն իրենց առևտրային կապերը չեն կառուցում այլ երկրներում տնտեսական և քաղաքական ազդեցություն ունենալու համար, այլ ցանկանում են ստեղծել փոխադարձ շահերի վրա ձևավորվող հարաբերություններ:

Թեև շուկայական տնտեսությանն անցման փուլում նախկին խորհրդային հանրապետություններում, այդ թվում նաև Հայաստանում, արտաքին առևտրի պետական մենաշնորհը վերացավ, այնուամենայնիվ դրա պետական կարգավորումը, հատկապես արտահանման պետական խթանման առումով, օբյեկտիվ անհրաժեշտություն է, քանի որ ձեռնարկությունների մեծ մասը չունի ինքնուրույն արտահանման փորձ և զգալի դժվարությունների է հանդիպում այդ ոլորտում:

Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման հիմնական նպատակներն են.

1. ապահովել երկրի տնտեսական ինքնիշխանությունը,
2. ապահովել երկրի տնտեսական անվտանգությունը,
3. խթանել ազգային տնտեսության զարգացումը,
4. ապահովել երկրում արտադրված ապրանքների շարժն ու մրցունակությունը համաշխարհային շուկայում,
5. ապահովել համաշխարհային տնտեսությանն ազգային տնտեսության ինտեգրման արդյունավետ պայմանները:

Տնտեսական ինքնիշխանությունը նշանակում է պետական իշխանության ամբողջական հաստատում երկրի ներսում և պետության մասնակցությունը միջազգային տնտեսական հարաբերություններում:

Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման միջոցով ապահովվում է երկրի տնտեսական անվտանգությունը՝ ստեղծելով այնպիսի տնտեսական պայմաններ, որոնք երաշխավորում են սոցիալական, քաղաքական և պաշտպանական զարգացման բավարար մակարդակ և ներքին ու արտաքին հնարավոր սպառնալիքներից տնտեսական շահերի պաշտպանություն: Արտադրության կրճատման, ներդրումային և նորամուծական ակտիվության նվազման, գիտատեխնիկական ներուժի կորստի, պետական բյուջեի եկամտային մասի կրճատման, պետական պարտքի ավելացման և վճարային հաշվեկշռի վատթարացման հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամային իրավիճակը լուրջ սպառնալիք է երկրի տնտեսական անվտանգությանը:

Պետության տնտեսական անվտանգությունն ուղղակիորեն կապված է վճարային հաշվեկշռի հետ: Վճարային հաշվեկշռի հավասարակշռման նպատակով պետությունը կարող է որոշում ընդունել ներմուծումը ժամանակավորապես սահմանափակելու մասին: Պետությունը կարող է երկրի տնտեսական անվտանգությունն ապահովել նաև այն ապրանքների արտահանումը սահմանափակելու միջոցով, որոնց պահանջարկը մեծ է՝ ներքին շուկայում գոյություն ունի պակասուրդ:

Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման խնդիրներից է ներմուծման ապրանքային կառուցվածքի օպտիմալացումը: Դրան հասնելու համար պետությունը, որպես կանոն, իջեցնում կամ ամբողջությամբ վերացնում է երկրի տնտեսական զարգացման համար անհրաժեշտ ապրանքների ներմուծման մաքսատուրքերը և, միաժամանակ, բարձր մաքսատուրքեր է սահմանում հայրենական արտադրանքի հետ մրցակցող ապրանքների վրա:

Ազգային տնտեսության զարգացումը խթանելու կարևոր միջոց է օտարերկրյա մրցակցության ոչ ցանկալի ներգործությունից դրա պաշտպանության ապահովումը: Միջազգային շուկայում գոյություն

ունեն համանման ապրանքներ մատակարարողներ, որոնցից շատերն իրենց արտադրանքի տեխնիկական պարամետրերով և արտադրության վրա կատարված ծախսերով զգալիորեն գերազանցում են հայրենական արտադրողներին: Այդ մասին է վկայում արտաքին առևտրային մրցակցության բարձր մակարդակը և զնային խտրականության առկայությունը ներքին և արտաքին շուկաներում: Տնտեսության զարգացման համար առավել նպատակահարմար է համահարթել զնե-րը, այլ ոչ թե կիրառել արգելակիչ միջոցներ:

Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման խնդիրներից է նաև հայրենական արտադրության մրցունակության բարձրացումը, որն ապահովվելու համար պետությունը խթանում է նոր տեխնոլոգիաների ստեղծումը և յուրացումը:

Արտաքին առևտրային գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտը պետք է խթանի համաշխարհային տնտեսության հետ երկրի տնտեսական կապերի ակտիվացումը: Այդ օրենսդրության զարգացման հիմնական ուղղվածությունը նրա ներդաշնակությունն ու միասնականությունն է՝ ընդունված միջազգային նորմերին համապատասխան: Միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացում պետությունն այլ պետությունների հետ ստեղծում է մաքսային միություններ, ազատ առևտրի գոտիներ, ստորագրում է համաձայնագրեր առևտրատնտեսական հարցերի կարգավորման, մաքսային ոլորտում համագործակցության ապահովման մասին:

Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորումն իրականացվում է որոշակի սկզբունքներով, որոնք ելակետային կազմակերպամորմատիվային հիմնադրույթներ են: Դրանք ապահովում են արտաքին առևտրային գործունեությունը կարգավորող օրենսդրության և քաղաքականության փոխկապվածությունը: Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման գործում առանձնահատուկ նշանակություն ունեն հետևյալ սկզբունքները.

1. *Երկրի ընդհանուր արտաքին քաղաքականության և արտաքին առևտրային քաղաքականության ներդաշնակությունը:* Արտաքին առևտրային քաղաքականությունը բխում է պետության արտաքին քաղաքականության նպատակներից ու պահանջներից և դուրս չի գալիս դրա սահմաններից: Այս հանգամանքով պայմանավորված՝ արտաքին առևտրի ոլորտում կայացվող կոնկրետ որոշումները համաձայնեցվում են արտաքին քաղաքականության ընդհանուր նպատակների հետ: Հնարավոր է, որ արտաքին քաղաքականության շահերը երկրորդ պլան մղեն արտաքին առևտրային որևէ գործարքի տնտեսական արդյունավետության նախադրյալները, օրինակ՝ որևէ երկրի հետ հարաբերություններում պետությունը կիրառելով միջազգային պատժամիջոցներ, կարող է դադարեցնել արտաքին առևտրային հարաբերու-

թյունները տվյալ երկրի հետ, որքան էլ այդ առևտրային գործարքը շահավետ լինի:

2. *Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման և դրա իրականացման վերահսկողության համակարգերի միասնականությունը:* Վերահսկողությունը արտաքին առևտրի պետական կարգավորման կարևոր գործառույթներից է, որն ապահովում է որոշումների կատարման և ստացվող արդյունքների ստույգությունը: Արտաքին առևտրային գործունեության վերահսկողությունն իրականացվում է երկրի գործադիր իշխանության մարմինների կողմից:

3. *Արտահանման վերահսկողության քաղաքականության միասնականությունը:* Արտահանման վերահսկողության համակարգը միջոցառումների ամբողջություն է, որոնք իրականացվում են գործադիր իշխանության մարմինների կողմից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, զինամթերքի և ռազմական տեխնիկայի, առանձին տեսակի հումքի, նյութերի, սարքավորումների, տեխնոլոգիաների և գիտատեխնիկական տեղեկատվության արտահանման նկատմամբ: Այդպիսի քաղաքականության նպատակն է ազգային անվտանգության, քաղաքական, տնտեսական և ռազմական շահերի ապահովումը, ինչպես նաև զանգվածային ոչնչացման և այլ վտանգավոր զինամթերքի արտահանումը խոչընդոտելու վերաբերյալ պետության միջազգային պարտավորությունների կատարումը:

4. *Պետության մաքսային տարածքի միասնականությունը:* Մաքսային տարածքն այն վայրն է, որտեղ գործում է տվյալ պետության մաքսային օրենսդրությունը: Մաքսաիրավական կարգավորման համար կիրառվում է մաքսային սահման հասկացությունը, որն իրենից ներկայացնում է այն եզրերը, որոնք սահմանափակում են մաքսային տարածքը: Մաքսային սահմանն ընդգծում է տվյալ պետության մաքսային օրենսդրության գործողության տարածական սահմանները և առանձնացնում է մաքսային տարածքը մեկ այլ պետության մաքսային տարածքից: Այլ կերպ ասած, մաքսային տարածքը սահմանում է պետության մաքսային ինքնուրույն գործունեության ոլորտը: Մաքսային տարածքի միասնականության սկզբունքն ուղղված է արտաքին առևտրի և մաքսային անջատողականության առաջացման վերացմանը: Այն բացառում է ներքին մաքսային սահմանների առաջացման հնարավորությունը:

5. *Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման տնտեսական միջոցների առաջնայնությունը:* Արտաքին առևտրի պետական քաղաքականությունն իրականացվում է տնտեսական և վարչական մեթոդների կիրառմամբ՝ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կարգավորելով արտաքին առևտրային գործունեությունը: Դրա համար պետությունը կիրառում է տարբեր գործիքներ՝

մաքսային սակագներ, ոչ սակագնային գործիքներ, ֆինանսաարժու-թային կարգավորում, հակադեմպինգային և փոխհատուցման տուր-քեր, արտաքին առևտրում առանձին ապրանքների գծով պետական մենաշնորհ, տեխնիկական արգելքներ, արտոնագրում և քվոտավորում:

Չարգացման ներկա փուլում պետությունը ձգտում է արտաքին առևտրային գործունեությունը կարգավորել ոչ թե վարչական արգելք-ներով և սահմանափակումներով, այլ ստեղծելով բարենպաստ տնտե-սական պայմաններ՝ արտաքին առևտրային գործունեություն իրակա-նացնելու համար: Վարչական միջոցները կարող են օգտագործվել այն դեպքում, երբ տնտեսական միջոցներով անհնար է հասնել պետու-թյան առջև դրված նպատակներին:

6. *Արտաքին առևտրային գործունեության մասնակիցների հավա-սարությունը և նրանց նկատմամբ խտրականության կիրառման բա-ցառումը:* Այս սկզբունքը նեղ իմաստով կապված է սահմանադրու-թյամբ ամրագրված իրավահավասարության սկզբունքի և մասնավոր, պետական, համայնքային և սեփականության այլ ձևերի հավասարու-թյան ճանաչման ու պաշտպանության հետ: Հարկ է նշել, որ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հավասարության՝ սահմանադրությամբ ամրագրված սկզբունքը չի բացառում առանձին կատեգորիաների անձանց հատուկ իրավունքների, արտոնությունների և առավելությունների առկայությունը: Պետությունը արտաքին առևտրային գործունեության մասնակիցների միջև խտրականություն չի դնում:

7. *Արտաքին առևտրային գործունեության մասնակիցների իրա-վունքների և օրինական շահերի պաշտպանությունը պետության կող-մից:* Պետությունն ապահովում է իրավաբանական և ֆիզիկական ան-ձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Եթե արտաքին առևտրային գործունեության մասնակիցները տուժել են պետության կիրառած միջազգային պատժամիջոցներից, ապա նրանք իրավունք ունեն իրենց կրած վնասները փոխհատուցել պետական բյուջեի միջոցների հաշվին՝ դատական կարգով: Եթե տվյալ երկրի քա-ղաքացիները տուժել են այլ պետության գործողություններից, ապա նրանց տնտեսական շահերը պաշտպանելու համար պետությունը կարող է իրականացնել պատասխան միջոցառումներ: Արտաքին առևտրի զարգացման տարեկան ծրագրերի հատուկ բաժինը պետք է ընդգրկի տվյալ պետության քաղաքացիների հանդեպ խտրակա-նության և պարտավորությունների խախտման դեպքերի, ինչպես նաև ընդունված պատասխան միջոցառումների ցանկը:

8. *Արտաքին առևտրային գործունեությանը պետության չարդա-րացված միջամտության բացառումը, որն ամբողջությամբ վերցրած դրա մասնակիցներին և տնտեսությանը պատճառում է վնասներ:* ՀՀ սահմանադրությունը սահմանում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք

ունի ազատորեն օգտագործել իր ունակությունները՝ ձեռնարկատիրական և օրենքով չարգելված այլ տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Սա նշանակում է, որ պետության կողմից ընդունված օրենքների և ենթաօրենսդրական ակտերի շրջանակներում արտաքին առևտրային գործունեության մասնակիցներն ունեն գործունեության լրիվ ազատություն: Արտաքին առևտրի ոլորտում ծագած հարաբերությունների կարգավորման համար կիրառվում են այնպիսի սկզբունքներ, որոնք ամրագրված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Դրանք են՝ քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտների իրավահավասարությունը, դրանց գործերին միջամտելու անթույլատրելիությունը, սեփականության անձեռնմխելիությունը, պայմանագրի ազատությունը, իրավունքների անարգել կատարման անհրաժեշտությունը, խախտված իրավունքների վերականգնման ապահովումը, նրանց դատական պաշտպանությունը: Փաստորեն, պետության միջամտության հնարավորությունը, որպես այդպիսին, չի բացառվում: Վերոնշյալ սկզբունքը վերաբերում է պետության չարդարացված միջամտության դեպքերի բացառմանը:

Համաշխարհային շուկայում տարբեր երկրներ զբաղեցնում են տարբեր դիրքեր: Իր շահերի պաշտպանության համար յուրաքանչյուր երկիր այդ շուկայում վարում է ինքնուրույն արտաքին առևտրային քաղաքականություն, որն այլ պետությունների հետ առևտրային հարաբերություններում պետության կողմից իրականացվող նպատակաուղղված միջոցառումների ամբողջությունն է: Այդ քաղաքականության հիմնական նպատակներն են՝ տվյալ երկիրն աշխատանքի միջազգային բաժանման գործընթացի մեջ ընդգրկելը, արտահանման և ներմուծման հարաբերակցության բարելավումը և արտաքին առևտրի կառուցվածքի դրական փոփոխությունը: Արտաքին առևտրային քաղաքականության ուղղությունները երկուսն են՝ *ազատ առևտուր և հովանավորչություն*:

Ազատ առևտրի քաղաքականություն իրականացնելիս արտաքին առևտրի վրա պետության անմիջական միջամտությունը վերանում է, պետությունը կատարում է միայն կարգավորման գործառույթ: Սա չի նշանակում, որ պետությունն ընդհանրապես հրաժարվում է արտաքին տնտեսական գործունեության վրա ներգործելուց: Պետությունն այլ երկրների հետ պայմանագրեր կնքելու միջոցով իր երկրի տնտեսավարող սուբյեկտներին ապահովում է հնարավոր առավելագույն արտոնություններ: Այսպիսի քաղաքականությունը նպաստում է նաև երկրի տնտեսական բարեկեցության ավելացմանը, կայուն քաղաքական մթնոլորտի ձևավորմանը, որի արդյունքում պետությունները դառնում են ավելի փոխկապված և պատերազմների վտանգն էապես

նվազում է: Սակայն գործնականում այս քաղաքականությունը երբևէ ոչ մի երկրում լիարժեք չի կիրառվել:

Իր զարգացման և կատարելագործման ճանապարհին է անցել նաև արտաքին առևտրային քաղաքականության մյուս ուղղությունը՝ հովանավորչությունը, որով ապահովվում է ազգային տնտեսության պաշտպանությունը օտարերկրյա մրցակցությունից: Այս դեպքում շուկայի սուբյեկտների ազատ գործողությունները բացառվում են: Համաշխարհային շուկայում առանձին երկրների տնտեսական ներուժի ու մրցունակության տարբերության պատճառով տնտեսավարող սուբյեկտների ազատ գործողությունները կարող են ձեռնտու չլինել զարգացող երկրներին: Հովանավորչությունը կարող է նպաստել երկրի տնտեսության նոր ճյուղերի զարգացմանը, արտադրության խթանմանը, զբաղվածության և պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, երկրի տնտեսական անվտանգության ապահովմանը հատկապես կարճ ժամկետում: Սակայն այս քաղաքականության երկարաժամկետ կիրառումը տնտեսության մեջ նույնպես առաջացնում է լճացում, քանի որ արտադրությունը օտարերկրյա մրցակցությունից գերծպահելու դեպքում նվազում է տեղական արտադրողների շահագրգռվածությունը՝ բարձրացնելու արտադրանքի տեխնիկական մակարդակը և արտադրության արդյունավետությունը: Բացի այդ, կարող են սրվել միջպետական հակասությունները և կրճատվել արտահանման ծավալները:

Հաճախ ազատ առևտրի և հովանավորչության քաղաքականության տարրերը կիրառվում են միաժամանակ՝ կախված տվյալ երկրի տնտեսական զարգացման մակարդակից և տնտեսության առջև դրված խնդիրներից:

Արտաքին առևտրի պետական կարգավորման նպատակներն ու սկզբունքները հասկանալու համար անհրաժեշտ է պարզաբանել նաև արտաքին առևտրի հիմնական տեսությունները և դրանց կիրառման հնարավորությունները:

1.2. Արտաքին առևտրի հիմնական տեսությունները

Արտաքին առևտրի զարգացման ընթացքում ձևավորվել են մի շարք տեսություններ, որոնց իության պարզաբանումը կարևոր է գրեթե բոլոր տնտեսական համակարգերում այդ բնագավառի գործունեությունը բնականորեն կարգավորելու գործընթացում: Քննարկենք դրանցից հիմնականները:

Բացարձակ առավելությունների տեսությունը

Տնտեսագիտության դասական դպրոցի հիմնադիր Ադամ Սմիթը, ռեսուրսների բաշխման արդյունավետ եղանակների ուսումնասիրմանը զուգընթաց, հիմնովին հերքեց արտաքին առևտրում մերկանտիլիստների հովանավորչական գաղափարները և առաջադրեց բացարձակ առավելության սկզբունքը: Իբրև երկրի հարստության ստեղծման ու կուտակման նախադրյալ՝ նա կարևորեց ազատ առևտուրը:

Ա. Սմիթը մերժում էր առևտրային արգելքները, գտնելով, որ դրանք սահմանափակում են աշխատանքի բաժանումն ու մասնագիտացումը, հետևաբար նաև՝ տեխնոլոգիական առաջընթացն ու հարստության ստեղծումը:

Ա. Սմիթի բացարձակ առավելությունների, ինչպես նաև Դ. Ռիկարդոյի համեմատական առավելությունների տեսությունները հենվում են հետևյալ ենթադրությունների վրա.

ա. համաշխարհային տնտեսությունը կազմված է երկու երկրներից (պարզության համար՝ A և B), որոնք թողարկում են երկու ապրանք և օգտագործում են մեկ ռեսուրս՝ աշխատուժ,

բ. յուրաքանչյուր երկրում ռեսուրսի մեծությունը հաստատագրված է. այն լիովին օգտագործվում է ու միատարր է,

գ. վերջնական ապրանքների և ռեսուրսի շուկաները կատարյալ մրցակցային են, այսինքն՝ գործոնի սահմանային արդյունքը հավասար է դրա զննին,

դ. տեխնոլոգիան անփոփոխ է. ընդ որում՝ թեպետ տարբեր երկրներ կարող են օգտագործել տարբեր տեխնոլոգիաներ, սակայն յուրաքանչյուր երկրի բոլոր ֆիրմաները միևնույն ապրանքի արտադրությունում օգտագործում են միևնույն տեխնոլոգիան,

ե. յուրաքանչյուր երկրի ներսում աշխատուժը կատարյալ շարժուն է բոլոր ապրանքների արտադրության մեջ, սակայն կատարյալ ոչ շարժուն է տարբեր երկրների միջև,

զ. տրանսպորտային ծախսերը զրոյական են, առևտրի մաքսային կամ այլ արգելքներ գոյություն չունեն:

Ըստ սահմանման՝ A երկիրը B երկրի համեմատ բացարձակ առավելություն ունի այն ապրանքի արտադրությունում, որում իր աշխատուժի արտադրողականությունն ավելի բարձր է: Այսինքն՝ A-ն կարող է միավոր աշխատաժամանակում այդ ապրանքից թողարկել ավելի շատ կամ, որ նույնն է, միավոր արտադրանքի թողարկման մեջ B-ի համեմատ ծախսել ավելի քիչ աշխատաժամանակ:

Ա. Սմիթի համոզմամբ՝ յուրաքանչյուր երկրում անպայմանորեն առկա է առնվազն մեկ ոլորտ, որում երկիրն ունի բացարձակ առավելություն: Վերջինիս աղբյուր կարող են լինել աշխատուժի հատուկ ունակությունները, մտավոր կարողությունները, բնակլիմայական պայ-

մանները, հումքային ռեսուրսները և այլն: Սմիթի մոդելի հիմնական եզրահանգումն այն է, որ երկրները պետք է մասնագիտանան ու արտահանեն այն ապրանքները, որում ունեն բացարձակ առավելություն՝ ներմուծելով այն ապրանքները, որոնցում բացարձակ առավելություն չունեն: Ելնելով վերոնշյալ տեսության դրույթներից՝ համաշխարհային արտադրանքի ծավալների փոփոխության վրա արտաքին առևտրի և մասնագիտացման ազդեցությունը ցույց տանք պայմանական օրինակով (տես՝ աղյուսակ 1):

Իբրև երկու երկրներ դիտարկենք Անգլիան ու Հայաստանը, որոնք արտադրում են մահուղ և գինի: Աղյուսակ 1-ի տվյալների համաձայն՝ Անգլիան բացարձակ առավելություն ունի մահուղի արտադրությունում, իսկ Հայաստանը՝ գինու: Հետևաբար Անգլիան պետք է մասնագիտանա մահուղի արտադրությունում և դրանք արտահանի Հայաստան՝ փոխարենը ներմուծելով գինի:

Աղյուսակ 1

Մահուղի և գինու միավոր արտադրանք թողարկելու համար անհրաժեշտ աշխատուժի թվաքանակը Անգլիայում և Հայաստանում

	Միավոր արտադրանք թողարկելու համար անհրաժեշտ աշխատուժի թվաքանակը	
	Անգլիա-A	Հայաստան-B
Մահուղ – X	10	20
Գինի – Y	5	1

Եթե Հայաստանը մեկ միավորով կրճատի մահուղի արտադրությունը, ապա 20 միավոր աշխատուժ ազատ կարձակվի: Այդ աշխատուժը կարող է լրացուցիչ 20 միավոր գինի արտադրել: Նշյալ 20 միավոր գինին Անգլիա արտահանելու դեպքում Անգլիայում ազատ կարձակվի 100 միավոր աշխատուժ, որից ընդամենը 10-ն է անհրաժեշտ Հայաստանում միավոր մահուղի սկզբնապես կրճատված քանակությունը փոխհատուցելու համար: Մնացած 90 միավոր աշխատուժը կարող է օգտագործվել լրացուցիչ քանակությամբ ինչպես մահուղի, այնպես և գինու արտադրության համար, օրինակ՝ 7 միավոր մահուղի և 4 միավոր գինու: Դրանով իսկ, մասնագիտացման շնորհիվ համաշխարհային արտադրությունը կընդլայնվի 7 միավոր մահուղով և 4 միավոր գինով:

Բերված օրինակը մոդելավորելու համար կատարենք հետևյալ նշանակումները. L_A -ով նշանակենք A երկրի աշխատուժի թվաքանակը, L_B -ով՝ B երկրինը, իսկ a_{LX} -ով՝ A երկրում միավոր X ապրանք արտադրելու համար օգտագործվող աշխատուժի թվաքանակը, b_{LX} -ով՝ B երկրում միավոր X ապրանք արտադրելու համար օգտագործ-

վող աշխատուժի թվաքանակը, a_{LY} -ով՝ A երկրում միավոր Y ապրանք արտադրելու համար օգտագործվող աշխատուժի թվաքանակը և b_{LY} -ով՝ B երկրում միավոր Y ապրանք արտադրելու համար օգտագործվող աշխատուժի թվաքանակը: Բացարձակ առավելությունների տեսության համաձայն՝ եթե տեղի ունի հետևյալ պայմանը՝

$$a_{LX} < b_{LX} \text{ և } a_{LY} > b_{LY},$$

ապա A երկիրը բացարձակ առավելություն ունի X, իսկ B երկիրը՝ Y ապրանքի արտադրությունում:

Մոդելի եզրահանգումը բնականաբար նույնն է նաև այն դեպքում, երբ խնդիրը դիտարկվում է հակառակ տեսանկյունից, այսինքն՝ ըստ միավոր աշխատուժով թողարկվող արտադրանքի քանակի:

Աղյուսակ 2

*Միավոր աշխատուժով թողարկվող արտադրանքի քանակը
Անգլիայում և Հայաստանում¹*

	Միավոր աշխատուժով թողարկվող արտադրանքի քանակը	
	Անգլիա-A	Հայաստան-B
Մահուդ – X	1/10=0.1	1/20=0.05
Գինի – Y	1/5=0.2	1/1=1

Այս դեպքում նույնպես, ինչպես ցույց են տալիս աղյուսակ 2-ի տվյալները, Անգլիան բացարձակ առավելություն ունի մահուդի, իսկ Հայաստանը՝ գինու արտադրությունում:

Հատկանշական է արտադրության ծավալների համեմատությունը փակ և բաց տնտեսությունների պայմաններում: Նախապես ենթադրենք, որ A երկրում աշխատուժի ընդհանուր թվաքանակը 1000 միավոր է, իսկ B-ում՝ 700 միավոր:

A երկիրը ամբողջությամբ մահուդի արտադրությունում մասնագիտանալու դեպքում կարող է արտադրել՝ $L_A \times a_{LX} = 1000 \times 0.1 = 100$ միավոր: Համապատասխանաբար՝ B երկիրը, մասնագիտանալով գինու արտադրությունում, կարող է արտադրել՝ $L_B \times b_{LY} = 700 \times 1 = 700$ միավոր:

Եթե տնտեսությունները փակ լինեին, ապա, բաց տնտեսությունների համեմատ, համաշխարհային արտադրության ծավալը զգալիորեն քիչ կլիներ: Ընդունենք՝ տնտեսությունը փակ է, և B երկրին անհրաժեշտ է 25 միավոր մահուդ (ազատ առևտրի դեպքում նա կարող է 25 հաստոց ձեռք բերել A երկրից): Այդ 25 միավորի արտադրության հա-

¹ Աղյուսակ 2-ը կազմված է աղյուսակ 1-ի տվյալների հիման վրա:

մար B-ն ստիպված է օգտագործել $25 \times 20 = 500$ միավոր աշխատուժ, իսկ մնացած 200 միավոր աշխատուժը կբավականացնի սոսկ $200 \times 1 = 200$ միավոր գինու արտադրությանը: Համապատասխանաբար, եթե A երկիրը կարիք ունի 75 միավոր մահուդի, ապա դրա արտադրության համար կօգտագործի $75 \times 10 = 750$ միավոր աշխատուժ, իսկ մնացյալ 250 միավորով ի զորու կլինի թողարկել $250 \times 0.2 = 50$ միավոր գինի (տես՝ աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Բաց և փակ տնտեսությունների արտադրության ծավալները

	Բաց տնտեսություն	Փակ տնտեսություն
Մահուդ – X	100	$25 + 75 = 100$
Գինի – Y	700	$200 + 50 = 250$
Ընդամենը	800	350

Այսպիսով, բաց տնտեսությունների դեպքում համաշխարհային արտադրության ծավալը զգալիորեն գերազանցում է փակ տնտեսությունների դեպքում համաշխարհային արտադրության ծավալը:

Համեմատական առավելությունների տեսությունը

Դավիթ Ռիկարդոյի համեմատական առավելությունների սկզբունքը ցույց է տալիս, որ առևտուրը կարող է փոխադարձորեն շահեկան լինել նույնիսկ այն դեպքում, երբ կողմերից մեկը բացարձակ առավելություն ունի երկու ապրանքների արտադրությունում միաժամանակ: Դրանով Դ. Ռիկարդոն ընդլայնեց և զարգացրեց բացարձակ առավելությունների տեսությունը:

Աղյուսակ 4

Մահուդի և գինու միավոր արտադրանք թողարկելու համար անհրաժեշտ աշխատուժի թվաքանակը Անգլիայում և Հայաստանում

	Անգլիա - A	Հայաստան - B
Մահուդ - X	$a_{LX} = 50$	$b_{LX} = 20$
Գինի – Y	$a_{LY} = 3$	$b_{LY} = 1$

Համեմատական առավելությունների մոդելում, եթե նույնիսկ երկրներից մեկը բացարձակ ոչ արդյունավետ է երկու ապրանքների արտադրությունում միաժամանակ, այնուամենայնիվ կարող է մասնագիտանալ այն ապրանքի արտադրությունում, որում իր բացարձակ թերառավելությունը նվազագույնն է, այսինքն՝ որում ունի համեմատական առավելություն:

Աղյուսակ 4-ի տվյալների համաձայն՝ Անգլիան երկու ապրանքների արտադրությունում էլ ունի բացարձակ թերառավելություն: Սակայն մահուդի արտադրությունում անգլիական աշխատուժի արտադրողականությունը հայկականի համեմատ փոքր է 2.5 անգամ, իսկ գինու արտադրությունում՝ 3 անգամ: Հետևաբար, Անգլիան համեմատական առավելություն (նվազագույն թերառավելություն) ունի մահուդի արտադրությունում: Հայաստանը բացարձակ առավելություն ունի երկու ապրանքներում միաժամանակ, սակայն այդ բացարձակ առավելությունն ավելի մեծ է գինու արտադրությունում, հետևաբար Հայաստանը համեմատական առավելություն ունի գինու արտադրությունում:

Մահուդի և գինու միավոր արտադրանք թողարկելու համար օգտագործվող աշխատուժի թվաքանակների հարաբերությունը (աշխատուժ-մահուդ/աշխատուժ-գինի=գինի/մահուդ) իրենից ներկայացնում է տրանսֆորմացիայի սահմանային դրույք՝ SU^* , որը ցույց է տալիս գինով արտահայտված մահուդի արտադրությունը: Անգլիայում $SU^* = a_{LX} / a_{LY}$, իսկ Հայաստանում b_{LX} / b_{LY} :

Եթե

$$\frac{a_{LX}}{a_{LY}} < \frac{b_{LX}}{b_{LY}},$$

ապա մահուդի արտադրության գինով արտահայտված տրանսֆորմացման սահմանային դրույքը Հայաստանում ավելի բարձր է, քան Անգլիայում, որից և հետևում է, որ Անգլիան հարաբերական առավելություն ունի մահուդի արտադրությունում, իսկ Հայաստանը՝ գինու:

Այսպիսով, *յուրաքանչյուր երկիր պետք է մասնագիտանա այն ապրանքի արտադրությունում, որում ունի համեմատական առավելություն*: Մասնավորապես, մասնագիտանալով գինու արտադրությունում՝ Հայաստանը մահուդի արտադրությունը 1 միավորով կրճատելու դեպքում ազատում է 20 միավոր աշխատուժ, որով կարող է արտադրել 20 միավոր գինի: Գինու այդ քանակությունը Անգլիա ուղարկելու դեպքում այնտեղ ազատ կարձակվի $20 \times 3 = 60$ միավոր աշխատուժ, որից միայն 50 միավորն է անհրաժեշտ Հայաստանում մահուդի արտադրության նախնական կրճատումը փոխհատուցելու համար, իսկ մնացած 10 միավորը բավարար է ավելի քան 3 միավոր գինու *լրացուցիչ* քանակություն արտադրելու համար: Արդյունքում՝ համաշխարհային տնտեսությունը կշահի ոչ պակաս, քան 3 միավոր գինի:


Դ. Ռիկարդոյի մոդելում արտադրական հնարավորությունների կորն ունի ուղիղ գծի տեսք, քանի որ դիտարկվում է միայն մեկ ռեսուրս, և արդյունքում SU^* -ը հաստատուն է:

Արտադրական հնարավորությունների կորը թեպետ սահմանում է երկու ապրանքների արտադրության հնարավոր համակցությունների բազմությունը, սակայն չի որոշակիացնում, թե հասարակությունը ապ-

րանքների ինչպիսի համակցություն է նախընտրում և, հետևաբար, ինչպիսի համակցությամբ կարտադրվեն ապրանքները: Վերջինիս պարզաբանման համար անհրաժեշտ է դիտարկել հասարակության նախապատվությունները, որի գծանկարային պատկերումը կատարվում է անտարբերության կորերի միջոցով:

Անտարբերության կորերից յուրաքանչյուրը (I_1, I_2, I_3) արտահայտում է X և Y ապրանքների այն համակցությունները, որոնք ունեն միևնույն օգտակարությունը (տես՝ գծանկար 1): Իսկ կորերի թեքման անկյունը բնութագրում է այն հարաբերակցությունը, որով սպառողները պատրաստ են մեկ ապրանքի սպառումը փոխարինել մյուսով: Այդ հարաբերակցությունը սահմանվում է որպես փոխարինման սահմանային նորմ՝ ՓՍՆ: Փակ տնտեսության (ավտարկիայի) դեպքում երկրի սպառումը սահմանափակված է իր արտադրական հնարավորություններով. սպառումը նույնական է արտադրությանը:

Գծանկար 1. Արտադրական հնարավորությունների և անտարբերության կորերը



գծանկարում՝

L^A/a_{LY} –ն Y ապրանքի արտադրական հնարավորությունների սահմանն է A երկրում,

L^A/a_{LX} –ը՝ X ապրանքի արտադրական հնարավորությունների սահմանը A երկրում:

Արտադրության և սպառման համակցությունների մշյալ համընկնումը ցույց է տրված A^* կետում (տես՝ գծանկար 1), որում ՓՍՆ=ՏՄԴ: Ավելին, քանի որ բոլոր շուկաները կատարյալ մրցակցային են, ապա

A երկրում X ապրանքի հարաբերական գինը հավասար է SU^A -ին (P_X/P_Y)^A = a_{LX} / a_{LY} :

Երկրներից յուրաքանչյուրի համար արտաքին առևտուրը շահեկան կլինի, եթե ապրանքների փոխանակման հարաբերական գինը գերազանցի ներքին SU^A -ը: Մասնավորապես, Հայաստանը գինու արտադրությունում կմասնագիտանա և այն անգլիական մահուդով կփոխանակի միայն այն դեպքում, եթե 20 միավոր գինու միջազգային հարաբերական գինը՝ (P_X / P_Y)^{World}, կազմի ավելի քան 1 միավոր մահուդ: Հակառակ դեպքում, եթե, օրինակ, 20 միավոր գինու միջազգային հարաբերական գինը կազմի 0.9 միավոր մահուդ, ապա Հայաստանին ավելի ձեռնտու կլինի ինքնուրույն արտադրել մահուդ, քանի որ իր համար 1 միավոր մահուդի SU^A -ը կազմում է 20 միավոր գինի: Անգլիայի համար առևտուրը շահեկան է, եթե առևտրի պայմանները այնպիսին են, որ 1 միավոր մահուդը փոխանակվում է ավելի քան 50 / 3 միավոր գինով կամ, որ նույնն է, 20 միավոր գինին փոխանակվում է 1.2 միավորից պակաս մահուդով:

Փաստորեն 20 միավոր գինու միջազգային գինը անպայման պետք է գտնվի (1;1.2) միջակայքում: Ենթադրենք՝ փաստացի 20 միավոր գինու միջազգային գինը կազմում է 1.1 միավոր մահուդ: Դա ակնհայտորեն ձեռնտու է Հայաստանին, քանի որ գինու յուրաքանչյուր 20 միավորի հաշվով նա շահում է 0.1 միավոր մահուդ: Նմանապես՝ նշված գինը շահեկան է Անգլիային, քանի որ մահուդի յուրաքանչյուր միավորի հաշվով շահում է $(20 : 1.1) - (20 : 1.2) = 18.18 - 16.67 = 1.51$ միավոր գինի:

Հետևաբար, որպեսզի A երկիրը գերադասի մասնագիտանալ X ապրանքի արտադրությունում, անհրաժեշտ է, որ X-ի յուրաքանչյուր միավորի դիմաց նա ստանա ավելի քան (P_X / P_Y)^A միավոր Y, այսինքն (P_X/P_Y)^{World} > (P_X/P_Y)^A: Հակադարձաբար, B երկիրը կնախընտրի մասնագիտանալ Y ապրանքի արտադրությունում, եթե «առևտրի պայմանները» այնպիսին են, որ B-ն կարող է միավոր Y-ի դիմաց ձեռք բերել ավելի քան (P_Y/P_X)^B միավոր X, այսինքն, (P_Y/P_X)^{World} > (P_Y / P_X)^B:

Այսպիսով, միջազգային առևտրի հավասարակշիռ հարաբերական գները գտնվում են ավտարկիայի հարաբերական գների միջակայքում: Ավելացնենք, որ հավասարակշիռ հարաբերական գները պետք է բավարարեն շուկայի հավասարակշռման պայմանին: Այսինքն՝ ապրանքի այն քանակությունը, որ հավասարակշիռ հարաբերական գների պայմաններում երկիրը ցանկանում է արտահանել, պետք է հավասար լինի այդ նույն ապրանքի այն քանակությանը, որը մյուս երկիրը ցանկանում է ներմուծել:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ եթե երկիրը նույնիսկ ոչ մի ապրանքի գծով բացարձակ առավելություն չունի, ապա այդ երկիրը և

մյուս երկրները, միևնույն է, կշահեն միջազգային առևտրից: Դա տեղի կունենա, եթե երկրները մասնագիտանան այն ապրանքների արտադրության մեջ, որոնց համար ունեն համեմատական առավելություն: Համեմատական առավելության հիման վրա կատարվող առևտուրն օժանդակում է երկրների արտադրական կարողությունների ընդլայնմանը, որը հանգեցնում է առևտրին մասնակցող երկրների բնակչության կենսամակարդակի աճին: Ավելին, դա բաց տնտեսության գործունեության ուղղակի հետևանք է: Փաստորեն, ըստ դասական տեսության, ազատ առևտուրը երկրին հնարավորություն է տալիս սպառել ավելին, քան թույլ են տալիս երկրի արտադրական հնարավորությունները: Բացի այդ, արտադրության ամբողջական ծախսերն ավելի փոքր են լինում, քան փակ տնտեսության պայմաններում:

Հեկշեր - Օհլինի մոդելը

Դասական մոդելում դիտարկվում էր միայն մեկ ռեսուրս և համեմատական առավելությունը մեկնաբանվում էր երկու երկրներում ռեսուրսի արտադրողականության տարբերությամբ: Պատճառն այն էր, որ արտադրական հնարավորությունների կորի՝ ուղիղ գծի տեսք ունենալու հետևանքով գործոնների գործակիցները հաստատուն էին՝ անկախ նրանից, թե երկիրը որ արտադրական համակցությունն էր ընտրում:

Նոր դասական մոդելում դիտարկվում է երկու ռեսուրս և արտադրական հնարավորություններն ունեն կորի տեսք, իսկ գործոնների գործակիցները այլևս հաստատուն չեն, այլ փոփոխվում են արտադրական հնարավորությունների կորի երկայնքով: Արդյունքում՝ նոր դասական մոդելում համեմատական առավելությունը մեկնաբանվում է երկու երկրներում հարաբերական գների տարբերությամբ:

Ընդհանուր առմամբ, հարաբերական գների տարբերությունը կարող է պայմանավորվել նրանով, որ երկրները ունենում են ռեսուրսների տարբեր պաշարներ կամ կիրառում են տարբեր տեխնոլոգիաներ կամ էլ ունեն տարբեր նախասիրություններ:

Հեկշեր-Օհլինի մոդելը մշակել են շվեդ տնտեսագետներ Էլի Հեկշերը (1879-1952) և Բերտիլ Օհլինը (1899-1979): Մոդելում, ի լրումն Ռիկարդոյի մոդելի հայտնի նախապայմանների, ընդունվում է նաև, որ երկու երկրների տեխնոլոգիաներն ու նախասիրությունները նույնն են: Ըստ մոդելի՝ երկրները տարբերվում են սոսկ ռեսուրսների պաշարով և ապրանքների արտադրման ռեսուրսատարությամբ: Նշենք, որ նախասիրությունների նույնությունը նշանակում է, որ երկու երկրներում միևնույն հարաբերական գների դեպքում ապրանքների սպառման համամասնությունը նույնպես կլինի նույնը: Մոդելում ընդունվում է, որ տեխնոլոգիան ունի կայուն հատույց ծավալից հատկությունը, այսին-

քն՝ գործոնների փոփոխման դեպքում արդյունքը փոփոխվում է միևնույն համամասնությամբ:

Հեկշեր-Օիլինի մոդելում օգտագործվում են երկու հասկացություններ՝ երկրի ռեսուրսաառատություն և արտադրության ռեսուրսատարություն:

Երկրի ռեսուրսաառատությունը սահմանվում է՝ ելնելով ռեսուրսի հարաբերական մեծությունից: Այսինքն՝ A երկիրը B-ի համեմատ համարվում է կապիտալով (աշխատուժով) հարաբերականորեն առատ, եթե միավոր աշխատուժի (կապիտալի) հաշվով տնօրինում է ավելի շատ կապիտալ (աշխատուժ), քան B-ն: Դա ներկայացնենք հետևյալ կերպ.

$$\left(\frac{K^A}{L^A}\right) > \left(\frac{K^B}{L^B}\right)$$

որտեղ՝

K^A - ն կապիտալի ծավալն է A երկրում,

L^A -ն՝ աշխատուժի թվաքանակը A երկրում,

K^B -ն՝ կապիտալի ծավալը B երկրում,

L^B -ն՝ աշխատուժի թվաքանակը B երկրում,

իսկ K^A/L^A և K^B/L^B հարաբերությունները կապիտալազինվածության մակարդակներն են՝ համապատասխանաբար A և B երկրներում:

A երկիրը B-ի համեմատ կարող է բացարձակ քանակությամբ ավելի քիչ կապիտալ ունենալ, բայց համարվել կապիտալով առատ, քանի որ առանցքայինը կապիտալի ոչ թե բացարձակ, այլ միավոր աշխատուժի հաշվով մեծությունն է: Բնականաբար, քանի որ դիտարկվում է ընդամենը երկու երկիր և երկու ռեսուրս, ապա A երկրի կապիտալով հարաբերականորեն առատ լինելը նշանակում է, որ B երկիրը հարաբերականորեն առատ է աշխատուժով:

Ընդհանրապես ռեսուրսի առատությունը կարելի է սահմանել ոչ միայն ըստ քանակի, այլև ըստ գնի, այսինքն՝ առաջարկից բացի ներառել նաև պահանջարկը: Այսպես. A երկիրը B-ի համեմատ կապիտալով (աշխատուժով) հարաբերականորեն առատ է, եթե A երկրում դրա հարաբերական գինը ցածր է B երկրի նույն ցուցանիշից: Եթե կապիտալի հարաբերական գինը ներկայացնենք վարձավճար/աշխատավարձ հարաբերությամբ, ապա, ըստ մեր սահմանման, կունենանք հետևյալը.

$$\left(\frac{r_A}{w_A}\right) < \left(\frac{r_B}{w_B}\right)$$

որտեղ՝

r_A - ն կապիտալի գինն է A երկրում,

r_B —ն՝ կապիտալի գինը B երկրում,
 w_A —ն՝ աշխատավարձը A երկրում,
 w_B —ն՝ աշխատավարձը B երկրում:

Երկրորդ սահմանումը համարժեք է առաջինին, այն ենթադրությանը, որ, այլ հավասար պայմաններում, եթե A երկիրը հարաբերականորեն առատ է կապիտալով, ապա այդ երկրում կապիտալի գինը աշխատուժի համեմատ ավելի ցածր կլինի, քան B-ում:

Ռեսուրսատարությունը սահմանվում է միավոր արտադրանքի թողարկման նպատակով օգտագործվող ռեսուրսների քանակների համեմատության հիման վրա: Մասնավորապես, X ապրանքը Y-ի համեմատ համարվում է կապիտալատար, եթե միավոր X-ի արտադրության համար օգտագործվում է աշխատուժի համեմատ ավելի շատ կապիտալ, քան միավոր Y-ի արտադրության համար: Ձևականորեն դա կարող ենք արտահայտել հետևյալ կերպ.

$$\left(\frac{a_{KX}}{a_{LX}} \right) > \left(\frac{a_{KY}}{a_{LY}} \right) \quad (3)$$

որտեղ՝

a_{KX} —ը X ապրանքի միավորի արտադրությունում օգտագործվող կապիտալն է,

a_{LX} —ը՝ X ապրանքի միավորի արտադրությունում օգտագործվող աշխատուժը,

a_{KY} —ը՝ Y ապրանքի միավորի արտադրությունում օգտագործվող կապիտալը,

a_{LY} — ը՝ Y ապրանքի միավորի արտադրությունում օգտագործվող աշխատուժը:

Քանի որ, ըստ մեր նախնական ենթադրության, տեխնոլոգիան երկու երկրներում նույնն է, ապա, եթե X ապրանքը կապիտալատար է A երկրում, կապիտալատար է նաև B երկրում: Ձուգորդելով երկրի ռեսուրսաառատություն և արտադրության ռեսուրսատարություն հասկացությունները՝ Հեկշեր-Օհլինի տեսությունը սահմանում է, որ երկիրը համեմատական առավելություն ունի այն ապրանքի արտադրությունում, որում ավելի շատ է օգտագործվում տվյալ երկրում հարաբերականորեն ավելի առատ ռեսուրսը:

Վերը նշված օրինակում A երկիրն առատ է կապիտալով, և X ապրանքի արտադրությունը կապիտալատար է, հետևաբար A երկիրը համեմատական առավելություն ունի X ապրանքի արտադրությունում:

Փաստորեն, ըստ Հեկշեր-Օհլինի տեսության, երկրները կփորձեն արտահանել այն ապրանքները, որոնց արտադրության համար պահանջվող արտադրության գործոնների (աշխատանք, արտադրամի-

շոցներ, հող, բնական պաշարներ) զգալի մասը տվյալ երկրում հարաբերականորեն առատ է, իսկ փոքր մասը՝ հարաբերականորեն ոչ առատ: Երկրները կփորձեն ապրանքներ ներմուծել այն դեպքում, եթե առկա է գործոնների կառուցվածքի հակառակ համամասնությունը:

Արտաքին առևտրի այս տեսությունների հիմնական դրույթների պարզաբանումը կարևոր նշանակություն ունի դրա ազատականացման դերը անցումային տնտեսություն ունեցող երկրներում ճիշտ գնահատելու համար:

1.3. Արտաքին առևտրի ազատականացման դերը անցումային տնտեսության երկրներում

Տնտեսավարման վարչահրամայական համակարգից շուկայական համակարգին անցումը պահանջում է վերականգնել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին տնտեսական կապերը: Համաշխարհային տնտեսության գլոբալացման գործընթացի արագացման պայմաններում այդ է պահանջում նաև երկրի տնտեսության զարգացման գործում արտաքին գործոնների նշանակության մեծացումը:

Արտաքին տնտեսական գործունեության ոլորտում պետության առաջնահերթ գործառույթը այդ ոլորտի զարգացման մոդելի որոշումն է: Ընտրված մոդելի հիման վրա պետությունը սահմանում է արտաքին առևտրի ռազմավարությունը (կամ ուղղությունը) և հիմնական գերակայությունները:

Պետության արտաքին առևտրային քաղաքականությունը և՛ ժամանակի, և՛ տարածության առումներով ենթակա է մշտական փոփոխության, իսկ արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման շրջանակների հիմնախնդիրը հրատապ է հատկապես անցումային տնտեսություն ունեցող երկրների համար: Վարչահրամայական համակարգի պայմաններում այդ երկրներում գերիշխել է արտաքին առևտրի պետական մենաշնորհը, և անցումային շրջանում պետության միջամտության կտրուկ նվազումը առաջացրեց նույնիսկ ճգնաժամային իրավիճակներ: Սակայն, ինչպես ցույց է տալիս աշխարհի բազմաթիվ երկրների փորձը, արտաքին առևտրի ազատականացումը երկրի տնտեսության համար համարվում է բարիք, հետևաբար ազատ առևտրի մոդելը բավականին հեռանկարային է վերոնշյալ երկրների համար: Վիճահարույց կարող են լինել միայն այդպիսի մոդելին անցնելու ժամկետները, հերթականությունը և եղանակները:

Շուկայական տնտեսությանն անցման շրջանում կարևոր նշանակություն են ստանում մակրոտնտեսական կայունացման և տնտեսական բարեփոխումների իրականացման (մասնավորեցում, գների

ազատականացում, պետական հատվածի ու բանկային համակարգի վերականգնում) խնդիրները:

Արտաքին առևտրի ազատականացումը նույնպես նպաստում է այդ խնդիրների լուծմանը: Ներտնտեսական խնդիրների մեծամասնությունը (արտադրության անկում, դրա արդյունավետության նվազում, աճող գործազրկություն), որոնց այսօր առնչվում են անցումային տնտեսություն ունեցող շատ երկրներ, անմիջականորեն կապված են արտաքին տնտեսական գործոնների հետ: Արտաքին առևտրի ազատականացումը ռազմավարական կարևոր դեր է խաղում անցումային փուլում՝ խթանելով շուկայական հարաբերությունների ձևավորման գործընթացը հետևյալ առումներով.

1. Տնտեսության մեջ պետության միջամտության կրճատման շնորհիվ կազմակերպությունները և ձեռնարկությունները ձեռք են բերում տնտեսական ինքնուրույնություն:
2. Ներքին և համաշխարհային գների միջև փոխկապվածություն է ձևավորվում, որը հնարավորություն է տալիս արդյունավետ բաշխել ռեսուրսները: Հայրենական արտադրողներին և արտահանողներին հավաստի գնային տեղեկատվություն հաղորդելու, ինչպես նաև կայուն առևտրային կապեր հաստատելու համար պետությունը պետք է ապահովի արժույթի փոխարժեքի կայունությունը:
3. Արտաքին շուկաներում ընթացող մրցակցային պայքարին մասնակից են դառնում հայրենական արտադրողները: Ներքին շուկայում մրցակցության զարգացումը կարևոր միջոց է հայրենական արտադրության մրցունակության բարձրացման համար:

Համաշխարհային շուկայում մրցակցային պայքարի պայմանները, ներմուծման ծավալների և անվանացանկի արագ ընդլայնումը արտահանող կազմակերպություններին ստիպում են կրճատել ծախսերը, կատարելագործել տեխնոլոգիան, բարձրացնել արտադրամքի որակը: Արտահանման ազատականացումը հայրենական արտադրողներին հնարավորություն է տալիս թափանցել վաճառահանման նոր շուկաներ, ընդլայնել արտադրության ծավալները, հայրենական արտադրողներին ստիպում է անցնել կառավարման, շուկայագիտության, առևտրային գործառնությունների ժամանակակից մեթոդների և ձևերի:

Արտաքին առևտրի ազատականացումն արդյունավետ իրականացնելու համար այն պետք է կոորդինացնել հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների հետ:

Չնայած արտաքին առևտրի ազատականացումն իրականում օգնում է գնային բարեփոխումների և հակամենաշնորհային միջոցառումների իրականացմանը, բայց այդ գործընթացում կիրառվող միակ միջոցը չէ: Պետական հատվածի մասնավորեցումը և վերափոխումը

պետք է զուգակցվեն առևտրի ազատականացման հետ: Քանի որ առևտրային քաղաքականության մեջ տեղի ունեցող հաճախակի փոփոխություններն ազդում են կազմակերպությունների և տնային տնտեսությունների սպասումների վրա, ուստի նրանք կարող են կորցնել վստահությունը բարեփոխումների արդյունքների նկատմամբ:

Արտաքին առևտրի ազատականացումը տնտեսական բարեփոխումների անցկացման սկզբնական փուլում դառնում է օբյեկտիվ անհրաժեշտություն. մի կողմից՝ ներմուծման ազատականացումը ներքին շուկան ապահովում է անհրաժեշտ սպառողական ապրանքներով և զգալի չափով լուծում ապրանքների պակասուրդի խնդիրը, իսկ մյուս կողմից՝ արտահանման ազատականացումը հայրենական արտադրության զարգացման և ընդլայնման կարևոր գործոն է:

Արտաքին առևտրի ազատականացումը հիմքեր է ստեղծում հարկաբյուջետային քաղաքականության խնդիրների լուծման համար: Կոշտ քանակական սահմանափակումներից անցնելով մաքսատուրքերի գանձմանը և սահմանելով բարձր սակագներ՝ պետությունը կարող է նվազեցնել պետական բյուջեի խրոնիկական պակասուրդը:

Արտաքին առևտրի ազատականացումը չի նշանակում արտաքին տնտեսական կապերում պետության դերի իսպառ բացառում: Պետության նոր դերը մեծ է առևտրի ազատականացման նպատակի սահմանման, անհրաժեշտ նորմատիվային բազայի ստեղծման և տնտեսության ճյուղային կառուցվածքի օպտիմալացման գործում: Պետությունը պետք է ունենա արտաքին տնտեսական կապերի կարգավորման համապատասխան գործիքներ: Արտահանման վերահսկողության նպատակով կիրառվող միջոցներն անհրաժեշտ են ներքին շուկայում բավարար առաջարկի ապահովման համար:

Արտաքին առևտրում պետական մենաշնորհի վերացումը պետությանը զրկում է այդ բնագավառում տեղի ունեցող երևույթների վրա ազդելու բազմաթիվ հնարավորություններից: Իսկ դա վտանգավոր է, քանի որ ներմուծման թռիչքաձև աճը կհանգեցնի առևտրային հաշվեկշռի կտրուկ վատթարացման: Այդ պատճառով, ներմուծման վերահսկողությունը դարձել է անխուսափելի: Մաքսատուրքերը գերադասելի են քանակական սահմանափակումներից, քանի որ ներքին շուկայում մրցակցության զարգացման համար դրանք ապահովում են մեծ բաց դաշտ: Որպեսզի սակագնային կարգավորումն արդյունավետ լինի, անհրաժեշտ է ունենալ համապատասխան վարչական կառուցվածք, որն ապահովում է համապատասխան օրենքների և նորմատիվային ակտերի կատարումը: Հետևաբար պետությունն իր առջև պետք է դնի մաքսային և վարչական համակարգը զարգացնելու նպատակ:

Ազգային արժույթի փոխարկելիությունը արտաքին առևտրի ազատականացման կարևոր տարրերից մեկն է: Ազգային արժույթի միաս-

նական փոխարժեքի սահմանումը և իջեցումը մի կողմից կարող է խթանել արտահանումը և սահմանափակել ներմուծումը, իսկ մյուս կողմից՝ ազգային արժույթի արժեզրկումը հանգեցնում է ներմուծման գնի բարձրացմանը, որը կարող է խոչընդոտել ներմուծման ազատականացմանը:

ԱՊՀ նորանկախ երկրներում արտաքին առևտրի ազատականացման գործընթացը սկսվել է ԽՍՀՄ փլուզումից հետո՝ 1990-ական թվականների սկզբին: Գործնականում առաջին տարիներին նկատվում էր միջտարածաշրջանային երկրների միջև առևտրի ծավալների կտրուկ նվազում և արտաքին աշխարհի հետ առևտրի ծավալների որոշակի աճ: ԱՊՀ տարածաշրջանային առևտրի կրճատումը բնականոն երևույթ է, քանի որ այդ առևտուրը նախկինում իրականացվում էր կենտրոնացած կարգով և երբեք չի ապահովել ռեսուրսների բաշխման ու պատրաստի արտադրանքի արտադրության արդյունավետություն: Արտաքին աշխարհի հետ առևտրի ընդլայնումը հիմնականում պայմանավորված էր աշխարհագրորեն մոտ տեղադրվածությամբ կամ ընդհանուր լեզվական և մշակութային ավանդույթներով: Արտահանման կառուցվածքում ավելացել էր վառելիքահումքային արտադրանքի տեսակարար կշիռը և կրճատվել մեքենատեխնիկական արտադրանքի տեսակարար կշիռը, որը պայմանավորված էր արտադրության անկմամբ, ներդրումային և ֆինանսական ճգնաժամով: Իսկ ներմուծման կառուցվածքում ընդհակառակը՝ հումքի ներմուծումից անցում էր կատարվել պատրաստի սպառողական արտադրանքին, հիմնականում՝ սննդամթերքին: Եթե մինչ արտաքին առևտրի ազատականացումն արտահանումից ստացվող արժույթը հիմնականում օգտագործվում էր բարձրորակ արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի ներմուծման համար, ապա, դրանից հետո, արտահանումից ստացված եկամուտները մեծ մասամբ օգտագործվել են արտաքին պարտքի մարման համար, իսկ դրանց մի մասն էլ գրանցվել է արտասահմանյան բանկային հաշիվներում:

Արտաքին առևտրի ազատականացումը թույլ տվեց լուծել որոշ ընթացիկ խնդիրներ, բայց համաշխարհային փորձը վկայում է, որ այն դեռևս չի դարձել տնտեսության կառուցվածքային փոփոխությունների և տնտեսական աճի նկատելի գործոն: Արտաքին առևտրի ազատականացման արդյունավետությունը հաճախ կախված է այն բանից, թե ինչպես է իրականացվում, այսինքն՝ արտաքին առևտրային քաղաքականության ինչ գործիքներ են օգտագործվում, և որոնք են տվյալ ժամանակաշրջանի առաջնային նպատակները: 1990-ական թվականների սկզբներին իրականացված բարեփոխումներն ուղեկցվել են արտահանման սահմանափակումներով՝ նպատակ ունենալով պահել ապրանքները երկրի ներքին շուկայում, իսկ ներմուծման սահմանա-

փակումները, որոնք պետք է պաշտպանեին հայրենական արտադրողներին, փաստորեն բացակայել են (չատ երկրներ ներմուծման լիցենզավորում կամ քվոտավորում չեն կիրառել, իսկ ներմուծման սակագները բավականին ցածր էին): Եվ միայն 1990-ական թվականների կեսերին արտահանման սահմանափակումները թուլացան, իսկ ներմուծման սակագների դերը մեծացավ: Նման միտում նկատվեց նաև Հայաստանում:

Արտաքին առևտրի ազատականացման արդյունքները ցույց են տալիս, որ Արևելյան Եվրոպայի շատ երկրներ, ինչպես նաև Մերձբալթյան երկրները բաց տնտեսության ապահովման և համաշխարհային շուկայում արտահանման կողմնորոշման շնորհիվ հասել են նկատելի հաջողությունների: Անցումային փուլում գտնվող երկրներում արտաքին առևտրի ազատականացումն ինքնապատակ չպետք է լինի, այլ պետք է կիրառվի որպես տնտեսության զարգացման ռազմավարական նպատակներին հասնելու կարևոր միջոց: Տնտեսության կայունացման խնդիրները (վճարային հաշվեկշռի պակասուրդի կրճատում, բյուջեի եկամտային մասի համալրում, սպառողական շուկայում ապրանքների պակասուրդի վերացում) պետք է աստիճանաբար իրենց տեղը գիջեն կառուցվածքային վերափոխման երկարաժամկետ նպատակներին և տնտեսական աճի ապահովմանը: Այդ դեպքում պետության արտահանմանը նպատակաուղղված օժանդակությունը դառնում է արտաքին առևտրի և տնտեսական քաղաքականության ռազմավարական ուղղվածություն: Արտահանվող ապրանքների մրցունակությունը բարձրացնելու միջոցներից է երկրի արժույթային քաղաքականությունը: Սակայն այն կարող է բարձրացնել միայն արտահանման գնային մրցունակությունը, իսկ արտադրանքի որակը բարձրացնելու և համաշխարհային շուկայի պահանջներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ են այլ միջոցներ:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ արտաքին առևտրի ոլորտում բարեփոխումների ճիշտ իրականացումը նպաստում է տնտեսության արդյունավետության բարձրացմանը: Սակայն արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է առևտուրն ազատականացնել և իջեցնել հովանավորչության մակարդակը, մեծ նշանակություն տալ բյուջեի և մակրոտնտեսական կայունացման վրա առևտրային բարեփոխումների ազդեցությանը, ստեղծել անհրաժեշտ ենթակառուցվածքային և նորմատիվային բազա, մշակել արտահանման խթանման ազգային ծրագրեր: Արտահանման ընդլայնման կողմնորոշումը երկարաժամկետում մեծ հնարավորություններ է ստեղծում տնտեսության կառուցվածքային վերափոխումների և տնտեսական աճի ապահովման համար:

Արտաքին առևտրի կարգավորման գործընթացում կարևոր նշանակություն է ձեռք բերում համապատասխան տնտեսական լծակների օգտագործման խնդիրը:

1.4. Արտաքին առևտրի պետական կարգավորման լծակները

Արտաքին առևտրի զարգացման արդի խնդիրներից է այնպիսի արդյունավետ առևտրային քաղաքականության իրականացումը, որը հարկերի, լրավճարների և առևտրային արգելքների տարբեր ձևերի միջոցով ազդում է ներմուծման կամ արտահանման ծավալների վրա: Արտաքին առևտրի պետական կարգավորման հիմնական լծակներն են՝ արտաքին առևտրի սակագնային և ոչ սակագնային կարգավորումները:

Արտաքին առևտրի պետական կարգավորման հիմնական դասական լծակները մաքսային սակագներն են: Մաքսային սակագինը մաքսատուրքերի համակարգված դրույքացանկն է: Մաքսատուրքն ապրանքների ներմուծման կամ արտահանման համար սահմանվող մաքսային վճարն է, որը վճարվում է պետության մաքսային սահմանի վրա: Ներմուծվող ապրանքների համար պետության կողմից սահմանվող մաքսային սակագները բարձրացնում են այդ ապրանքների գները: Ներմուծողը, վճարելով մաքսատուրքը, ապրանքն իրացնում է տվյալ ապրանքի դիմաց վճարած միջազգային գնի և սակագնի գումարի չափով, այսինքն՝ տվյալ ապրանքի համար ներքին գինը ձևավորվում է հետևյալ ձևով.

Երկրի ներքին գին = համաշխարհային գին $\times$ (1 + սակագնային դրույքաչափ):

Մաքսային սակագների սահմանումից շահում են և՛ տեղական արտադրողները, որոնք իրենց ապրանքների գները նույնպես բարձրացնում են, և՛ պետությունը, որը ստանում է լրացուցիչ եկամուտներ: Սակայն այդ սակագների սահմանումից սպառողները կորցնում են ավելի շատ, քան շահում են ներքին արտադրողները, և պետությունը, այսինքն, ընդհանուր առմամբ, հասարակությունը կորուստներ է կրում կատարված ավելորդ ծախսերի չափով: Այնուհանդերձ, ներմուծման մաքսային սակագինը ոչ միայն նպաստում է պետության եկամուտների ավելացմանը, այլև պաշտպանում է տեղական արտադրությունը օտարերկրյա մրցակցությունից: Այդ է պատճառը, որ սակագները որոշ ժամանակահատվածում կտրուկ ավելանում են, հետագայում նվազում:

Սովորաբար բոլոր երկրները սակագների բարձրացման քաղաքականություն իրականացնում են ճգնաժամային իրավիճակներում: Այդ

քաղաքականությունը նպաստում է հայրենական արտադրանքի իրացմանը: Սակայն դա գործում է միայն կարճ ժամանակահատվածում, քանի որ մյուս երկրները, որպես պատասխան քայլ, նույնպես կդիմեն այդ քաղաքականությանը, որի արդյունքում միջազգային առևտրում կառաջանան զգալի խոչընդոտներ, կվերանա արտաքին մրցակցության բարերար ազդեցությունը տնտեսության զարգացման վրա, և արդյունքում բոլոր երկրների տնտեսական աճի տեմպերը կկրճատվեն:

Մաքսատուրքերը դասակարգվում են հետևյալ չափանիշներով՝ ըստ ապրանքների շրջանառության ուղղվածության, ըստ դրույքաչափերի, ըստ ազդեցության աստիճանի և ըստ տնտեսական բնույթի:

Ըստ ապրանքների շրջանառության ուղղվածության տարբերում են *ներմուծվող, արտահանվող և տարանցիկ ապրանքներից զանձվող մաքսատուրքերը*: Ներմուծման վրա սահմանվող տուրքերն ավելի կիրառական են, որոնց միջոցով նախ, պաշտպանվում են հայրենական արտադրողների շահերը, և երկրորդ՝ ավելանում են բյուջեի եկամուտները: Արտահանման վրա սահմանվող տուրքերը խոչընդոտում են հայրենական արտադրանքի մուտքն արտասահմանյան շուկաներ և հիմնականում կիրառվում են, երբ տվյալ երկրում նկատվում է այս կամ այն արտադրանքի պակասուրդ:

Տարանցիկ տուրքը համեմատաբար քիչ կիրառում ունի և ապրանքների վրա սահմանվում է այն դեպքում, երբ դրանք տվյալ երկրի տարածքով մի երկրից մեկ ուրիշ երկիր են փոխադրվում: Այս տուրքը կիրառվում է նաև մի քանի պետությունների տարածքով տրանսպորտային միջոցների շարժման դեպքում: Սովորաբար տարանցիկ փոխադրումը ոչ մի հարկման ենթակա չէ, բացառությամբ այդ տարանցիկ շարժումն ապահովող, սպասարկող ծառայություններից զանձվող վճարների (օրինակ, ճանապարհից օգտվելու համար զանձվող վճար):

Ըստ դրույքաչափերի տարբերում են իրավական ակտերով սահմանվող *բարձր մաքսատուրքեր*, պայմանագրերով սահմանվող *ցածր մաքսատուրքեր* և *արտոնյալ մաքսատուրքեր*:

Ըստ ազդեցության աստիճանի լինում են *արտոնյալ և խտրական մաքսատուրքեր*: Արտոնյալ մաքսատուրքերը սահմանվում են նվազագույն դրույքաչափից էլ ցածր մակարդակով՝ ստեղծելով առևտրի բարենպաստ պայմաններ: Խտրական տուրքերը սահմանվում են շատ բարձր դրույքաչափերով: Դրանք լինում են *պատասխան, փոխհատուցման և հակադեմպինգային*: Պատասխան տուրքերը կարող են տարածվել ամբողջ առևտրի կամ առանձին ապրանքների վրա և օգտագործվում են գործարարի տնտեսական գործունեության սահմանները կրճատելու նպատակով: Փոխհատուցման տուրքը գների տարբերության փոխհատուցման միջոցով հավասարակշռում է տեղական

և ներմուծված ապրանքների ծավալները: Հակադեմպինգային տուրքը սահմանվում է ներմուծման վրա: Դրանով հարկվում են այն ապրանքները, որոնք ներմուծվում են համաշխարհային գներից կամ ներմուծող երկրի ներքին գներից ցածր գներով:

Ըստ տնտեսական բնույթի տարբերում են *հարկաբյուջետային, հովանավորչական և հակազավթողական տուրքեր*: Հարկաբյուջետային տուրքերն ապահովում են եկամուտների առավելագույն հնարավոր հոսքը պետական գանձարան, ինչպես օրինակ՝ ներմուծման մաքսատուրքն այն ապրանքի վրա, որը տվյալ երկրում չի արտադրվում: Հովանավորչական տուրքերը կիրառվում են հայրենական արտադրությունն օտարերկրյա մրցակցությունից պաշտպանելու համար, ինչպես նաև տնտեսության առանձին ոլորտների զարգացման նպատակով: Ներքին շուկայում մենաշնորհային գների դեպքում բարձր ներմուծման մաքսատուրքերը կարող են ունենալ հակազավթողական բնույթ, քանի որ նպաստում են հակադեմպինգին:

Չնայած ներմուծման և արտահանման սակագները տնտեսապես նպատակահարմար չեն, սակայն դրանց սահմանումը հետապնդում է սոցիալական, քաղաքական և պաշտպանական նպատակներ: Մաքսատուրքերի կիրառման կողմնակիցները բերում են հետևյալ փաստարկները.

- Սոցիալական որևէ դասին օգնելու անհրաժեշտությունը: Դրան կարելի է հասնել գանձված մաքսատուրքերի հաշվին պետական ծախսեր կատարելու, առանձին արտադրողներին աջակցելու նպատակով պետական լրավճարներ տրամադրելու, ինչպես նաև արտադրական ենթակառուցվածքների ստեղծման համար ներդրումներ կատարելու միջոցով:
- Շքեղության ապրանքների ներմուծումը սահմանափակելու անհրաժեշտությունը, որը կարելի է իրականացնել դրանց ներմուծման վրա տուրքեր սահմանելու միջոցով:
- Երկրի արդյունաբերության երիտասարդ ճյուղերը խթանելու մղումը:
- Պետության եկամուտները մեծացնելու մղումը, հատկապես այն երկրներում, որտեղ դեռևս չի ձևավորվել կառավարման և հաշվառման հատուկ համակարգ, որի հետևանքով պետությունը նպատակահարմար է գտնում ապրանքների հաշվառումը և մաքսատուրքերի գանձումը իրականացնել մաքսային սահմանի վրա:

Շատ հաճախ երկրներն արտաքին առևտրի և հատկապես ներմուծման վրա ազդելու համար իրականացնում են ոչ տնտեսական միջոցառումներ կամ ոչ սակագնային կարգավորում: Դրանք բաժանվում են երկու խմբի.

1. Միջոցներ, որոնք ուղղված են ներմուծման ուղղակի սահմանափակմանը: Դրանք են՝ քվոտաները, արտոնագրերը, ներմուծման ավանդները, հակադեմպինգային ու փոխհատուցման տուրքերը:
2. Վարչական բնույթի միջոցներ, որոնք անուղղակի են ազդում առևտրի սահմանափակման վրա, բայց տալիս են համանման արդյունք: Դրանք են՝ մաքսային ձևակերպումները, տեխնիկական նորմերն ու ստանդարտները, փաթեթավորման ու մակնիշավորման պահանջները:

Ոչ սակագնային կարգավորման ամենատարածված միջոցներից մեկը արտաքին առևտրային գործունեության քանակական սահմանափակումն է, որն իրականացվում է քվոտավորման և արտոնագրման միջոցով:

Քվոտաները արտահանվող կամ ներմուծվող ապրանքների վրա ֆիզիկական կամ արժեքային սահմանափակումներն են որոշակի ժամանակահատվածի համար: Քվոտա սահմանելիս տեղի է ունենում էմբարգո, այսինքն՝ արտահանման կամ ներմուծման ծավալների վրա արգելք, որը այս կամ այն ապրանքի հոսքերի վրա հսկողության միջոց է: Ներմուծման վրա քվոտայի սահմանումը երկրի տնտեսության վրա թողնում է նույն ազդեցությունը, ինչ՝ ներմուծման վրա մաքսատուրքի սահմանումը:

Ներմուծման քվոտաների սահմանումը նպատակ ունի նաև պաշտպանելու հայրենական արտադրությունն օտարերկրյա մրցակցությունից, իսկ արտահանման քվոտաները կիրառվում են հազվադեպ՝ հիմնականում ապրանքների մեծ պակասուրդի դեպքում կամ քաղաքական այս կամ այն նպատակների իրականացման համար: Քվոտաներ սահմանելու դեպքում ապրանքները ներմուծվում են առանց մաքսատուրքերի գանձման, իսկ հաստատված չափից ավել ներմուծման դեպքում գանձվում են բարձր տուրքեր:

Քվոտաների ամենատարածված ձևերից են *գլոբալ* և *անհատական* քվոտաները: Գլոբալ քվոտան սահմանում է ներմուծման կամ արտահանման ծավալներն արժեքային կամ բնափրային արտահայտությամբ, որոշակի ժամանակաշրջանի համար և ներմուծողներին (արտահանողներին) տալիս է արտաքին առևտրային գործընկեր երկրի ընտրության հնարավորություն:

Ի տարբերություն գլոբալ քվոտայի, անհատական քվոտայի չափը տարբերակվում է ըստ երկրների: Միջազգային պրակտիկայում օգտագործվում է ներմուծման վրա սահմանվող անհատական քվոտաների երկու տեսակ: Մի տեսակը կարող է ձևավորվել գլոբալ քվոտայի հիման վրա այն դեպքում, երբ այդ քվոտայի շրջանակներում ապրանքները բաշխվում են երկրների միջև՝ նախորդ ժամանակաշրջան

նում ներմուծման աշխարհագրական կառուցվածքում իրենց ունեցած բաժնին համամասնորեն: Նման բաշխման դեպքում առաջնությունը երբեմն տրվում է, այսպես կոչված, ավանդական մատակարարներին: Երկրների միջև քվոտայի բաշխման մյուս տարբերակի դեպքում առաջնությունը տրվում է այն պետություններին, որոնք իրենց վրա են վերցնում տվյալ երկրից ապրանքներ ներմուծելու փոխադարձ պարտավորություններ: Քանի որ նման պարտավորություններն ամրագրվում են միջպետական համաձայնագրերում, ապա այդ դեպքում անհատական քվոտան ընդունում է երկկողմանի քվոտայի բնույթ՝ պայմանագրային սկզբունքների հիման վրա:

Արտաքին առևտրային գործունեության կարգավորման մեջ կիրառվում են նաև *սեզոնային* քվոտաներ, որոնք հիմնականում սահմանվում են գյուղատնտեսական մթերքների ներմուծման վրա, որոշակի ժամանակաշրջանի համար:

Քվոտաները դասակարգվում են նաև ըստ հետևյալ խմբերի.

- *ընդհանուր քվոտաներ*, որոնք սահմանվում են պետական կարիքների համար, օրինակ՝ տարածաշրջանային և աճուրդային քվոտաները,
- *բնական քվոտաներ* կապված նավահանգիստներում նավթային պահեստների, նավթամուղների թողունակության սահմանափակման հետ և այլն,
- *բացառիկ քվոտաներ*, որոնք սահմանվում են պետության կողմից բացառիկ դեպքերի համար՝ կապված երկրի ազգային անվտանգության ապահովման, ներքին շուկայի պաշտպանման և միջազգային պարտավորությունների կատարման հետ:

Գոյություն ունեն նաև *սակագնային* քվոտաներ: Սակագնային քվոտան, առանց մաքսատուրքի և (կամ) նվազեցված դրույքաչափերով մաքսատուրքով, որոշակի քանակությամբ ապրանքների ներմուծման թույլտվությունն է: Իսկ սահմանված սակագնային քվոտայից ավել ապրանքների ներմուծման դեպքում կիրառվում են սովորական դրույքաչափերով մաքսատուրքեր:

Արտաքին առևտրային գործունեության քանակական սահմանափակման մեկ այլ ձև է *արտոնագրումը*: Այն արտաքին առևտրային գործունեություն իրականացնելու համար լիազորված պետական մարմինների կողմից կիրառվող սահմանափակումն է՝ իրավունքի կամ թույլտվության տրամադրման միջոցով: Արտոնագրում սահմանվում է ապրանքների արտահանման և ներմուծման կարգը, ինչպես նաև տրվում է որոշակի ծավալի ապրանքների արտահանման (ներմուծման) թույլտվություն: Վերջինս, նեղ իմաստով, կապված է քվոտավորման հետ:

ժամանակակից արտաքին առևտրային գործունեության պրակտիկայում տարբերում են արտոնագրի երկու հիմնական տեսակ՝ *գլխավոր և անհատական*։

Գլխավոր արտոնագիրը, որը հրապարակվում է պաշտոնական տեղեկագրերում, ցանկացած անձի թույլ է տալիս արտոնագրում նշված ապրանքները ներմուծել (արտահանել) առանց որևէ քանակական կամ արժեքային սահմանափակման՝ եռամսյակի, կիսամյակի կամ տարվա ընթացքում։

Ներմուծման կամ արտահանման միանվագ թույլտվությունը կոչվում է անհատական արտոնագիր։ Նման արտոնագիր տրվում է որպես միանգամյա թույլտվություն՝ ապրանքի կոկրետ տեսակի (երբեմն երկու-երեք տեսակի, բայց նույն ապրանքախմբի համար) առևտրային գործարքի համար։ Անհատական արտոնագրում նշվում են դրա ստացողի, ապրանքի քանակի, զնի և ապրանքի ծագման երկրի մասին տվյալներ։ Այն չի կարող փոխանցվել մեկ այլ ներմուծողի (արտահանողի) և ունի գործողության սահմանափակ ժամկետ (սովորաբար մեկ տարի)։

Նորմատիվաիրավական ակտերում, որտեղ սահմանվում է արտաքին առևտրային գործունեության իրականացման կարգը, կարող են հստակորեն տրվել անհատական (միանգամյա) և գլխավոր արտոնագրերի ձևակերպումները։ Արտոնագրի տրման և ձևակերպման փաստաթղթերի համար զանձվում է սահմանված վճար (արտոնագրային տուրք)՝ հաշվարկված նվազագույն աշխատավարձի հիման վրա։

Համաշխարհային գների փոփոխության հետ կապված, ներքին գների փոփոխությունից խուսափելու համար, օգտագործվում են *փոխհատուցման զանձումներ*, որոնց մեծությունը հավասար է ապրանքի արտահանման ցածր գնի և ներքին շուկայում բարձր գնի տարբերությանը։ Փոխհատուցման զանձումները կարող են օգտագործվել մաքսատուրքերի փոխարեն, և դրանց բնորոշ է ինքնաբերաբար փոփոխությունը։ Եթե ներքին շուկայում գները կայուն են, իսկ համաշխարհային շուկայում փոխվում են, ապա փոխհատուցման զանձումները փոխվում են համաշխարհային գների փոփոխության չափով՝ հակառակ ուղղությամբ։ Դրանով այս զանձումները տարբերվում են տուրքերից, որոնք կայուն են։ Իսկ եթե համաշխարհային գինը կայուն է, ապա փոխհատուցման զանձումները կախված են ներքին գներից, իսկ ներքին գները՝ կիրառվող տուրքերի մեծությունից։ Փոխհատուցման զանձումների ինքնաբերաբար փոփոխելիությունը դժվարացնում է օտարերկրյա ապրանքների մուտքը ներքին շուկա։

Ներմուծման ավանդները որոշակի գումարի փոխանցումներ են հատուկ հաշիվ՝ ներմուծման արժեքի որոշակի համամասնությամբ։ Որոշ ժամանակ անց այդ գումարները վերադարձվում են՝ առանց տո-

կոսների վճարման: Արդյունքում՝ առաջանում են լրացուցիչ ծախսեր, քանի որ ներմուծողները ստիպված են փոխառություններ վերցնել ներմուծման ավանդների համար: Լրացուցիչ ծախսերի փոխհատուցման հետևանքով բարձրանում է ներմուծվող ապրանքի գինը, որն էլ հանգեցնում է պահանջարկի կրճատմանը, հետևաբար նաև՝ ներմուծման նվազմանը: Հաճախ ներմուծման ավանդներն օգտագործվում են վճարային հաշվեկշռի բարելավման համար՝ կրճատելով ներմուծումը:

Համաշխարհային առևտրում շրջակա միջավայրի և առողջության պահպանումը առևտրային արգելք չի համդիսանում, բայց անուղղակիորեն կարող է օգտագործվել այդ նպատակով: Ներմուծվող ապրանքները պետք է բավարարեն որոշակի տեխնիկական պահանջների, որոնք լրացուցիչ ծախսեր են առաջացնում ներմուծողների համար՝ կապված տեխնոլոգիայի փոփոխության և համապատասխան որակի հավաստագրի ստացման հետ:

Լրացուցիչ վճարներ են համարվում տարբեր վարչական, մաքսային, դրոշմային, վիճակագրական, սահմանային վճարները, որոնք նպաստում են ներմուծման կրճատմանը:

Պետությունը կարող է սահմանել նաև արժութային սահմանափակումներ, այսինքն՝ որոշում է արժույթի օգտագործման եղանակները, միջոցները և պարտադրում է արժույթով վճարումներ կատարելու թույլտվություն ստանալ: Արդյունքը նույնն է, ինչ քանակական սահմանափակման դեպքում:

Արտաքին առևտրում կարող են օգտագործվել նաև այլ ոչ սակագնային սահմանափակումներ, ինչպես օրինակ՝ պետական մենաշնորհն արտաքին առևտրում, տեղական հումքի պարտադիր օգտագործման պահանջը, որը կրճատում է ներմուծվող հումքի նկատմամբ պահանջարկը:

Արտահանման խթանման և ապրանքների մրցունակության բարձրացման համար պետության կողմից ձեռնարկություններին տրվում են *արտահանման լրավճարներ* (առավելապես փողային արտահայտությամբ), որոնք հնարավորություն են տալիս իջեցնել արտահանվող ապրանքների գները՝ առանց ձեռնարկությունների եկամուտների կրճատման: Այդ լրավճարներն արտահանողին տրվում են տարբեր ձևերով՝ ներքին և միջազգային գների տարբերության չափով (եթե ներքին գները բարձր են), արտահանողի որոշակի ծախսերի ֆինանսավորմամբ, որոշ արտոնությունների սահմանման ձևով (հարկային արտոնություններ, արագացված ամորտիզացիայի թույլտվություն և այլն): Պետությունը կարող է փոխառություն տալ արտահանողներին՝ առանց տոկոսի կամ տոկոսային և ժամանակային արտոնություններով: Քանի որ արտահանման լրավճարներն ավելացնում են ապրանքների արտահոսքը, ապա արտահանվող ապրանքների ներքին գները

բարձրանում են: Սպառողների վրա է ընկնում այն լրացուցիչ հարկերի բեռը, որոնք պահանջվում են արտահանման լրավճարների ֆինանսավորման համար: Միաժամանակ այդ լրավճարները նպաստում են ներքին շուկայի կայունացմանը և կարող են բարելավել երկրի դիրքը համաշխարհային առևտրում:

Աշխարհի բազմաթիվ երկրների զարգացման փորձը ցույց է տալիս, որ նրանց կողմից իրականացված արտաքին առևտրի կարգավորման ոչ տնտեսական միջոցները խոչընդոտում են արտաքին առևտրի շրջանառությունը: Օրինակ, Եվրոպայում քանակական սահմանափակումները տնտեսական ճգնաժամի տարիներին (1929-1933 թթ.) հովանավորչական քաղաքականության լավագույն գործիքներն էին: Այդ շրջանում գյուղատնտեսական հումքի և մթերքների գներն ավելի մեծ չափով էին նվազել, քան պատրաստի արդյունաբերական արտադրանքի գները: Եվ շատ ագրարային երկրներ, վճարային հաշվեկշռի պակասուրդի կրճատման նպատակով, սկսեցին իրենց ապրանքները իջեցված գներով արտահանել Արևմտյան Եվրոպայի զարգացած երկրներ: Մի շարք երկրներում, օրինակ Ֆրանսիայում և Գերմանիայում, սկսվեց սուր մրցակցային պայքար օտարերկրյա ու ազգային արտադրության գյուղատնտեսական մթերքների միջև, և մաքսային սակագները չկանխեցին գյուղատնտեսական մթերքների ներմուծումը: Այս պայմաններում զարգացած երկրները սկսեցին կիրառել ավելի արդյունավետ միջոցներ, որոնցից էին ներմուծվող ապրանքների քանակական սահմանափակումները:

Իսկ ԱՄՆ-ում ոչ սակագնային միջոցներից մեծ տարածում ուներ արտոնագրումը: Սակայն քանակական սահմանափակումներն ԱՄՆ-ին թույլ չէին տալիս մուտք գործել եվրոպական երկրների շուկաներ, և 1945-1949 թթ. դրանց վերացման փորձեր արվեցին: Արդյունքում՝ եվրոպական տնտեսական համագործակցության կազմակերպությունը մի շարք որոշումներ ընդունեց (1949-1951 թթ.), ըստ որոնց՝ քանակական սահմանափակումներից ազատվում էին այն ապրանքները, որոնք պետք է կազմեին երկրների միջև մասնավոր հատվածի շրջանառության 75%-ը: 1962 թ. քանակական սահմանափակումները վերացան մասնավոր ներմուծողների 90-95%-ի համար: Բացի այդ, 1968թ-ին քանակական սահմանափակումներն ամբողջությամբ վերացան Առևտրային միության երկրների միջև:

Այսպիսով, քանակական սահմանափակումներով սահմանվում են ձեռնարկության՝ արտաքին շուկա դուրս գալու պայմանները: Արտաքին առևտրային գործունեության վարչական կարգավորումն արդարացված չէ, այն անհրաժեշտ է միայն արտակարգ իրավիճակներում, երբ պետք է կենտրոնացնել արժույթային ռեսուրսների ծախսերը և մուտքերը, տնտեսական կարևորագույն ճյուղերն ապահովել պակա-

սուրդային հունքով և նյութերով: Սակայն շուկայական տնտեսության պայմաններում երկրի տնտեսության զարգացման համար առաջնայինը արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման տնտեսական միջոցներն են:

Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ այն երկրները, որոնք իրականացրել են ազատ առևտուր և հետևում են միջազգային տնտեսական կազմակերպությունների կանոններին, այժմ գտնվում են զարգացման ավելի բարձր մակարդակի վրա:

Հայաստանի Հանրապետությունն օգտագործելով համաշխարհային փորձը՝ որոշակի առանձնահատկություններ ունի արտաքին առևտրի քաղաքականության բնագավառում:

1.5. Արտաքին առևտրի քաղաքականության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի քաղաքական և տնտեսական անկախացումից հետո համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու անհրաժեշտությունն անխուսափելի դարձրեց ինքնուրույն արտաքին տնտեսական քաղաքականության մշակումն ու իրագործումը:

Մինչև 1991թ. Հայաստանի տնտեսության զարգացումը հիմնված էր ԽՍՀՄ հանրապետություններից հումքի, էներգակիրների, սննդամթերքի ներմուծման վրա, իսկ այդ միության փլուզումից հետո լուրջ հիմնախնդիրներ առաջացան: Սկզբնական շրջանում լայն տարածում ստացան միջպետական քլիրինգային պայմանագրերը¹, սակայն դրանք լիովին չէին բավարարում հանրապետության պահանջները և չէին համապատասխանում շուկայական տնտեսության զարգացման պահանջներին: Անհրաժեշտություն առաջացավ անցում կատարել ազատ առևտրի ռեժիմին: Կարելի է առանձնացնել Հայաստանի արտաքին տնտեսական գործունեության երկու հիմնական ուղղություն. արտաքին առևտուր և օտարերկրյա ուղղակի ներդրումներ:

Հայաստանը ստանձնել է արտաքին առևտրատնտեսական գործունեության ազատականացման ուղին: Այս առումով, պետությունը միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման և կարգավորման համար օգտագործում է մի շարք լծակներ: Չնայած ձեռնարկվող միջոցառումներին, դեռևս լիարժեքորեն չի ձևավորվել այնպիսի

¹ Միջպետական քլիրինգային պայմանագրերում պետությունը հանդես է գալիս որպես համախմբված գնորդ և համախմբված վաճառող՝ երաշխավորելով կնքված համաձայնագրերի կատարումը և ապահովագրելով մասնակիցներին հնարավոր ֆինանսական կորուստներից:

արտաքին տնտեսական քաղաքականություն, որում հստակեցված լինեն այդ ոլորտի նպատակներն ու խնդիրները:

Հայաստանի արտաքին տնտեսական գործունեությունը կարգավորվում է համապատասխան օրենսդրական և նորմատիվային փաստաթղթերով, ինչպես նաև երկկողմ և բազմակողմ միջպետական, միջկառավարական համաձայնագրերով սահմանված ռեժիմով:

Ներկայումս ՀՀ տարածքում գործում է Մաքսային օրենսգիրքը, որով մաքսային արտոնություններ են սահմանված:

ա) այն ապրանքների համար, որոնք Հայաստան են ներմուծվում այնպիսի երկրներից, որոնք համագործակցում են Հայաստանի հետ ազատ առևտրի գոտիներում¹ և մաքսային միություններում²,

բ) այն ապրանքների համար, որոնք Հայաստան են ներմուծվում մարդասիրական օգնության և հովանավորչության տեսքով,

գ) օրենքով սահմանված սահմանափակ թվով այն ապրանքների համար, որոնք ներմուծվում են մասնավոր անձանց կողմից և այլն:

Ըստ ՀՀ մաքսային օրենսգրքի, Հայաստանում գործում են հինգ տարածաշրջանային՝ Արարատյան, Գուգարքի, Շիրակի, Սյունիքի և Երևանի «Չվարթնոց» մաքսատներ: Մաքսատները ենթակա են վերադաս մաքսային մարմնին (ՀՀ մաքսային պետական կոմիտե) և իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ իրականացնում են մաքսային հսկողություն և համապատասխան մաքսային ռեժիմներով³ մաքսային ձևակերպումներ: Տարածաշրջանային մաքսատներն ունեն իրենց ենթակա մաքսային կետերը, որոնք տեղակայված են ՀՀ պետական սահմանի անցումային կետերում, որոնք նույնպես իրականացնում են մաքսային հսկողություն, սահմանված կարգով ապրանքների բացթողում և ձևակերպում:

Իրավաբանական և ֆիզիկական անձինք հավասար հիմունքներով իրավունք ունեն Հայաստան ներմուծել և արտահանել ապրանքներ (ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված կարգով): Արգելվում է տեղափոխել այն ապրանքները, որոնք վտանգ են ներկայացնում ազգային անվտանգության, մարդու կյանքի և առողջության, շրջակա միջավայրի, բարոյական, պատմական, մշակութային և հնագիտական արժեք-

¹ Ազատ առևտրային գոտում գտնվող երկրները միմյանց հետ առևտուր անելիս վերացնում են մաքսային սակագները և ապրանքների փոխանակության տարբեր սահմանափակումները:

² Մաքսային միության անդամ երկրներում ապրանքները և ծառայությունները տեղափոխվում են առանց մաքսային սակագների և սահմանափակումների, սակայն մի երրորդ երկրի նկատմամբ կիրառվում են միասնական սակագներ և սահմանափակումներ:

³ Ըստ ՀՀ մաքսային օրենսգրքի, մաքսային ռեժիմները սահմանվում են համաձայն մաքսային գործի իրականացման նպատակի:

ների, սեփականության իրավունքների և օրինական շահերի համար: Ապրանքները ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվում են մաքսային ռեժիմների համաձայն և ենթակա են հայտարարագրման: Հայտարարագրումն իրականացվում է երեք ձևով՝ *բեռնային մաքսային հայտարարագիր* (կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար), *ֆիզիկական անձանց կողմից լրացվող հայտարարագիր*, *ֆիզիկական անձանց բեռնային մաքսային հայտարարագիր* (օրենսդրությամբ սահմանված արժեքային և բնաիրային չափերը գերազանցելու դեպքում): Կախված հայտարարագրվող ապրանքների մաքսային ռեժիմից՝ ապրանքների հոսքերի համար կարող են կիրառվել կամ չկիրառվել սակագնային և ոչ սակագնային կարգավորման միջոցներ:

ՀՀ մաքսային օրենսգրքի և այլ իրավական ակտերի համաձայն՝ ՀՀ մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելիս գանձվում են մաքսային վճարներ. մաքսատուրքեր, մաքսավճարներ և օրենքով սահմանված հարկեր, տուրքեր ու այլ պարտադիր վճարներ (ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ, ճանապարհային, բնապահպանական և հաստատագրված վճարներ):

Մաքսատուրքերը մաքսային օրենսգրքով սահմանված կարգով ու չափով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարներ են: Ներկայումս ՀՀ-ում գործում են 0 և 10 տոկոս դրույքաչափերով մաքսատուրքեր, մասնավորապես՝ արտահանման դեպքում բոլոր ապրանքատեսակների նկատմամբ կիրառվում է 0 տոկոս դրույքաչափ, իսկ ներմուծման դեպքում, ելնելով ապրանքի բնույթից, կիրառվում են 0 կամ 10 տոկոս դրույքաչափով մաքսատուրքեր: 10 տոկոսանոց ներմուծման մաքսատուրքեր են սահմանված հիմնականում սննդամթերքի, քիմիական արտադրության որոշ ապրանքատեսակների, տեքստիլ և կաշվե իրերից ապրանքատեսակների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի, այսինքն՝ այնպիսի պատրաստի արտադրատեսակների՝ համար, որոնց համարժեքներն արտադրվում են ՀՀ-ում:

Մաքսատուրքը հաշվարկվում է ներկայացված հայտարարագրի հիման վրա. ենթադրենք՝ «X» կազմակերպությունը Հայաստան է ներմուծել 10 % դրույքաչափ մաքսատուրքով գանձվող 20 հատ սալօջախ (յուրաքանչյուրը 37 կգ գտաքաշով և 150 ԱՄՆ դոլար արժեքով) և 15 հատ 0 % դրույքաչափ մաքսատուրքով գանձվող գազօջախ (յուրաքանչյուրը 33 կգ գտաքաշով և 180 ԱՄՆ դոլար արժեքով): Ըստ հաշիվ-ապրանքագրի՝ ապրանքների արժեքը կազմել է 5700 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ սալօջախներ՝ 3000 ԱՄՆ դոլար, գազօջախներ՝ 2700 ԱՄՆ դոլար: Մինչև ՀՀ մաքսային կետ ապրանքների տեղափոխման և

¹ Տես՝ «Պարզեցված ուղեցույց 3», Երևան 2001 թ., էջ 97-109:

ապահովագրման համար վճարվել է 1570 ԱՄՆ դոլար: Մաքսային ձևակերպման օրվա դրությամբ 33 ԿԲ սահմանած 1 դոլարի հաշվարկային փոխարժեքը կազմել է 450 դրամ: Այսպիսով, մաքսատուրքը պետք է գանձվի միայն սալօջախների համար, իսկ որպեսզի գանձվող գումարը որոշվի, անհրաժեշտ է հաշվարկել 1 կգ ապրանքի փոխադրման և ապահովագրության արժեքը.

$$1570 \text{ ԱՄՆ դոլար} / (20 \text{ հատ} \times 37 \text{ կգ} + 15 \text{ հատ} \times 33 \text{ կգ}) = 1570 \text{ ԱՄՆ դոլար} / 1235 \text{ կգ} = 1,27 \text{ ԱՄՆ դոլար:}$$

Այնուհետև հաշվարկվում է սալօջախի մաքսային արժեքը¹.

$(740 \text{ կգ} \times 1,27 \text{ ԱՄՆ դոլար} + 3000 \text{ ԱՄՆ դոլար}) \times 450 \text{ դրամ} = 1.772.910 \text{ դրամ,}$
այստեղից էլ՝ գանձման ենթակա մաքսատուրքի գումարը կկազմի.

$$1.772.910 \text{ դրամ} \times 10 / 100 = 177.291 \text{ դրամ:}$$

Մաքսավճարը մաքսային ծառայությունների դիմաց կատարվող վճար է, որն օգտագործվում է մաքսային գործի զարգացման և մաքսային մարմինների նյութատեխնիկական ու սոցիալական բազայի ապահովման նպատակով: Մաքսավճարի դրույթաչափը կախված է կատարվող ծառայության բնույթից. մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների համար (3500 դր.), բանկերի կողմից տեղափոխվող արժույթի և արտարժույթի մաքսային ձևակերպումների համար (3500 դր.), ապրանքների զննման և հաշվարկման համար (300-1000 դր.), խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքի համար (ամսական 500.000 դր.), մաքսային մարմինների կողմից փաստաթղթերի տրամադրման համար (1000 դր.), 33 տարածքով ապրանքների մաքսային ուղեկցման համար, փոխադրամիջոցների մաքսային հսկողության համար:

Ակցիզային հարկը (ԱՀ) ապրանքների ներմուծման համար պետական բյուջե վճարվող անուղղակի հարկ է: Այն գանձվում է «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծվող ապրանքատեսակներից: Դրանք են՝ զարեջուր, խաղողի գինիներ, սպիրտ և սպիրտային խմիչքներ, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ, սիգարներ, սիգարետներ և սիգարետներ, բենզին, հում նավթ և նավթամթերք, դիզելային վառելիք, նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ (բացի բնական գազից): Հարկման բազան ապրանքների քանակն է՝ հաշվարկված բնափրային միավորներով: 1997թ-ից կիրառվում է նաև ներմուծվող և ակցիզային հարկով հարկվող ծխախոտի արտադրանքի, սպիրտի և ոգելից խմիչքների

¹ Մաքսային արժեքն այն գումարն է, որը փաստացի վճարվել է, ենթակա է վճարման կամ պետք է վճարվեր ապրանքը ներմուծման նպատակով ձեռք բերելու և մինչև 33 մաքսային սահմանը տեղափոխելու համար: Մաքսային արժեքը հիմք է ընդունվում մաքսային վճարների հաշվարկման համար:

համար դրոշմավորման կարգը: Դրոշմավորման ենթակա ապրանքների այդպիսի դրոշմանիշների ձեռքբերման համար վճարված գումարը համարվում է ակցիզային հարկի կանխավճար: Դրոշմավորման նպատակն է հսկողություն իրականացնել ենթակալիզային ապրանքների հարկի նկատմամբ և պաշտպանել տեղական արտադրողի շահերը:

Ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ) ներմուծվող ապրանքներից և փոխադրամիջոցներից գանձվող անուղղակի հարկ է: ԱԱՀ-ով չեն հարկվում օրենքով հաստատված ցանկում ընդգրկված այն ապրանքները, որոնց համար օրենքով սահմանված է մաքսատուրքի 0% դրույքաչափ և որոնք ենթակա չեն ակցիզային հարկով հարկման: ԱԱՀ-ի դրույքաչափը 20% է: ՀՀ ներմուծվող և մաքսատուրքով հարկվող ապրանքների համար ԱԱՀ գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ԱԱՀ} = (U_{\text{ա}} + U_{\text{գ}}) \times \Gamma_{\text{ԱԱՀ}} / 100,$$

որտեղ՝

$U_{\text{ա}}$ -ն ապրանքի մաքսային արժեքի գումարն է,

$U_{\text{գ}}$ -ն՝ մաքսատուրքի գումարը,

$\Gamma_{\text{ԱԱՀ}}$ -ն՝ ավելացված արժեքի հարկի դրույքաչափը:

Վերոհիշյալ մաքսատուրքի հաշվարկման օրինակով կազմակերպության կողմից ներմուծվող սալօջախների դիմաց գանձման ենթակա ԱԱՀ գումարը կկազմի.

$$(1.772.910 + 177.291) \times 20 / 100 = 390.040,2 \text{ դրամ:}$$

Հաստատագրված վճարներ սահմանված են ՀՀ ներմուծվող բենզինի և ծխախոտի արտադրանքի համար: Բենզինի յուրաքանչյուր տոննայի համար սահմանված է 222 ԱՄՆ դոլար, որի մեջ ԱԱՀ-ի և ԱՀ-ի հաշվարկային մեծությունները համապատասխանաբար կազմում են 39,2% և 60,8%, իսկ ներմուծվող ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարի ընդհանուր գումարի մեջ ԱԱՀ-ի, ԱՀ-ի և մաքսատուրքի հաշվարկային մեծությունները համապատասխանաբար կազմում են 15 %, 76,5 % և 8,5 %:

Ճանապարհային վճարը ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման նպատակով ՀՀ տարածք մուտք գործելիս մաքսային կետում ամսական գանձվող վճար է: Գանապարհային վճարը մաքսային մարմինների կողմից գանձվում է այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով, ծանրաքարշ, մեծ եզրաչափով ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար: Գանապարհային վճարի դրույքաչափը սահմանվում է ըստ ավտոմեքենայի բնութագրիչների¹:

¹ Տես՝ «Պարզեցված ուղեցույց 3», էջ 121:

Բնապահպանական վճարը բնապահպանական միջոցառումների իրականացման նպատակով պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է: Այն գանձվում է շրջակա միջավայր վնասակար նյութեր արտանետող և շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ ներմուծելիս և հաշվարկվում է ապրանքի մաքսային արժեքի հիման վրա: Դրա դրույթաչափերը սահմանվում են ըստ օդային ավազան վնասակար նյութեր արտանետող՝ այլ պետություններում գրանցված ավտոմեքենայի տեսակի ու բեռնատարողության և ըստ ապրանքի տեսակի²:

Ներկայումս կիրառվում են 33 օրենսդրությամբ սահմանված ապրանքների ներմուծման և արտահանման ոչ սակագնային կարգավորման հետևյալ միջոցները.

1. Բույսերի պահպանության համար քիմիական միջոցների ներմուծումը կատարվում է 33 գյուղատնտեսության նախարարության կողմից տրված եզրակացությունների հիման վրա,

2. 33 կարմիր գրքում գրանցված կենդանիների արտահանումը կատարվում է 33 բնապահպանության նախարարության կողմից տրված եզրակացությունների հիման վրա,

3. 33 միջազգային համաձայնագրերի առկայության դեպքում, 33 ծագում ունեցող ապրանքների՝ երրորդ երկրներ վերաարտահանման թույլտվությունը տալիս է 33 առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը: Վերաարտահանման կարգավորման վերաբերյալ 33-ն բազմակողմ համաձայնագրեր է կնքել միայն ԱՊՀ անդամ պետությունների հետ: Գործնականում վերաարտահանման դեպքեր հազվադեպ են տեղի ունենում: Օրինակ, եթե ՌԴ ծագում ունեցող հաստոցը «ներմուծում՝ ազատ շրջանառություն» մաքսային ռեժիմով նախկինում ձևակերպվել է 33-ում և ներկայումս պետք է արտահանվի Թուրքիա «արտահանում՝ ազատ շրջանառություն» մաքսային ռեժիմով, ապա ապրանքի արտահանումը թույլատրում է միայն ՌԴ համապատասխան իրավասու մարմինը:

4. 33 առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունն իրականացնում է Եվրոպական միության երկրներ արտահանվող տեքստիլ ապրանքների լիցենզավորումը:

5. 33-ում սահմանվել է պարտադիր հավաստագրման (սերտիֆիկացման) ենթակա արտադրանքի ցանկ, որը վերաբերում է նաև 33 մաքսային տարածք ներմուծվող ապրանքներին՝ (հիմնականում սննդի, քիմիական և էլեկտրատեխնիկական արտադրության ապ-

² Տես՝ «Պարզեցված ուղեցույց 3», էջ 123:

¹ Տես՝ «Պարզեցված ուղեցույց 3», էջ 135: Հայպետստանդարտը ԱՊՀ պետությունների և Իրանի Իսլամական Հանրապետության հետ կնքել է սերտիֆիկատների փոխադարձ ճանաչման համաձայնագրեր:

րանքներ): Նշված ապրանքների՝ «ներմուծում՝ ազատ շրջանառություն» ռեժիմով ձևակերպումը թույլատրվում է, եթե դրանք համապատասխանում են հավաստագրման պահանջներին:

6. ՀՀ-ից արտադրական նշանակության սարքավորումների, մեքենաների և տեխնիկայի որոշ տեսակների արտահանման դեպքում կիրառվում է թույլտվությունների մեխանիզմ: ՀՀ-ից երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների, ռազմական տեխնիկայի արտահանման համար ևս անհրաժեշտ է թույլտվություն, որը տալիս է տվյալ կազմակերպության գործունեության ոլորտը կարգավորող պետական կառավարման համապատասխան մարմինը (նախարարություն, գերատեսչություն):

7. Դեղերը և դեղանյութը ՀՀ կարող են ներմուծվել և արտահանվել ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման կամ արտահանման հավաստագրի հիման վրա: Հավաստագիրը տրվում է երեք ամսով, որով դեղերն ու դեղանյութերը ներմուծվում ու արտահանվում են համաձայն հաստատված ցանկի²:

8. ՀՀ մշակութային ժառանգության պահպանման, մշակութային արժեքների ապօրինի արտահանման ու ներմուծման և այդ արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի ապօրինի փոխանցման կանխման նպատակով Հայաստանում գործում է ՀՀ մշակույթի նախարարության կառուցվածքում ստեղծված՝ մշակութային արժեքների պահպանության վարչությունը, որը տալիս է մշակութային արժեքների արտահանման իրավունքի վկայագիր: Առանց նշված վկայագրի՝ մշակութային արժեքների արտահանումն արգելվում է, բացառությամբ մշակութային նշանակություն ունեցող զանգվածային արտադրության առարկաների և ժամանակակից հուշանվերային արտադրանքի:

ՀՀ մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելիս հայտարարատուն հայտարարագրում է նաև ապրանքների ծագման երկիրը, որի նպատակն է վերջիններիս նկատմամբ սակագնային կամ ոչ սակագնային կարգավորման որոշում կայացնելը: Ներկայումս ՀՀ-ն այլ պետությունների հետ կնքել է համաձայնագրեր «ՀՀ-ի հետ ազատ առևտրի և ազատ առևտրի գոտու ստեղծման» մասին, ըստ որոնց՝ այդ երկրներից ապրանքները ՀՀ ներմուծելիս, ինչպես նաև հայկական ծագում ունեցող ապրանքները նշված երկրներ ներմուծելիս ազատվում են մաքսատուրք վճարելուց: Այդ երկրներն են՝ Ռուսաստան, Վրաստան, Բելառուս, Ուկրաինա, Մոլդովա, Ղրղզստան, Թուրքմենիա, Ուզբեկստան, Ղազախստան և Տաջիկստան:

Մաքսային քաղաքականությունը լուծում է երկակի խնդիր՝ պետական բյուջեի եկամտային մասի ապահովում և արտաքին առևտրային

² Տես՝ «Պարզեցված ուղեցույց 3», էջ 140:

հոսքերի կարգավորում: Կախված այս կամ այն խնդրի գերակայությունից՝ ընտրվում է մաքսային քաղաքականության ուղղությունը: Օրինակ, զարգացող երկրները ստիպված են պետական բյուջե մուտքագրվող գումարի զգալի մասն ապահովել մաքսային վճարներով: Այստեղ բացառություն չէ նաև Հայաստանը: Նման իրավիճակը բարելավման կարիք ունի, քանի որ մաքսային զանձումները, ապահովելով երկրի պետական բյուջեի զգալի եկամուտներ, կարող են օգտագործվել ռազմավարական ոլորտների խթանման համար:

1.6. ՀՀ արտաքին առևտրի զարգացման դինամիկան

Խորհրդային տարիներին Հայաստանի արտաքին առևտրի վրա ազդեցություն են ունեցել մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ: Մեր երկրի արտաքին առևտրի գերակշիռ մասը հիմնականում տեղի էր ունենում ԽՍՀՄ մյուս հանրապետությունների հետ, որոնց ձեռնարկությունները գտնվում էին կոոպերացված կապերի մեջ: Դրանց միջև մատակարարումները տնտեսագիտորեն ճիշտ է անվանել ներկրում և արտակրում: Իրականում արտահանում և ներմուծում իրականացնում էր Խորհրդային Միությունը, որի արտաքին առևտրի հաշվեկշիռը դրական էր մինչև 1988թ., իսկ 1989-1990թթ-ից այն դարձավ բացասական: Ընդհանուր առմամբ, ԽՍՀՄ-ը բաց տնտեսություն չուներ, քանի որ 1990թ-ին արտահանվել է ՀԱԱ ընդամենը 6.1%-ը և ներմուծվել 7.1%-ը, ընդ որում՝ արտահանման 57.6%-ը կազմում էին էներգակիրները և հումքատեսակները: Նշենք, որ կանոնավոր գործող տնտեսության պայմաններում Խորհրդային Հայաստանի արտահանման ծավալը, մինչև պլանային տնտեսությունում նկատվող ճգնաժամը, կազմում էր արտադրված ՀՆԱ-ի մոտ երկու հինգերորդ մասը: Եթե նկատի ունենանք, որ 1986թ-ին Հոլանդիայի արտահանումը կազմել է ՀԱԱ 45, Կանադայինը՝ 28, Գերմանիայինը՝ 27, Մեծ Բրիտանիայինը՝ 23 և ԱՄՆ-ինը՝ 10.7%, ապա կարելի է ասել, որ Հայաստանի տնտեսությունը խիստ ինտեգրված էր: Բայց այդ ինտեգրումը հիմնականում վերաբերում էր նախկին միութենական հանրապետությունների, ինչպես նաև սոցիալիստական երկրների հետ տնտեսական կապերին: Ինտեգրացիոն կապերի խզման տարիներին զուգահեռաբար նվազել է նաև արտաքին ապրանքաշրջանառությունը, ինչպես նաև փոխվել է ներմուծման և արտահանման հարաբերակցությունը՝ ավելի շատ ի վնաս արտահանման:

Հայաստանի ձեռնարկությունների մեծ մասը, նախկինում ինքնուրույնաբար արտադրանք չարտահանելով այլ երկրներ, միջազգային մրցակցության ազդեցությունը չէր կրում և պատրաստ չէր մարքեթին-

գային հետազոտություններ կատարելու, արտաքին շուկաներում մրցակցությանը դիմակայելու: Ձեռնարկությունների արտադրանքը ոչ թե ուղղվում էր սպառողական պահանջարկի բավարարմանը, այլ որոշվում էր պետական պլանով: Փաստորեն ապրանքների որակական հատկությունների նկատմամբ սպառողների պահանջները անտեսված էին: Հանրապետության արտահանման ու ներմուծման մեջ խիստ մեծ էր միջհանրապետական առևտրի բաժինը, որն արտադրությունը զերծ էր պահում միջազգային մրցակցությունից: Բավական է նշել, որ 1989թ. միջհանրապետական ներկրումը ընդհանուր ներմուծման մեջ կազմել է 78,4%, իսկ միջհանրապետական արտակրումը ընդհանուր արտահանման մեջ՝ 97,5%: Նշենք, որ արտաքին տնտեսական կապերն ամբողջովին պետական մենաշնորհի էին, և ոչ մի ձեռնարկություն չէր մասնակցում այդ կապերի հաստատմանը և իրականացմանը:

Այժմ արտաքին առևտրի և մասնավորապես արտահանման դերը էականորեն տարբերվում է խորհրդային տարիներից նախևառաջ այն պատճառով, որ իրականացվում է համարժեքային փոխանակությամբ, իսկ դա ավելի է մեծացնում արտաքին առևտրի ազդեցությունը ամբողջական պահանջարկի և ազգային շուկայի հաշվեկշռվածության վրա:

Շուկայական տնտեսությանն անցման գործընթացի խորացմանը գուզընթաց, արտաքին առևտրի քաղաքականությունը ամենից առաջ լուծում է այլ երկրների հետ շահավետ արտաքին տնտեսական գործարքների իրականացման, աշխարհագրական հաշվեկշռվածության խնդիրներ, ինչը կապված է երկրի տնտեսական անվտանգության ապահովման հետ:

Վերոհիշյալ բոլոր գործոններն իրենց ազդեցությունն են թողել ՀՀ արտաքին առևտրի բնույթի և կառուցվածքի, ինչպես նաև զարգացման հեռանկարների վրա:

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի վերջին տարիների վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2002թ.-ին, 1993թ. համեմատ, արտաքին առևտրաշրջանառությունն աճել է 3,6 անգամ, որից արտահանումը՝ 3,2, ներմուծումը՝ 3,8 անգամ: Սակայն պետք է նշել, որ 1992թ., 1990թ. համեմատ, Հայաստանի արտաքին առևտրաշրջանառությունը նվազել է մոտ 16, իսկ արտահանումը՝ մոտ 24 անգամ: Այսինքն, արտաքին առևտրաշրջանառության աճը պայմանավորված է ավելի շատ կորցրածի մասնակի վերականգնմամբ, քան տնտեսական աճով:

Եթե փորձենք վերջին տասնամյակի արտահանման ծավալները համեմատել 1991թ. նույն ցուցանիշի հետ, ապա կարող ենք տեսնել, որ արտահանման անգամ 2002թ. մեծ ծավալը մոտ հինգ անգամ գիջում է 1991թ. ցուցանիշին: Խիստ նվազել են արտահանման ծավալ-

ները ԱՊՀ երկրներ, իսկ այլ երկրներ արտահանումը, ընդհակառակը, ավելացել է:

Չնայած դրան, վերջին տարիներին նկատվում է արտահանման աճ, և զգալի է վերջինիս դրական փոխկապվածությունը ՀՆԱ աճի հետ: Դա վկայում է, որ տնտեսական աճի և արտահանման միջև կապը դառնում է ավելի սերտ, և Հայաստանի տնտեսության հետագա զարգացման համար արտաքին առևտրի զարգացումը, մասնավորապես արտահանման ընդլայնումը, կարող է վճռորոշ նշանակություն ունենալ:

Անհրաժեշտ է միաժամանակ նշել, որ արտահանման խոշոր ծավալներ ունեցող երկրի տնտեսությունը կարող է ընկնել արտաքին շուկաներից կախվածության մեջ: Այդ կախվածությունը կարող է մեծ լինել, եթե երկրի արտահանման աշխարհագրությունը փոքր է: Այդ դեպքում արտաքին շուկաների բացասական երևույթները կարող են մեծ ազդեցություն ունենալ երկրի արտադրության ծավալների, ուրեմն և՛ տնտեսական զարգացման վրա: Հետևապես անհրաժեշտություն է առաջանում ընդլայնել արտահանման աշխարհագրությունը:

Արտահանման աշխարհագրությունն ուսումնասիրելիս պարզվում է, որ 1993-2002թթ. ԱՊՀ երկրների հետ ՀՀ առևտուրը դրսևորել է նվազման միտում. այսպես, արտահանումը ընդհանուրի մեջ 1993թ. 81.0%-ից նվազել է՝ 2002թ. կազմելով 19.4% (այդ երկրներ արտահանման ծավալը 2002թ. կազմել է 98.3 մլն ԱՄՆ դոլար): Հեռավոր արտասահմանյան երկրների հետ արտահանումը ունեցել է աճի միտում. 1993թ. կազմել է 33.8%, իսկ 2002թ.՝ 80.6% (ծավալը՝ 408.9 մլն ԱՄՆ դոլար): Դա մի կողմից նշանակում է, որ Հայաստանը կորցրել է իր ավանդական շուկաների մի մասը (նույն ժամանակահատվածում արտահանումը Ռուսաստան նվազել է՝ ընդհանուրի մեջ կազմելով 12.7%), և պետք է միջոցներ ձեռնարկել դրանք հնարավորինս վերականգնելու համար: Մյուս կողմից, նույն ժամանակաշրջանում արտահանման աճը այնպիսի զարգացած երկրներ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Բելգիան, ցույց է տալիս, որ Հայաստանի արտահանողներն ունակ են մուտք գործել զարգացած երկրների արտաքին շուկաներ:

ԱՊՀ երկրներից ՀՀ հիմնական առևտրական գործընկեր է շարունակում մնալ Ռուսաստանը, չնայած վերջինիս բաժինը հանրապետության ներմուծման և արտահանման մեջ աստիճանաբար նվազում է. եթե 1996թ. Ռուսաստանի բաժինը կազմում էր արտահանման ընդհանուր ծավալի 33%-ը, ապա 2002թ.՝ 13%-ը, ներմուծումը 1997թ. կազմում էր 24%-ը, իսկ 2002թ.՝ 20%-ը: Սակայն մոտակա 2-3 տարիների ընթացքում սպասվում է Ռուսաստանի հետ ապրանքաշրջանառության ծավալների աճ՝ կապված հայ-ռուսական համատեղ ձեռնարկություն-

ների ստեղծման և 2002թ. Մոսկվայում հայկական առևտրացուցահանդեսային կենտրոնի բացման հետ:

ԱՊՀ երկրներից կարևոր գործընկերներ են նաև Ուկրաինան, Վրաստանը, Բելառուսը, Թուրքմենիան և Ղազախստանը:

Հեռավոր արտասահմանյան երկրներից կարելի է առանձնացնել Բելգիան, որի բաժինը Հայաստանի արտահանման մեջ շարունակում է աճել. եթե 1993 թ. այն կազմել է 9,5%, ապա 1996թ.՝ 15%, 1999թ.՝ 36%, 2001թ.՝ 13%, 2002թ.՝ 18%: Հեռավոր արտասահմանյան երկրների արտահանման ծավալների մեջ երկրորդ տեղը զբաղեցնում է Իրանը, որի բաժինը 1993 թ. 3,5% էր, 1996 թ.՝ 14%, 1999 թ.՝ 14,7%, 2002թ.՝ 6,2%: Երրորդ տեղում է ԱՄՆ-ը: Նշված երեք պետությունները մեծ բաժին ունեն նաև ներմուծման ծավալների մեջ: Ներմուծման ծավալներում զգալի են նաև Արաբական Միացյալ Էմիրությունների, Թուրքիայի, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի մասնաբաժինները:

ՀՀ արտահանման կառուցվածքում ամենամեծ բաժինը կազմում են թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերը և թանկարժեք մետաղները (2002թ.՝ 51.1%): Հարկ է նշել, որ թեև թանկարժեք քարերի արժեքը բավականին մեծ է, այնուամենայնիվ Հայաստանում դրանց արտադրության մեջ ավելացված արժեքը փոքր է, իսկ ներմուծվող հումքի արժեքը, ընդհակառակը, խիստ մեծ:

ՀՀ արտահանման մեջ մեծ են նաև պատրաստի սննդի (10,8%), ոչ թանկարժեք մետաղների (8,9%) և հանքահումքային արտադրանքի (8,4%) տեսակարար կշիռները: Որոշակի բաժին ունի նաև մեքենաների, սարքավորումների և մեխանիզմների արտահանումը (4,2%), որը նախկինում Հայաստանի արտահանման ծավալում ունեցել է մեծ բաժին, սակայն վերջին տարիներին դրսևորվում է այդ ապրանքների նվազման միտում: Հատկանշական է, որ հիմնականում արտահանվում են բարոյապես և ֆիզիկապես մաշված մեքենասարքավորումներ:

Ներմուծման մեջ մեծ բաժին են կազմում հանքահումքային արտադրանքը, մեքենաներն ու սարքավորումները, քիմիական արտադրանքը, բուսական և կենդանական ծագման սնունդը, տրանսպորտային միջոցները և թանկարժեք ու ոչ թանկարժեք մետաղները: Վերջին տարիներին նկատվում են ներմուծումը տեղական արտադրանքով փոխարինելու միտումներ: Երկրի սպառման կառուցվածքում ավելանում է տեղական մասնաբերքի, հավկթի, կաթնամթերքի, ծխախոտի, գարեջրի, օդու, գինու, կոնյակի, շամպայնի, հանքային ջրերի, հյութերի, մրգի, բանջարեղենի և հրուշակեղենի բաժինը: Իսկ որոշ տեսակի սննդամթերքի արտադրության կազմակերպումը հանրապետությունում կամ հնարավոր չէ, կամ էլ տնտեսապես նպատակահարմար չէ, օրինակ՝ բրինձը, սուրճը, կակաոն, ալյուրը, շաքարավազը, ձկան պահածոները և այլն: Բնականաբար դրանց ներմուծումը չի կարող նվազել:

Թեև ներմուծման աճի տեմպերը ցածր են արտահանման աճի տեմպերից, այնուամենայնիվ արտաքին առևտրի հաշվեկշռի բացասական մնացորդը դեռևս ունի խիստ մեծ չափեր (առևտրային հաշվեկշռի պակասուրդը 1993-2001թթ. ընթացքում ավելացել է մոտ 6 անգամ՝ կազմելով 535.5 մլն դոլար) և նվազում է դանդաղ տեմպերով:

Հատկանշական է, որ ապրանքների ներմուծման զգալի գերազանցումը արտահանմանը պայմանավորում է նաև ծառայությունների հաշվի պակասուրդը, քանի որ վերջինիս կառուցվածքում մեծ բաժին են կազմում ապրանքային հոսքերի հետ ուղղակիորեն կապված բեռնափոխադրումները և դրանց ապահովագրությունը:

2.1. Վճարային հաշվեկշռի էությունը և կազմման սկզբունքները

Երկրի բազմաբնույթ արտաքին տնտեսական գործառնություններն իրենց արտացոլումն են գտնում մի հաշվեկշռային հաշվարկում, որն ընդունված է ամվանել վճարային հաշվեկշիռ: Արժույթի միջազգային հիմնադրամի մեթոդաբանական ցուցումներում վճարային հաշվեկշիռը բնորոշվում է որպես հաշվետու երկրի ռեզիդենտների և մնացյալ աշխարհի ռեզիդենտների միջև տվյալ ժամանակահատվածում իրականացված բոլոր արտաքին տնտեսական գործառնությունների գումարային արդյունքների վիճակագրական հաշվետվություն: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական հրապարակումներում նշվում է. «Վճարային հաշվեկշիռն իրենից ներկայացնում է վիճակագրական հաշվետվություն, որում համակարգված տեսքով արտացոլվում են ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակաշրջանում (եռամսյակ, տարի) այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ»:

Վճարային հաշվեկշիռը կազմված է երկու հիմնական բաժիններից՝ ընթացիկ գործառնությունների հաշիվ կամ ընթացիկ հաշիվ և կապիտալի ու ֆինանսական հաշիվ:

Տվյալ երկրի արտաքին առևտրի հաշվեկշռի (ընթացիկ գործառնությունների հաշիվ) և կապիտալի շարժի հաշվեկշռի (կապիտալի և ֆինանսական հաշիվ) կապը բացահայտելու համար օգտվենք ազգային հաշիվների նույնության հավասարումից.

$$Y=C+I+G+NX$$

Եթե այս հավասարումը գրենք $Y-C-G=I+NX$ տեսքով, ապա պարզ կդառնա, որ երկրի ֆինանսական միջոցները կապվում են ապրանքների և ծառայությունների արտաքին առևտրի մնացորդի հետ: Այսպես, վերջին հավասարման ձախ մասը ցույց է տալիս երկրի ազգային խնայողությունը, որը պետական և մասնավոր խնայողությունների գումարն է: Պետական խնայողությունը կազմում է $T-G$, իսկ մասնավոր խնայողությունը՝ $Y-C-T$, իսկ այդ երկուսի գումարը կազմում է.

$$Y - C - G,$$

որը նշանակելով S -ով, $Y-C-G=I+NX$ հավասարումը կարող ենք գրել. $S = I + NX$ տեսքով, կամ $S - I = NX$:

Վերջին հավասարումը արտահայտում է կապիտալի շարժի մնացորդի և արտաքին առևտրի մնացորդի հավասարությունը: Այն հաճախ անվանում ենք նաև վճարային հաշվեկշռի հավասարում՝ նկատի

ունենալով, որ հավասարման ձախ մասը արտահայտում է կապիտալի և ֆինանսական հաշվի, իսկ աջ մասը՝ ընթացիկ հաշվի մնացորդը (այստեղ ընթացիկ հաշիվը հավասարեցված է զուտ արտահանմանը): Եթե կապիտալն ավելի շատ է հոսում երկիր, քան դուրս է հոսում երկրից, ապա երկրի խնայողության ծավալը փոքր է ներդրումների ծավալից, և կապիտալի հաշվի մնացորդը դրական է, այսինքն՝ $(I-S)>0$: Դա նշանակում է, որ ընթացիկ հաշիվը բացասական մնացորդ ունի և $NX<0$:

Եթե երկրի խնայողություններն ավելի մեծ են, քան կատարվող ներդրումները, ապա կապիտալը դուրս է հոսում երկրից: Այդ դեպքում կարելի է գրել, որ.

$$S=I+NFI,$$

որտեղ՝ NFI-ն օտարերկրյա զուտ ներդրումների մնացորդն է, այսինքն՝ մեր երկրի գործակալներն ավելի շատ ներդրումներ են կատարում այլ երկրներում, քան օտարերկրյա գործակալները մեր երկրում: Հետևաբար, կարելի է համոզվել նաև այն բանում, որ օտարերկրյա զուտ ներդրումների ծավալը հավասար է ընթացիկ հաշվի մնացորդին, քանի որ, եթե.

$$S=I+NX \text{ և } S=I+NFI$$

ապա՝


$$NFI=NX$$

Այս հավասարումը ցույց է տալիս, որ կապիտալի հաշվի և ընթացիկ հաշվի մնացորդներն արտահայտում են միևնույն մակրոտնտեսական երևույթի երկու կողմերը: Այսինքն, եթե ընթացիկ հաշվի մնացորդը բացասական է, ապա երկրի ազգային հարստության մի մասն անցնում է այլ երկրների գործակալներին, կամ երկիրը դառնում է պարտապան այլ երկրներին ու միջազգային կազմակերպություններին:

Հետևաբար, բաց տնտեսություն ունեցող երկիրը այլ երկրների հետ փոխհարաբերություններ է ստեղծում ոչ միայն ապրանքների ու ծառայությունների, այլև կապիտալի որոշակի հոսքերի տեսքով, որոնք էական ազդեցություն են գործում երկրի տնտեսական զարգացման վրա:

Ինչպես գիտենք, դրամի փոխարժեքի իջեցումը խթանում, իսկ բարձրացումը կաշկանդում է ապրանքների արտահանումը: Հակադարձ երևույթը նկատվում է ներմուծման համար, հետևաբար կարող ենք գրել, որ զուտ արտահանումը կախված է արժույթի իրական փոխարժեքից, այսինքն՝

$$NX=NX(E)$$



Եթե նկատի ունենանք, որ իրական փոխարժեքի բարձրացման դեպքում զուտ արտահանումը կրճատվում է, իսկ իջնելու դեպքում՝ ավելանում, ապա Օ կետից ծախս զուտ արտահանման ծավալը բացասական է, իսկ Օ-ից դեպի աջ՝ դրական:

Գծանկար 2. Զուտ արտահանման կախվածությունը արժույթի իրական փոխարժեքից


Արժույթի իրական փոխարժեքի վրա ազդում են երկու հիմնական գործոններ.

Նախ, այն փոփոխվում է վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի մնացորդի ազդեցությամբ: Որքան երկիրը ավելի շատ արտահանում է, քան ներմուծում, այնքան արտարժույթի առաջարկը մեծանում է, իսկ երկրի արժույթի իրական փոխարժեքը՝ բարձրանում: Դրա հետևանքով մեր ապրանքները դառնում են ավելի թանկ արտասահմանցիների համար, և զուտ արտահանումը կրճատվում է:

Երկրորդ գործոնը հանդես է գալիս կապիտալի շարժի մնացորդի ազդեցությամբ: Եթե վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի մնացորդները պետք է հավասարվեն, և մենք գիտենք, որ կապիտալի հաշվի մնացորդը խնայողության և ներդրումների տարբերությունն է, ապա պետք է դիտարկել նաև այն հանգամանքը, որ խնայողությունը որոշվում է սպառման ֆունկցիայով և հարկաբյուջետային քաղաքականությամբ, իսկ ներդրումները, համաշխարհային ֆինանսական շուկայի տոկոսադրույքից կախված՝ ներդրումների ֆունկցիայով: Այդ երկու խումբ գործոնների ազդեցությամբ ձևավորվում է արժույթի իրական փոխարժեքի մակարդակը (տես՝ գծն. 3):

Գծանկար 3-ը արտացոլում է արտարժույթի պահանջարկի և առաջարկի հավասարակշռվածության մեխանիզմը: Խնայողության և ներդրումների տարբերությունը դրամի այն քանակությունն է, որն անհրաժեշտ է արտարժույթով փոխանակելու և այլ երկրներից ապրանքներ գնելու համար: Քանի որ ՀՀ-ում այդ տարբերությունը բացասական է, նշանակում է՝ անհրաժեշտ է համաշխարհային ֆինանսական շուկայից կամ այլ աղբյուրներից այնքան արտարժույթ պարտք վերցնել,

որ հնարավոր լինի չեզոքացնել արտաքին առևտրի հաշվեկշռի բացասական մնացորդը:



Ուղղահայաց գիծը պատկերում է խնայողության և ներդրումների տարբերությունը, իսկ թեք, ներքև իջած գիծը զուտ արտահանման ֆունկցիան՝ կախված արժույթի փոխարժեքից: Դրանց հատման կետը ցույց է տալիս այն հավասարակշիռ փոխարժեքը (E^), որն ապահովում է կապիտալի շարժի այնպիսի մնացորդ, որն անհրաժեշտ է ընթացիկ հաշվի մնացորդը ծածկելու համար:*

Գծանկար 3. Արժույթի իրական փոխարժեքը որոշող գործոնները

Գծանկար 3-ը ցույց է տալիս նաև, որ որոշակի քաղաքականությամբ ազդելով արժույթի իրական փոխարժեքի վրա՝ կարող ենք ազդել նաև վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի մնացորդների վրա:

Բաց տնտեսության մակրոտնտեսական ցուցանիշների միջև կապերը ավելի լավ պատկերացնելու համար ներկայացնենք դրա մյուս հիմնական նույնությունները:

Բաց տնտեսությունում համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) փակ տնտեսության համանուն ցուցանիշից տարբերվում է ներմուծման ու արտահանման հոսքերի միջոցով:

$$GDP = C + I + G + X - M$$

որտեղ՝

GDP -ն ՀՆԱ-ն է,

M -ը՝ ապրանքների ու ոչ գործոնային ծառայությունների ներմուծումը,

X -ը՝ ապրանքների ու ոչ գործոնային ծառայությունների արտահանումը,

C -ն՝ ներքին սպառումը, I -ն՝ ներքին ներդրումները, G -ն՝ պետական գնումները:

Սակայն, բացի ապրանքների ու ծառայությունների ներմուծումից ու արտահանումից, բաց տնտեսությունում առկա են նաև եկամուտների հոսքեր ու տրանսֆերտներ: Վերջիններիս հաշվառման նպատակով էլ Ազգային հաշիվների համակարգում ներառված են համախառն

ազգային եկամտի և տնօրինվող համախառն ազգային եկամտի ցուցանիշները:

Համախառն ազգային եկամուտը (ՀԱԵ) հավասար է ՀՆԱ-ին՝ հանած ոչ ռեզիդենտներին վճարված և գումարած ոչ ռեզիդենտներից ստացված գործոնային եկամուտները.

$$GNI = GDP + Y_f$$

որտեղ՝

Y_f -ը զուտ գործոնային եկամուտն է: Ի տարբերություն ՀՆԱ-ի, որը և՛ եկամտի, և՛ արտադրության ցուցանիշ է, ՀԱԵ-ն միայն եկամտի ցուցանիշ է:

Տնօրինվող համախառն ազգային եկամուտը հավասար է ՀԱԵ-ի և արտասահմանից ստացված զուտ տրանսֆերտների գումարին.

$$GNDI = GNI + TR$$

Վճարային հաշվեկշռի և ազգային հաշիվների միջև փոխկապվածությունը արտահայտվում է ընթացիկ հաշվի (CAB) և համախառն ազգային տնօրինվող եկամտի ($GNDI$) միջև առկա վիճակագրական կապով:

Քանի որ $GNDI = C + I + G + (X - M + Y_f + TR)$, ապա.

$$GNDI - C - I - G = CAB$$

Այս հավասարումը ցույց է տալիս, որ երբ երկիրը սպառում է ավելին, քան իր տնօրինվող եկամուտն է, ապա ձևավորվում է ընթացիկ հաշվի պակասուրդ: Հետևաբար, ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատման համար երկիրը պետք է կամ մեծացնի իր տնօրինվող եկամուտը, կամ կրճատի սպառումը:

Վճարային հաշվեկշռի և ազգային հաշիվների միջև կապի արտացոլման երկրորդ տարբերակը ներհուսք - արտահուսք համադրումն է: Եթե համախառն ազգային եկամտից հանենք հարկերը, ապա կստացվի փաստացի տնօրինվող համախառն ազգային եկամուտը:

$$GNADI = C + I + G + (X - M + Y_f + TR) - T$$

$$GNADI - C = I + CAB + (G - T)$$

Քանի որ փաստացի տնօրինվող համախառն ազգային եկամտի և սպառման տարբերությունը կազմում է մասնավոր խնայողությունը (S), ապա.

$$CAB = (S - I) + (T - G)$$

Այսինքն՝ ընթացիկ հաշվի պակասուրդը հավասար է մասնավոր հատվածի զուտ խնայողությունների և պետական բյուջեի հավելուրդի գումարին:

Վճարային հաշվեկշռը կազմելիս օգտագործում ենք որոշակի սկզբունքներ և հասկացություններ:

Վճարային հաշվեկշռում գործարքները գրանցելիս տարբերում ենք երկրի *ռեզիդենտ /գործակալ/* և *ոչ ռեզիդենտ* հասկացությունները:

վճարային հաշվեկշռի մեթոդաբանությամբ՝ տնտեսավարող սուբյեկտը համարվում է այն երկրի ռեզիդենտ, որում գտնվում է իր տնտեսական շահերի կենտրոնը՝ անկախ քաղաքացիությունից: Մասնավորապես.

- *Անհատը կամ տնային տնտեսությունը* համարվում է այն երկրի ռեզիդենտ, որտեղ բնակվում է առնվազն 12 ամիս (ՀՀ օրենսդրությամբ՝ առնվազն 183 օր): Ոչ ռեզիդենտ են համարվում այցելուները (զբոսաշրջիկներ, նավերի ու օդանավերի անձնակազմ, սեզոնային աշխատողներ), հարևան երկրում բնակվող ու սահմանամերձ տարածքում աշխատողները, ինչպես նաև դիվանագետները ու այլ երկրների զինված ուժերի ներկայացուցիչները՝ անկախ տվյալ երկրում գտնվելու տևողությունից:

- *Ձեռնարկությունը* համարվում է այն երկրի ռեզիդենտ, որում իրականացնում է ապրանքների ու ծառայությունների արտադրություն և՛ կամ տնօրինում է հող կամ շինություններ: Ձեռնարկությունը պետք է այդ երկրում ունենա առնվազն մեկ արտադրական հաստատություն, որը նախատեսում է շահագործել անորոշ կամ երկար ժամանակով: Բազմազգային ընկերությունների մասնաձյուղերը համարվում են հյուրընկալ երկրի ռեզիդենտ:

- *Պետական հաստատությունները*՝ ներառյալ կենտրոնական և տեղական կառավարման մարմինները, այդ թվում՝ արտասահմանում գտնվող դեսպանատները, ներկայացուցչությունները և զինված ուժերը համարվում են համապատասխան երկրի ռեզիդենտ:

վճարային հաշվեկշռում ապրանքների արտահանման և ներմուծման համադրելիությունն ապահովելու նպատակով դրանք հաշվարկվում են FOB¹ գներով, որոնք չեն ներառում ապրանքի տրանսպորտային փոխադրման և ապահովագրման արժեքները: Վերջիններս ներառվում են «Ծառայություններ» հոդվածում: Գործարքները գրանցվում են տվյալ երկրի ազգային արժույթով կամ, ինչպես սովորաբար կատարվում է, ԱՄՆ դոլարով՝ ազգային արժույթի և դոլարի փոխարժեքի հիման վրա:

Գործարքը կարող է վճարային հաշվեկշռում գրանցվել, երբ առևտրային պայմանագիրը կնքվում է կամ երբ ավարտվում է ապրանքների բեռնաթափումը և իրականացվում են մաքսային բոլոր ձևակերպումները:

վճարային հաշվեկշռի կազմման հիմքում *կրկնակի գրանցման* վիճակագրական սկզբունքն է, ըստ որի՝ յուրաքանչյուր գործարք գրանցվում է երկու, բացարձակ արժեքով հավասար, բայց հակառակ նշանով գրառումներով: Կրկնակի հաշվառման շնորհիվ բոլոր դեբե-

¹ FOB (Free On Board) - արտահանողը (վաճառողը) պարտավոր է իր հաշվին առաքել ապրանքը պայմանագրում նշված նավահանգիստ, իրականացնել մաքսային ձևակերպումները և ապրանքի բեռնումը գնորդի կողմից վարձված նավի վրա:

տային գրառումների գումարը բացարձակ արժեքով պետք է հավասար լինի բոլոր կրեդիտային գրառումների գումարին, իսկ դրանց հանրագումարը պետք է հավասար լինի գրոյի: Այդ տեսանկյունից վճարային հաշվեկշիռը միշտ հավասարակշռված է:

Աղյուսակ 5

Դեբետային և կրեդիտային գործարքները վճարային հաշվեկշռում

Գործարքի տեսակը	Գործարքների գրառումները	Գրանցման նշանը
Ապրանքների ու ծառայությունների արտահանում	Կրեդիտ	+
Ապրանքների ու ծառայությունների ներմուծում	Դեբետ	-
Արտաքին ֆինանսական պարտավորությունների ավելացում	Կրեդիտ	+
Արտաքին ֆինանսական պարտավորությունների կրճատում	Դեբետ	-
Արտաքին ֆինանսական ակտիվների կրճատում	Կրեդիտ	+
Արտաքին ֆինանսական ակտիվների ավելացում	Դեբետ	-

Վճարային հաշվեկշռում առանձնացվում են երկու բնույթի գործարքներ՝ իրական և ֆինանսական հոսքեր: Իրական հոսքերը ներառում են ինչպես ապրանքների ու ծառայությունների արտահանումը և ներմուծումը, այնպես էլ ուղևորությունները, բեռնափոխադրումները, ապահովագրությունը և այլն: Ֆինանսական հոսք են ակտիվների ու պարտավորությունների փոփոխությունները, ինչպես, օրինակ, վարկի մայր գումարի մարումը, օտարերկրյա ներդրումների ներգրավումը: Իրական գործարքները գրանցվում են ընթացիկ հաշվում, իսկ ֆինանսական գործարքները՝ կապիտալի ու ֆինանսական հաշվում:

Վճարային հաշվեկշռում ներառվում են նաև *տրանսֆերտները*, որոնք համարժեք ֆինանսական փոխհատուցում չեն ենթադրում: Նմանօրինակ գործարքները գրանցվում են «Ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածում՝ պահպանելով կրկնակի հաշվառման սկզբունքը: Այսպես, օրինակ, երբ Չինաստանի կառավարությունը Հայաստանին նվիրում է հացահատիկ, ապա այն ՀՀ վճարային հաշվեկշռում գրանցվում է իբրև ներմուծում (դեբետ), որի դիմաց «վճարվել է» տրանսֆերտով (կրեդիտ):

Տեսականորեն վճարային հաշվեկշիռը պետք է միշտ հավասարակշռված լինի, այնուամենայնիվ, գործնականում դա տեղի չի ունենում, քանի որ գործարքների վերաբերյալ տվյալները հավաքվում են տարբեր աղբյուրներից, շատ գործարքներ մաքսային մարմիններից թաքց-

վում են, որոշ գործարքներ թերհաշվառվում են և այլն: Այդ պատճառով վճարային հաշվեկշռում նախատեսված է «*զուտ սխալներ և բացթողումներ*» հոդվածը: Ընդ որում, քանի որ սխալներն ու բացթողումները կարող են հակակշռել միմյանց, ապա սույն հոդվածի մեծությու-
նը չի կարող վճարային հաշվեկշռի կազմման ճշգրտության հիմնավոր չափանիշ հանդիսանալ:

Վճարային հաշվեկշիռը կազմվում է տնտեսական *հոսքերից*, որոշակի ժամանակահատվածի համար: Դրա փոխարեն երկրի միջազգային ներդրումային դիրքը հաշվարկվում է իբրև *պաշար*՝ ժամանակի որոշակի պահի համար: Միջազգային ներդրումային դիրքը (ՄՆԴ) իրենից ներկայացնում է վիճակագրական հաշվետվություն, որտեղ արտացոլվում է երկրի ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարների մակարդակը որևէ ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ: Միաժամանակ, հաշվետվությունում, ի տարբերություն վճարային հաշվեկշռի, արտացոլվում են այն բոլոր փոփոխությունները, որոնք կատարվել են ուսումնասիրվող ժամանակահատվածում ֆինանսական գործառնությունների, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների արդյունքում: Վերջինս արտահայտում է այլ երկրներին ներկայացվող կուտակային պահանջները և դրանց նկատմամբ ստանձնած կուտակային պարտավորությունները: ՄՆԴ-ն կազմված է երկու մասից՝ ակտիվներից (ուղղակի ներդրումներ արտերկրներ, պորտֆելային ներդրումներ, այլ ներդրումներ, պահուստային ակտիվներ) և պարտավորություններից (ուղղակի ներդրումներ արտերկրներից, պորտֆելային ներդրումներ, այլ ներդրումներ): Ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների տարբերությունը ցույց է տալիս տնտեսության զուտ միջազգային ներդրումային դիրքը: Բնականաբար վճարային հաշվեկշռի գործառնություններն իրենց ազդեցությունն են ունենում ՄՆԴ-ում արտացոլված պաշարների վրա:

Վճարային հաշվեկշռի առանձին մասերը մշակվում են որոշակի սկզբունքներով:

2.2. Ընթացիկ գործառնությունների հաշվի մշակման սկզբունքները

Վճարային հաշվեկշռի ընթացիկ գործառնությունների կամ կարճ ընթացիկ հաշվում ներառվում են. ա) ապրանքների, բ) ծառայությունների, գ) եկամուտների, դ) ընթացիկ տրանսֆերտների հաշիվները: Ընթացիկ հաշվում հաշիվները հաշվարկվում են *ընդամենը* դեբետ կամ կրեդիտ սկզբունքով:

Ընթացիկ հաշվի այդ 4 հիմնական մասերը ներկայացնենք իրենց հոդվածներով.

ա. Ապրանքներ, այդ թվում՝

➤ Ընդհանուր ապրանքներ - տեղափոխման ենթակա բոլոր ապրանքները, որոնք ռեզիդենտները արտահանում կամ ներմուծում են ոչ ռեզիդենտներից, և որոնց նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է:

➤ Ապրանքներ վերամշակման համար - արտասահմանում (հաշվետու երկրում) վերամշակման և հետագա վերաներմուծման (վերաարտահանման) նպատակով արտահանվող (ներմուծվող) ապրանքներ, որոնց արժեքը որոշվում է «Ընդամենը» սկզբունքով՝ վերամշակումից առաջ և հետո:

➤ Ապրանքներ վերանորոգման համար - նավերի, օդանավերի և այլնի վրա ոչ ռեզիդենտների համար կամ նրանց կողմից ապրանքների վերանորոգում: Ի տարբերություն վերամշակման, արժեքը որոշվում է վերանորոգման նպատակով կատարված կամ ստացված վնարումներով և ոչ թե «Ընդամենը» սկզբունքով՝ վերանորոգումից առաջ և հետո:

➤ Ապրանքներ, որոնք ձեռք են բերվել տրանսպորտային կայաններում - ռեզիդենտ (ոչ ռեզիդենտ) փոխադրողներին (նավ, օդանավ և այլն) արտասահմանում (հաշվետու երկրում) մատակարարված ապրանքներ (վառելիք, սննդամթերք և այլն):

➤ Ոչ մոնետար ոսկի - իբրև պահուստ չօգտագործվող ոսկու արտահանումը և ներմուծումը:

բ. Ծառայություններ, այդ թվում՝

➤ Տրանսպորտային ծառայությունների՝ ռեզիդենտ (ոչ ռեզիդենտ) տրանսպորտային ընկերության կողմից բեռների և ուղևորների տեղափոխման ծառայությունների մատուցում ոչ ռեզիդենտին (ռեզիդենտին) տրանսպորտի բոլոր տեսակներով՝ ծովային, երկաթուղային, օդային, խողովակաշարային և այլն, ինչպես նաև օժանդակ ծառայությունների մատուցում՝ տրանսպորտային միջոցների վարձակալում անձնակազմով, բեռների պահպանում, փաթեթավորում, տրանսպորտային միջոցների ուղեկցում և հավաքում:

➤ Ճանապարհորդություն - ոչ ռեզիդենտ ճանապարհորդի կողմից գործարար կամ անձնական նպատակով այցելության (մեկ տարուց պակաս) ընթացքում հաշվետու երկրում ձեռք բերված ապրանքներ ու ծառայություններ՝ ներառյալ առողջական և կրթական նպատակներով: «Ճանապարհորդությունը» չի ներառում միջազգային ուղևորներին մատուցվող տրանսպորտային ծառայությունը, քանի որ այն ներառվում է «Տրանսպորտային ծառայություններ» հոդվածում:

Առողջության և կրթության հետ կապված դեպքերում անձը համարվում է ճանապարհորդ՝ անկախ տվյալ երկրում գտնվելու ժամանակից:

➤ Կապի ծառայություններ - փոստային, սուրհանդակային և տե-սահաղորդակցական (ձայնի, պատկերի և այլ տեղեկատվության փո-խանցում) ծառայություններ ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև:

➤ Շինարարական ծառայություններ - շինարարական կամ տե-ղակայման ծառայություններ, որոնք իրականացվում են արտասահ-մանում (հաշվետու երկրում) ռեզիդենտ (ոչ ռեզիդենտ) ձեռնարկու-թյան կողմից:

➤ Ապահովագրական ծառայություններ - ոչ ռեզիդենտին ռեզի-դենտ ապահովագրական ընկերության կողմից (և հակառակը) տրամադրատային, կյանքի և այլ ապահովագրական ծառայություննե-րի մատուցում:

➤ Ֆինանսական ծառայություններ - ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև ֆինանսական միջնորդության ծառայություններ՝ կապված ալ-րեդիտիվի բացման, արտարժույթի փոխանակման, ֆինանսական լի-զինգի, վարկերի տրամադրման և բրոկերային ծառայությունների մա-տուցման հետ:

➤ Համակարգչային կամ տեղեկատվական ծառայություններ - ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև մասնագիտական համակարգչային ծառայությունների (խորհրդատվություն, ծրագրային ապահովման մշակում), տվյալների մշակման և ցանցային ծառայությունների ու էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների (տվյալների տրա-մադրում ֆինանսական կառավարման, հետազոտությունների, մարքե-թինգի, գնումների նպատակով, ինչպես նաև էլեկտրոնային առևտուր ու ինտերնետային տեղեկատվական ծառայություններ) մատուցում:

➤ Արտոնագրային վճարներ և հեղինակային հոնորարներ - ռե-զիդենտների և ոչ ռեզիդենտների միջև կատարված (ներմուծում) և ստացված (արտահանում) վճարումներ. ա) ոչ շոշափելի, չարտա-դրված, ոչ ֆինանսական ակտիվների և հեղինակային իրավունքների արտոնագրված օգտագործման և բ) արտադրված բնօրինակների կամ կրկնօրինակների պայմանագրային սկզբունքով օգտագործման հա-մար:

➤ Այլ գործնական ծառայություններ - ռեզիդենտի կողմից ոչ ռե-զիդենտին (և հակառակը) գործառնական լիզինգի, ինչպես նաև այլ գործնական, մասնագիտական, տեխնիկական ծառայությունների մա-տուցում (իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, հար-կային խորհրդատվություն, կառավարման խորհրդատվություն, հասա-րակության հետ հարաբերություններ, գովազդ, շուկայի ուսումնասի-րում, հասարակական կարծիքի հետազոտում, գիտատեխնիկական հետազոտություններ, ճարտարապետական, ինժեներական ու այլ

տեխնիկական ծառայություններ, հանքարդյունաբերության և արտադրանքի վերամշակման ծառայություններ, թափոնների մշակում և մաքրում):

➤ Անձնական, մշակույթի և հանգստի ծառայություններ - ռեզիդենտի կողմից ոչ ռեզիդենտին (և հակառակը) ռադիո- և հեռուստատեսային ծառայությունների (ֆիլմերի, ռադիո- և հեռուստատեսային հաղորդումների, ծայնագրությունների հետ կապված ծառայություններ, օրինակ, դերասանների կամ պրոդյուսերների կողմից օգտագործման իրավունքի վաճառքից ստացված վճարները) և այլ անձնական, մշակութային ու հանգստի ծառայությունների (ինչպես, օրինակ, կապված գրադարանների, թանգարանների հետ) մատուցում:

➤ Պետական ծառայություններ - ներառում է պետական ոլորտի հետ կապված բոլոր ծառայությունները (որոնք ներառված չեն այլ հոդվածներում), ինչպես օրինակ, դեսպանատների և հյուպատոսությունների, ռազմական միավորումների, ներկայացուցչությունների հետ կապված ծառայությունները:

Նշենք, որ ընթացիկ հաշվի մեջ ապրանքների և ծառայությունների արտահանումը և ներմուծումը ներկայացնում են երկրի առևտրային հաշվեկշիռը, որը հաճախ օգտագործվում է երկրի տնտեսական զարգացման և մյուս երկրների նկատմամբ նրա տնտեսական ինքնուրույնության աստիճանը բնութագրելիս:

գ. Եկամուտներ, որոնք դասակարգվում են երկու հիմնական խմբի՝ աշխատողների վարձատրություն և եկամուտներ ներդրումներից:

➤ Աշխատողների վարձատրությունը ներառում է սահմանային, սեզոնային և այլ ոչ ռեզիդենտ աշխատողներին վճարված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները՝ կատարված կանխիկ կամ բնեղեն ձևով:

➤ Ներդրումներից եկամուտները ներառում են ռեզիդենտի կողմից արտաքին ֆինանսական ակտիվների տնօրինման դիմաց ստացված եկամուտները և ոչ ռեզիդենտի նկատմամբ ռեզիդենտի ունեցած պարտավորությունների դիմաց վճարված եկամուտները: Ներդրումներից եկամուտները ստորաբաժանվում են ուղղակի ներդրումներից, պորտֆելային ներդրումներից և այլ ներդրումներից եկամուտների:

➤ Ուղղակի ներդրումներից եկամուտները բաժանվում են կապիտալի մասնակցությունից եկամուտների (շահաբաժին, մասնաճյուղի եկամուտ, վերաներդրված եկամուտ) և պարտքի հանձնառության եկամուտների (միջֆիրմային պարտքի տոկոսավճարներ), որոնք ձևավորվում են ուղղակի ներդրողին սեփականության իրավունքով այլ երկրի ձեռնարկությունում պատկանող ուղղակի ներդրումային կապիտալից:

➤ Պորտֆելային ներդրումներից եկամուտները ներառում են ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև եկամուտների հետ կապված գոր-

ծառքները և ձևավորվում են բաժնետոմսերի, պարտատոմսերի ու պարտամուրհակների և ֆինանսական այլ տեսակի արժեթղթերի տնօրինումից: Բաժանվում են կապիտալի մասնակցությունից եկամուտների և պարտքի հանձնառության եկամուտների:

➤ Այլ ներդրումներից եկամուտները ներառում են ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև բոլոր մնացյալ պարտավորությունների ու պահանջների հետ կապված տոկոսավճարները, որոնք վերաբերում են երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերին, ավանդներին, այլ առևտրային ու ֆինանսական պահանջներին:

դ. Ընթացիկ տրանսֆերտներ

Ընթացիկ տրանսֆերտները ներառում են պետական կառավարման մարմինների միջպետական նվիրատվությունները, տեխնիկական, մարդասիրական, ֆինանսական օգնությունը և աշխատողների դրամական փոխանցումները, այդ թվում՝ սփյուռքից ստացվող տրանսֆերտները:

Արտասահմանում աշխատող էմիգրանտի փոխանցումները համարվում են տրանսֆերտ միայն այն դեպքում, երբ էմիգրանտը դարձել է այն երկրի ռեզիդենտ, որտեղ աշխատում է: Հակառակ դեպքում, եթե էմիգրանտը շարունակում է մնալ ծագման երկրի ռեզիդենտ, ապա նրա փոխանցումները գրանցվում են «Գործոնային եկամուտներ» հոդվածում:

2.3. Կապիտալի և ֆինանսական հաշվի մշակման սկզբունքները

Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվում ընդգրկված ապրանքների և ծառայությունների միջազգային հոսքերը պետք է որևէ ճանապարհով ֆինանսավորվեն: Այդ ֆինանսավորումը ցույց է տրվում կապիտալի և ֆինանսական հաշվում, որն իր հերթին ստորաբաժանվում է երկու հաշիվների՝ *կապիտալի հաշիվ* և *ֆինանսական հաշիվ*: Կապիտալի հաշիվը ներառում է կապիտալ տրանսֆերտների վճարման և ստացման ու չարտադրված, ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերման և տրամադրման հետ կապված գործարքները: Ֆինանսական հաշիվը ընդգրկում է արտաքին ֆինանսական ակտիվների և պարտավորությունների նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխման հետ կապված գործարքները: Կապիտալի և ֆինանսական հաշվում հաշիվների զգալի մասը հաշվարկվում է *զուտ* սկզբունքով, այսինքն՝ միայն դեբետ կամ կրեդիտ:

Կապիտալի հաշվում ոչ դրամական ձևով իրականացվող տրանսֆերտները որակվում են իբրև կապիտալ տրանսֆերտ այն դեպքում,

երբ տեղի է ունենում [1] հաստատագրված ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխություն, [2] պարտատուի կողմից պարտքի ներում: Դրամական ձևով իրականացման դեպքում տրանսֆերտը որակվում է կապիտալ տրանսֆերտ, երբ կապված է հաստատագրված ակտիվի ձեռքբերման կամ տրամադրման հետ, ինչպես, օրինակ, ներդրումային դրամաշնորհների դեպքում: Այսինքն՝ կապիտալ տրանսֆերտը անպայման պետք է հանգեցնի գործարքի մասնակից կողմերից առնվազն մեկի ակտիվների պաշարի փոփոխությանը:

Ըստ տնտեսության հատվածների՝ պետական հատվածին առնչվող կապիտալ տրանսֆերտներ են (ա) արտաքին պարտքի ներումը, (բ) ներդրումային դրամաշնորհների տրամադրումը, (գ) ռազմական հեճակայանների փոխանցումը և այլն:

Մասնավոր հատվածին առնչվող կապիտալ տրանսֆերտներ են էմիգրանտների տրանսֆերտները, երբ էմիգրացիայի արդյունքում տեղի է ունենում ապրանքների հոսք կամ ֆինանսական ակտիվների սեփականատիրոջ ռեզիդենտության փոփոխում: Վերջին դեպքում հաշվետու երկրի այն ձեռնարկությունները, որոնց բաժնեմասը տնօրինում են այդ երկրից հեռացած էմիգրանտները, դառնում են մյուս երկրի արտաքին ֆինանսական ակտիվներ: Նման փոփոխություն տեղի է ունենում նաև էմիգրանտների պարտավորությունների դեպքում:

Չարտադրված, ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերումը կամ տրամադրումը կապված է [1] շոշափելի ակտիվների հետ, որոնք կարող են օգտագործվել կամ անհրաժեշտ են ապրանքների ու ծառայությունների արտադրման համար, սակայն փաստացի չեն արտադրվել, որպիսիք են հողը և հումքային ռեսուրսները, ինչպես նաև [2] չարտադրված, ոչ շոշափելի ակտիվների հետ, որպիսիք են արտոնագրի, հեղինակային իրավունքի, առևտրային նիշի, ֆրանչայզի, լիցենզիայի գնումը: Չարտադրված, ոչ շոշափելի ակտիվների դեպքում անհրաժեշտ է տարբերակել այդ ակտիվների օգտագործման իրավունքի գնումը դրանց նկատմամբ սեփականության իրավունքի գնումից: Օգտագործման իրավունքի դեպքում դրանք գրանցվում են ծառայությունների հաշվում և միայն սեփականության իրավունքի գնման դեպքում՝ կապիտալի հաշվում:

Ֆինանսական հաշվում արտացոլվող գործարքների դասակարգման հիմքը ֆունկցիոնալ կատեգորիաներն են, որոնցից են՝ ա) ուղղակի ներդրումները, բ) պորտֆելային ներդրումները, գ) այլ ներդրումները, դ) պահուստային ակտիվները:

➤ *Ուղղակի ներդրումները* միջազգային ներդրումների այնպիսի կատեգորիա են, որոնց դեպքում մեկ տնտեսության կառուցվածքային միավորը նպատակ է հետապնդում ձեռք բերել երկարաժամկետ շահ մեկ այլ տնտեսության կառուցվածքային միավորում: Երկարատև

շահը ենթադրում է ուղղակի ներդրողի ու ուղղակի ներդրման օբյեկտ հանդիսացող ձեռնարկության միջև երկարաժամկետ հարաբերությունների առկայություն և ներդրողի կողմից ձեռնարկության կառավարման վրա նշանակալի ազդեցություն: Որպես ուղղակի ներդրում որակվելու ձևական չափանիշ վճարային հաշվեկշռում կիրառվում է ձեռնարկության առնվազն 10% բաժնետոմսերը (կամ դրա համարժեքը) տնօրինելու հանգամանքը:

➤ *Պորտֆելային ներդրումների* դեպքում ներդրողը չունի ձեռնարկության գործունեության վրա ներգործելու բավարար ազդեցության և առավելապես հետաքրքրված է իր կապիտալի ապահովվածությամբ, դրա արժեքի մեծացմամբ և համապատասխան հատույցի ստացմամբ: Պորտֆելային ներդրումները գլխավորապես իրականացվում են *կապիտալի բաժնետոմսերի և պարտքի արժեթղթերի* միջոցով:

➤ *Կապիտալի բաժնետոմսերը* փաստում են ձեռնարկության կապիտալում մասնակցությունը, իսկ *պարտքի արժեթղթերը*՝ վարկատուի իրավունքը՝ պարտատուից պահանջելու պարտքի մարումը: Պարտքի արժեթղթերը ներառում են *պարտատոմսերը, պարտամուրհակները, դրամական շուկայի գործիքները*, որոնք շրջանառում են կազմակերպված շուկաներում, ինչպես օրինակ՝ պետական գանձապետական մուրհակները, բանկային ակցիատները, ավանդային սերտիֆիկատները և ֆինանսական ածանցյալները (օպցիոն, ֆորվարդ, ֆյուչերս, սվոպ):

➤ *Այլ ներդրումները* գլխավորապես ներառում են երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերը, կանխիկը դրամը և ավանդները:

➤ *Պահուստային ակտիվները* բաղկացած են բարձր իրացվելիություն ունեցող այն արտաքին ակտիվներից, որոնք անմիջականորեն գտնվում են Կենտրոնական բանկի վերահսկողության ներքո ու կարող են օգտագործվել վճարային հաշվեկշռի պակասուրդի ֆինանսավորման, արտարժույթի շուկայում ինտերվենցիայի իրականացման կամ այլ համանման նպատակներով: Իրենց կառուցվածքով պահուստային ակտիվները բաղկացած են մոնետար ոսկուց, Զատուկ փոխառության իրավունքի համակարգի (ՀՓԻ՝ SDR) մեջ մտնող արտարժույթներից, Միջազգային արժութային հիմնադրամի պահուստներից, այլ արտարժութային ակտիվներից և այլն:

ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական հոդվածներն իրենց մնացորդներով բերված են աղյուսակ 6-ում:

ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշների դինամիկան 1997-2003թթ. (մլն ԱՄՆ դոլար)

	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Վճարային հաշվեկշիռ							
Ընթացիկ հաշիվ	-306.5	-402.9	-306.9	-278.3	-200.4	-148.0	-190.5
Ապրանքներ	-559.4	-577.4	-473.9	-463.5	-420.2	-368.8	-434.8
Ծառայություններ	-62.8	-63.2	-62.0	-55.8	-17.7	-40.7	-68.3
Եկամուտներ	98.5	60.4	54.9	52.9	63.5	88.1	93.3
Ընթացիկ տրանսֆերտներ	217.2	177.4	174.1	188.1	173.9	173.3	218.4
Կապիտալի և ֆինանսական հաշիվ	298.3	399.3	294.5	261.4	188.9	152.0	192.0
Կապիտալի հաշիվ	10.8	9.7	12.5	28.3	30.1	68.1	89.9
Ֆինանսական հաշիվ	287.4	389.6	281.9	233.0	158.8	83.9	102.1
Պահուստային ակտիվներ	-71.0	-52.5	-20.6	-19.2	-19.7	-81.6	-46.3
Զուտ սխալներ և բացթողումներ	8.3	3.6	12.5	17.0	11.5	-4.1	-1.5

Մեթոդական առումով վճարային հաշվեկշիռը մշտապես հավասարակշռված է, քանի որ գործում է կրկնակի գրանցման հաշվապահական սկզբունքը, այսինքն՝ ընթացիկ հաշվի մնացորդը բացարձակ մեծությամբ և հակառակ նշանով պետք է հավասար լինի կապիտալի և ֆինանսական հաշվի մնացորդին: Սակայն, իրականում վճարային հաշվեկշռի առանձին ենթահաշիվները, մասնավորապես՝ ընթացիկ հաշիվը ու կապիտալի և ֆինանսական հաշիվը հազվադեպ են հավասարակշռվում: Ուստի վճարային հաշվեկշռի հավելուրդի կամ պակասուրդի մասին խոսելիս սովորաբար նկատի է առնվում հենց ենթահաշիվների հավելուրդը կամ պակասուրդը:

Վճարային հաշվեկշռի մնացորդը հաշվում են ընդհանուր ճանաչում գտած մի մեթոդով, որի էությունն այն է, որ հաշվեկշիռը բաժանում են հիմնական և հաշվեկշռող հաշիվների: Հիմնական հոդվածների մնացորդն անվանում են «Վճարային հաշվեկշռի մնացորդ», և կախված այն բանից՝ դրական է այն, թե բացասական, վճարային հաշվեկշիռը լինում է հավելուրդով կամ պակասուրդով և ծածկվում է հաշվեկշռող հաշիվների միջոցով: Վերջիններս ուղղակիորեն կապված են հիմնական հաշիվների վճարումների հավելուրդի կամ պակասուրդի վերացման հետ, ինչպես օրինակ՝ պահուստային ակտիվները:

Վճարային հաշվեկշռի մնացորդը մեծ նշանակություն ունի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին տնտեսական քաղաքականության մշակման գործում: Այն կառուցվածքային ցուցանիշ է, որի մեծությունը կախված է ընտրվող հաշիվներից: Վերջիններս ընտրվում են ոչ թե

պատահականորեն, այլ որոշակի վերլուծության արդյունքում: Ներկայումս համաշխարհային պրակտիկայում առավել ընդունված է վճարային հաշվեկշռի մնացորդ համարել ընթացիկ գործառնությունների հաշվի մնացորդը: Այդ հաշվի պակասուրդը համարվում է ոչ ցանկալի և սովորաբար զնախատվում է որպես երկրի թույլ միջազգային տնտեսական կապերի բնութագիր, սակայն դա առավելապես վերաբերում է զարգացող երկրներին, որոնք մշտապես ֆինանսական մուտքերի պակաս ունեն: Պակասուրդի ծածկման համար երկիրը կարող է օգտագործել պահուստային ակտիվները, ստանալ վարկեր, արժեզրկել ազգային արժույթը և այլն:

2.4. Վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնական սկզբունքները

Վճարային հաշվեկշռը փոխադարձ կապի մեջ է վերարտադրության հետ: Մի կողմից՝ այն կախված է վերարտադրությունում առկա գործընթացներից, մյուս կողմից՝ ներգործում է դրանց վրա, քանի որ ազդում է արժույթի փոխարժեքի, ոսկե-արժութային պաշարների, արտաքին պարտքի, տնտեսության զարգացման ուղղվածության վրա:

Վճարային հաշվեկշռում արտացոլվում են.

- տնտեսության կառուցվածքային անհամամասնությունները, որոնք որոշում են ապրանքների, ծառայությունների և կապիտալի արտահանման հնարավորությունները և ներմուծման նկատմամբ պահանջարկը,

- տնտեսության շուկայական և պետական կարգավորման հարաբերակցության փոփոխությունը,

- իրավիճակային գործոնները (միջազգային մրցակցության մակարդակը, արժույթի փոխարժեքի փոփոխությունը և այլն):

Վճարային հաշվեկշռի վրա ազդում են մի շարք գործոններ: Դրանք հետևյալն են.

1. երկրների տնտեսական և քաղաքական անհամաչափ զարգացումը և միջազգային մրցակցությունը,

2. տնտեսության պարբերաշրջանային տատանումները,

3. պետության արտասահմանյան ծախսերի աճը,

4. տնտեսության ռազմականացումը և ռազմական ծախսերի աճը,

5. միջազգային ֆինանսական փոխկախվածությունը,

6. միջազգային առևտրում տեղի ունեցող փոփոխությունները,

7. արժութաֆինանսական գործոնների ազդեցությունը:

Վճարային հաշվեկշռի պետական կարգավորումը այդ հաշվեկշռի հիմնական հոդվածների ձևավորման, ինչպես նաև հաշվեկշռի առկա

մնացորդի ծածկման նպատակով իրականացվող պետական միջոցառումների ամբողջություն է:

Վճարային հաշվեկշռի պակասուրդ ունեցող երկրները կիրառում են միջոցառումների այնպիսի համակարգ, որն ուղղված է ապրանքների արտահանման խթանմանը, ներմուծման կաշկանդմանը, արտասահմանյան կապիտալի ներգրավմանը և երկրից կապիտալի արտահոսքի սահմանափակմանը: Այդ միջոցառումներն են.

1. Հակաինֆլացիոն քաղաքականությունը, որի նպատակը ներքին պահանջարկի կրճատումն է և ներառում է պետական ծախսերի սահմանափակումը, գների և աշխատավարձի տվյալ մակարդակի պահպանումը:

2. Ազգային արժույթի փոխարժեքի իջեցումը, որն ուղղված է ապրանքների ու ծառայությունների արտահանման խթանմանը և ներմուծման կրճատմանը:

3. Արժութային սահմանափակումները, ինչպես օրինակ՝ արտահանողների արտարժութային հասույթի պարտադիր վաճառքը պետությանը, ներմուծողներին արտարժութի վաճառքի լիցենզավորումը, արժութային գործարքների կենտրոնացումը լիազորված բանկերում, որոնք ուղղված են վճարային հաշվեկշռի պակասուրդի ծածկմանը՝ կապիտալի արտահոսքի սահմանափակման և ներհոսքի խթանման, ինչպես նաև ապրանքների ներմուծման կաշկանդման միջոցով:

4. Ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունը: Վճարային հաշվեկշռի պակասուրդը կրճատելու նպատակով պետությունը պետական բյուջեից լրահատկացումներ է տրամադրում արտահանողներին, բարձրացնում է ներմուծման մաքսատուրքերը, կապիտալի ներհոսքը խթանելու համար ազատում է հարկումից հայրենական արժեթղթեր ունեցող արտասահմանցիների ստացած տոկոսային եկամուտները, իսկ դրամավարկային քաղաքականության միջոցով կարգավորում է դրամական զանգվածի մեծությունը և տոկոսադրույքը:

Հավելուրդային վճարային հաշվեկշռի դեպքում կարգավորման միջոցառումների նպատակը ոչ ցանկալի, խիստ մեծ մնացորդի վերացումը կամ էական կրճատումն է: Իրականացվող ֆինանսական, վարկային ու արժութային քաղաքականության միջոցառումները, այդ թվում՝ արժույթի փոխարժեքի իջեցումը, նպատակաուղղվում են ապրանքների ներմուծման խթանմանն ու արտահանման կաշկանդմանը, կապիտալի արտահանման ավելացմանը և ներմուծման սահմանափակմանը:

Վճարային հաշվեկշռի պակասուրդի ֆինանսավորման աղբյուր կարող են լինել կապիտալի համաշխարհային շուկայում արդյունաբերական զարգացած երկրների կողմից կենտրոնացված միջոցները: Պակասուրդի ֆինանսավորման համար օգտագործվում են նաև կեն-

տրոնական բանկերի միջև կնքվող սվոպ գործառնությունների հիման վրա տրամադրվող կարծաժամկետ վարկերը:

Վճարային հաշվեկշռի վերջնական հավասարակշռման համար օգտագործվում են երկրի պաշտոնական արժութային պաշարները, մասնավորապես՝ փոխարկելի արտարժույթները և ոսկին: Բացի այդ, օգտագործվում են նաև այլ երկրների կողմից լրահատկացումների և նվիրատվությունների ձևով տրամադրվող օգնությունները:


Վճարային հաշվեկշռի դրական մնացորդը երկրի կողմից օգտագործվում է արտաքին պարտավորությունները փակելու, այլ երկրներին վարկեր տրամադրելու, պաշտոնական ոսկե-արժութային պաշարների մեծացման, ինչպես նաև արտասահմանում ակտիվների ձեռքբերման համար:

Վճարային հաշվեկշռի կարգավորման համաշխարհային փորձը վկայում է, որ դժվար է միաժամանակ հասնել երկրի տնտեսության և՛ արտաքին, և՛ ներքին հավասարակշռության: Դա պայմանավորված է հավելուրդային և պակասուրդային վճարային հաշվեկշռ ունեցող երկրների համագործակցության ձգտմամբ և դրանցում առկա տարածայնություններով:

Պետության տնտեսական քաղաքականության ազդեցությունը վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի մնացորդների վրա պարզելու համար քննարկենք երկրի հարկաբյուջետային քաղաքականության, այլ երկրների հարկաբյուջետային քաղաքականության, ներդրումային պահանջարկի փոփոխության և արտաքին առևտրային քաղաքականության ազդեցությունը արժույթի իրական փոխարժեքի և վճարային հաշվեկշռի վրա:

ա. Երկրի հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը

Եթե երկիրը վարում է խթանող հարկաբյուջետային քաղաքականություն և ավելացնում է պետական ծախսերը կամ կրճատում հարկերը, ապա S_2 -ի գիծը (գծանկար 4) դրանց ազդեցությամբ շարժվում է դեպի ձախ, որի հետևանքով արժույթի իրական փոխարժեքը բարձրանում է:




Պժանկար 4. *Խթանող հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը արժույթի իրական փոխարժեքի վրա*

Եթե արժույթի իրական փոխարժեքը բարձրանում է, այլ երկրների ապրանքները մեզ համար դառնում են էժան, իսկ մեր ապրանքները արտասահմանցիների համար՝ թանկ։ Դրա հետևանքով արտահանման ծավալը կրճատվում է, և զուտ արտահանման մնացորդը՝ փոքրանում։

բ. Այլ երկրների հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը

Այլ երկրների խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը կրճատում է այդ երկրների խնայողությունների ծավալը։ Համաշխարհային ֆինանսական շուկայում կապիտալի առաջարկը փոքրանում է, և դրա հետևանքով բարձրանում է տոկոսադրույքը։ Փոքր բաց երկրում կապիտալի տոկոսադրույքը նույնպես բարձրանում է և հանգեցնում ներդրումների կրճատման, որի հետևանքով S-I տարբերությունը մեծանում է (գծանկար 5)։



Համաշխարհային ֆինանսական շուկայում տոկոսադրույքի բարձրացման արդյունքում մեր երկրում այն նույնպես բարձրանում է, ներդրումները $I(r_1)$ -ից դառնում են $I(r_2^*)$, ուստի $(S-Ir_1^*)$ գիծը տեղափոխվում է դեպի աջ։ Արժույթի իրական փոխարժեքն իջնում է, որը խթանում է զուտ արտահանման ավելացումը։


Գծանկար 5. Այլ երկրների խթանող հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը արժույթի իրական փոխարժեքի վրա

Երկրում չօգտագործված խնայողությունը հոսում է միջազգային ֆինանսական շուկա, որի արդյունքում վճարային հաշվեկշռի կապիտալի շարժի հաշիվը փոքրանում է, իսկ զուտ արտահանումը՝ աճում:

զ. Ներդրումային պահանջարկի փոփոխություն

Եթե փոքր բաց տնտեսություն ունեցող երկիրը խթանում է ներդրումների ավելացումը, ապա դրա արդյունքում $S-I$ տարբերությունը փոքրանում է (գծանկար 6):

Խնայողության և ներդրումների տարբերության կրճատմամբ պայմանավորված՝ կապիտալն ավելի քիչ կհոսի երկրից, ուստի վճարային հաշվեկշռի կապիտալի շարժի հաշիվը կմեծանա, իսկ ընթացիկ հաշվի մնացորդը կփոքրանա:




Ներդրումների ավելացման արդյունքում $S-I_1$ գիծը տեղափոխվում է ձախ և ընդունում է $S-I_2$ դիրքը: Դրա հետևանքով արժույթի իրական փոխարժեքը E_1 -ից բարձրանում է E_2 կետը, իսկ NX_1 զուտ արտահանման ծավալը ստանում է NX_2 արժեքը:

Գծանկար 6. Ներդրումների խթանման ազդեցությունը արժույթի իրական փոխարժեքի վրա

դ. Արտաքին առևտրային քաղաքականության ազդեցությունը

Արտաքին առևտրի հովանավորչական քաղաքականությունը կապիտալի շարժի մնացորդի վրա ազդել չի կարող, ուստի ընթացիկ հաշվի մնացորդը նույնպես փոփոխվել չի կարող (գծանկար 7):



Եթե երկիրը վարում է ներմուծման կաշկանդման քաղաքականություն, ապա դրանից զուտ արտահանումը կարող է ավելանալ, որի հետևանքով արժույթի իրական փոխարժեքը կբարձրանա և կկաշկանդի արտահանումը այնքան ժամանակ, մինչև որ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի մնացորդը ընդունի իր նախկին ծավալը:

Գծանկար 7. Արտաքին առևտրային քաղաքականության ազդեցությունը արժույթի իրական փոխարժեքի վրա

Փաստորեն արտաքին առևտրային հովանավորչական քաղաքականությունը չի ազդում զուտ արտահանման ծավալի փոփոխության վրա, և միայն բարձրանում է արժույթի իրական փոխարժեքը, որի ազդեցությամբ զուտ արտահանումը նույնպես հետագայում կվերադառնա իր նախկին վիճակին, եթե երկրում պահպանվեն կայուն գներ:

2.5. Ընթացիկ հաշվի և արժութային փոխարժեքի փոխկապակցվածությունը

Արտաքին շուկաներում հայրենական ապրանքների մրցունակությունը, արտահանման և ներմուծման ծավալները, հետևաբար նաև երկրի ընթացիկ հաշվի մնացորդը մեծապես կախված են արժույթի փոխարժեքից: Ստորև ներկայացվում է երկու մոդել, որոնցում վերլուծվում է փոխարժեքի փոփոխման ազդեցությունը վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի վրա: Դրանք պարզաբանում են այն հարցը, թե արդյոք ազգային արժույթի փոխարժեքի իջեցումը բարելավում է ընթացիկ հաշիվը:

Առաջինը առաձգականության մոդելն է, որի հիմնադրույթները մշակել են Ալֆրեդ Մարշալն ու Աբբա Լեքները: Ավելի ուշ այն կատարելագործեցին Ջոն Ռոբինսոնը (1937), իսկ ապա՝ Ֆրից Մաքլափը (1955): Մոդելը հիմնվում է այն ենթադրության վրա, որ արտահանվող և ներմուծվող ապրանքների առաջարկը բացարձակ առաձգական է և,

հետևաբար, պահանջարկի փոփոխությունը գների վրա որևէ ազդեցություն չունի: Այսինքն՝ ներքին ու արտաքին գները հաստատագրված են, ինչը նշանակում է, որ հարաբերական գների փոփոխությունը կարող է պայմանավորվել միայն անվանական փոխարժեքի փոփոխմամբ:

Ընթացիկ հաշիվը (CA), արտահայտված ազգային արժույթով, ներկայացվում է հետևյալ կերպ¹.

$$CA = PX - SP^*M,$$

որտեղ՝ P-ն և P*-ը համապատասխանաբար ներքին ու արտաքին գներն են, X-ը՝ արտահանումը, M-ը՝ ներմուծումը, S-ը՝ փոխարժեքը (միավոր օտարերկրյա արժույթի հաշվով՝ ազգային արժույթի միավորները): Ներքին և արտաքին գները իբրև միավոր ընդունելու դեպքում կստանանք, որ.

$$CA = X - SM \Rightarrow dCA = dX - SdM - MdS$$

Վերջինս բաժանելով dS -ի վրա՝ կունենանք.

$$\frac{dCA}{dS} = \frac{dX}{dS} - S \frac{dM}{dS} - M \frac{dS}{dS}: \quad (1)$$

Սահմանենք, որ արտահանման պահանջարկի գնային առաձգականությունը (η_x) ցույց է տալիս արտահանման տոկոսային փոփոխությունը գնի, այն է՝ փոխարժեքի տոկոսային փոփոխության դեպքում:

$$\eta_x = \frac{dX/X}{dS/S} \Rightarrow dX = \eta_x \frac{dS}{S} X \quad (2)$$

Նույն ձևով ներմուծման պահանջարկի գնային առաձգականությունը (η_m) հավասար է.

$$\eta_m = -\frac{dM/M}{dS/S} \Rightarrow dM = -\eta_m \frac{dS}{S} M \quad (3)$$

(2) և (3) հավասարումները (1)-ում տեղադրելու դեպքում կստանանք.

$$\frac{dCA}{dS} = \frac{\eta_x X}{S} + (\eta_m M) - M \Rightarrow \frac{dCA}{dS} \frac{1}{M} = \frac{\eta_x X}{SM} + \eta_m - 1$$

Ենթադրելով, որ առևտուրը սկզբնապես հավասարակշռված էր՝ $X / SM = 1$, կարող ենք գրել.

$$\frac{dCA}{dS} = M(\eta_x + \eta_m - 1):$$

¹ Մոդելում անտեսվում են գործոնային եկամուտները և տրանսֆերտները:

Վերջինս հայտնի է իբրև Մարշալ-Լերների պայման և փաստում է, որ ընթացիկ հաշվի հավասարակշռված մակարդակից սկսած՝ ազգային արժույթի փոխարժեքի նվազումը կբարելավի ընթացիկ հաշվի պակասուրդը ($dCA/dS > 0$) միմիայն այն դեպքում, երբ

$\eta_x + \eta_m > 1$: Հակառակ դեպքում, եթե երկու առաձգականությունների գումարը փոքր է մեկից, ապա արժույթի փոխարժեքի անկումը բացասաբար կանդրադառնա ընթացիկ հաշվի վրա:

Արժույթի փոխարժեքի նվազումը պայմանավորում է երկու էֆեկտ՝ գնի և ծավալի:

Գնի էֆեկտի էությունը հանգում է հետևյալին. փոխարժեքի արժեզրկման հետևանքով արտահանման արժեքը նվազում է, որովհետև արտահանման ծավալները կարճ ժամկետում չեն փոխվում, իսկ ներմուծման արժեքը մեծանում է, ինչն ընթացիկ հաշվի վրա բացասական ազդեցություն է ունենում:

Ծավալի էֆեկտի էությունն այն է, որ արտահանվող ապրանքների էժանացումը ընդլայնում է արտահանումը, իսկ ներմուծվող ապրանքների թանկացումը կրճատում է ներմուծումը, ինչը ընթացիկ հաշվի վրա դրական է անդրադառնում:

Հետևաբար, ընթացիկ հաշվի վրա փոխարժեքի նվազման վերջնական ազդեցությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե որ էֆեկտն է գերակշռում:

Ավելի ուշ Ստերնը (1973) ցույց տվեց, որ երբ ներմուծվող ու արտահանվող ապրանքների առաջարկը բացարձակ առաձգական չէ, ապա արժույթի արժեզրկումը կբարելավի ընթացիկ հաշիվը, եթե.

$$\frac{\varepsilon_x(\eta_x - 1)}{\varepsilon_x + \varepsilon_m} + \frac{\eta_m(\varepsilon_m + 1)}{\eta_m + \varepsilon_m} > 0,$$

որտեղ՝ ε_x -ը արտահանվող ապրանքի առաջարկի առաձգականությունն է, իսկ ε_m -ը՝ ներմուծվող ապրանքի առաջարկի առաձգականությունը:

Ընթացիկ հաշիվը կարող է բարելավվել նաև այն դեպքում, երբ պահանջարկի առաձգականությունների գումարը փոքր է մեկից:

Բանն այն է, որ երբ առաջարկի առաձգականությունները բացարձակ չեն, ապա արտահանման պահանջարկի աճը մասամբ կբարձրացնի արտահանվող ապրանքի գինը՝ ընդլայնելով արտահանումից ստացվող հասույթը, իսկ ներմուծման նկատմամբ պահանջարկի անկումը, ընդհակառակը, կնվազեցնի ներմուծվող ապրանքի գինը, համապատասխանորեն կրճատելով ներմուծման վրա կատարվող ծախսերը:

Այն, որ արժույթի արժեգրկումը կարող է բացասաբար անդրադառնալ ընթացիկ հաշվի վրա, բազմաթիվ հետազոտողների մոել է էմպիրիկ ուսումնասիրությունների: Այդ հետազոտությունների ընդհանրական եզրահանգումն այն է, որ Մարշալ-Լեոնների պայմանը գործում է միայն երկարատև (ավելի քան երկու տարի) ժամանակաշրջանի համար: Կարճատև շրջանում ծավալի էֆեկտը աննշան է, և գնի էֆեկտի գերակշռման հետևանքով ընթացիկ հաշիվը վատթարանում է. միայն երկար ժամանակահատվածում է ծավալի էֆեկտը դառնում գերակշռող:

Ծավալի էֆեկտի դանդաղ գործողությունը բացատրվում է այն հանգամանքով, որ գոյություն ունի ժամանակային խզում շուկայում գների փոփոխման և դրանք՝ սպառողների ու արտադրողների որոշումներին համապատասխանեցնելու միջև: Բացի այդ, ավելի հավանական է, որ արտաքին արտադրողները տեղական շուկայում գնային մրցունակության կորստի դեպքում նախընտրեն իջեցնել գները, քան թե կորցնել շուկան: Այնուհետև, արտաքին շուկայում ներմուծման հետ մրցող արտադրությունները նույնպես՝ ի պատասխան տեղական արտահանման աճի, կիջեցնեն գները: Արձանագրենք, որ գների իջեցման հնարավորությունը վկայում է, որ շուկան կատարյալ մրցակցային չէ:

Քանի որ առաձգականության մոդելը դրսևորում է որոշակի թերություններ, ապա օգտագործվում է երկրորդը՝ կլանման մոդելը:

Առաձգականության մոդելի թերություններից մեկն այն է, որ չի դիտարկվում փոխարժեքի փոփոխման ազդեցությունը տնտեսության մյուս հատվածներում տեղի ունեցող փոփոխությունների վրա: Այնինչ, ներմուծման և արտահանման փոփոխությունը անխուսափելիորեն ազդում է ազգային եկամտի վրա և, հետևաբար, արժույթի արժեգրկման հետևանքների վերլուծությունը պահանջում է նաև եկամտի էֆեկտի դիտարկում:

1952թ-ին Ս.Ալեքսանդրի կողմից առաջարկված կլանման մոդելի հիմքում այն դրույթն է, ըստ որի՝ ընթացիկ հաշվի պակասուրդը ներքին արտադրության և ներքին սպառման (կլանման) անհավասարակշռության արդյունք է՝ $CA = Y - A$: Հետևաբար, ունենք, որ $dCA = dY - dA$, այսինքն՝ ընթացիկ հաշվի վրա արժույթի արժեգրկման ազդեցությունը կախված է այն բանից, թե որքանով է ազդում ազգային եկամտի և ներքին սպառման վրա:

Ազգային եկամտի վրա ազգային արժույթի փոխարժեքի արժեգրկման ազդեցությունը դրսևորվում է հետևյալ կերպ. երբ տնտեսությունը ոչ լրիվ զբաղվածության վիճակում է, և եթե սպառման սահմանային հակումը մեկից փոքր է, ապա եկամտի աճը կբարելավի, իսկ նվազումը կվատթարացնի ընթացիկ հաշիվը: Այստեղ գործում է երկու տեսակի էֆեկտ՝ զբաղվածության և առևտրի պայմանների:

Ջբաղվածության էֆեկտի եւթնունը հանգում է հետևյալին. եթե տնտեսությունը ոչ լրիվ զբաղվածության վիճակում է, և երբ տեղի ունի Մարշալ-Լերների պայմանը, ապա արժույթի արժեզրկման դեպքում տեղի կունենա զուտ արտահանման աճ, ինչը բազմարկչային արդյունքով կբերի ազգային եկամտի ու զբաղվածության ընդլայնմանը: Սակայն եթե Մարշալ-Լերների պայմանը տեղի չունի, ապա արժույթի արժեզրկման դեպքում զուտ արտահանումը կնվազի և, հետևաբար, ազգային եկամուտը կկրճատվի: Փաստորեն զբաղվածության էֆեկտի ազդեցությունը ազգային եկամտի վրա որոշակի չէ:

Առևտրի պայմանների էֆեկտի եւթնունն այն է, որ արժույթի արժեզրկման դեպքում ներմուծումն արտահանման համեմատ թանկանում է, այսինքն՝ միավոր ներմուծում ձեռք բերելու համար ավելի մեծ քանակի արտահանում է անհրաժեշտ: Հետևաբար, ազգային եկամտի վրա առևտրի պայմանների էֆեկտի ազդեցությունը բացասական է:

Այսպիսով, նույնիսկ եթե Մարշալ-Լերների պայմանը տեղի ունի և զուտ արտահանումն արժույթի արժեզրկման դեպքում աճում է, ապա առևտրի պայմանների բացասական էֆեկտը հանդես է գալիս իբրև հակակշռող գործոն:

Ավելին, եթե նույնիսկ ազգային եկամուտը զբաղվածության էֆեկտի հետևանքով աճի, ապա, այնուամենայնիվ, ընթացիկ հաշվի վրա դրա ազդեցությունը կախված կլինի սպառման սահմանային հակման մեծությունից: Մասնավորապես, ընթացիկ հաշիվը կբարելավվի միայն այն դեպքում, երբ $a < 1$: Ս.Ալեքսանդրը պնդում էր, որ նոր աշխատանք ստացած աշխատողների սպառման հակումը մեկից բարձր է, այնպես, ինչպես եկամտի աճի պարագայում ապագայի նկատմամբ դրական սպասումներ ունեցող ֆիրմաներինը: Իսկ այդ դեպքում եկամտի աճը կվատթարացնի ընթացիկ հաշիվը:

Ինչ վերաբերում է լրիվ զբաղվածության տարբերակին, ապա արժույթի արժեզրկման պարագայում այն բնականորեն չի կարող մեծացնել ազգային եկամուտը և, հետևաբար, ընթացիկ հաշվի բարելավումը հնարավոր է միայն ի հաշիվ ներքին ուղղակի սպառման կրճատման:

Այժմ պարզաբանենք ազգային արժույթի փոխարժեքի արժեզրկման ազդեցությունը սպառման վրա:

Փողի իրական պաշարի հաշվեկշռման էֆեկտի եւթնունն այն է, որ փողի նկատմամբ պահանջարկը ենթադրում է իրական պահանջարկի հաշվեկշռում. եթե գները աճում են, ապա փողի նկատմամբ պահանջարկը պետք է աճի միևնույն չափով.

$$M/P = k,$$

որտեղ՝ k -ն հաստատուն է, իսկ $P = \alpha p + (1 - \alpha)SP^*$, որում a -ն տեղական ապրանքների ծախսի տեսակարար կշիռն է ընդհանուր

ծախսերում, P -ն՝ այդ ապրանքների գինը, P^* -ը՝ ներմուծվող ապրանքների գինը, S -ը՝ փոխարժեքը:

Երբ փողի առաջարկը հաստատուն է, և տնտեսավարող սուբյեկտները մտադիր են k -ն պահել հաստատուն, ապա արժույթի արժեզրկման (S -ի աճի) արդյունքում P -ի աճը նշանակում է, որ փողի իրական հաշվեկշիռը հաստատուն պահելու համար տնտեսավարող սուբյեկտները հարկադրված են կրճատել ուղղակի սպառումը: Նրանք կփորձեն տնօրինվող փողի քանակությունը ընդլայնել պարտատոմսերի վաճառքի միջոցով, որի հետևանքով ներքին տոկոսադրույքը կբարձրանա: Վերջինս կնվազեցնի ներդրումները և մասնավոր սպառումը, այսինքն՝ ուղղակի սպառումը: Շեշտենք, որ իրական հաշվեկշռի էֆեկտի գործողության համար անհրաժեշտ է, որ Կենտրոնական բանկը չընդլայնի փողի առաջարկը:

Եկամտի վերաբաշխման էֆեկտը դրսևորվում է այն դեպքում, երբ արժույթի արժեզրկման հետևանքով գների ընդհանուր մակարդակի (P_1) աճը այս կամ այն ազդեցությունն է ունենում եկամտի բաշխման վրա: Ընդ որում, եթե եկամուտը վերաբաշխվում է սպառման ցածր հակում ունեցող ապրանքներից դեպի բարձր հակում ունեցողները, ապա ուղղակի սպառումը աճում է, հակառակ դեպքում այն կրճատվում է:

P_1 -ի աճի դեպքում հաստատագրված եկամուտ ունեցողների իրական եկամուտը կնվազի, և եթե ընդհանուր եկամուտը չի փոխվել, ապա փոփոխուն եկամուտ ունեցողների իրական եկամուտը կաճի: Սովորաբար, հաստատագրված եկամուտ ունի հարաբերականորեն ոչ ապահով խավը, որի սպառման սահմանային հակումը բարձր է՝ ի տարբերություն փոփոխուն եկամուտ ունեցող ապահով խավի, որի սպառման հակումը ցածր է: Արդյունքում՝ եկամտի նմանօրինակ վերաբաշխման դեպքում ուղղակի սպառումը կկրճատվի:

Արժույթի արժեզրկման արդյունքում, սովորաբար, արտահանող ճյուղի և ներմուծման հետ մրցող ճյուղի եկամուտներն ավելանում են, միաժամանակ գների ընդհանուր մակարդակի աճի հետևանքով իրական աշխատավարձը կրճատվում է: Սակայն այս դեպքում ուղղակի սպառման վրա ազդեցությունն անորոշ է, քանի որ, եթե ֆիրմաները ապագայի նկատմամբ ունեն դրական սպասումներ, առավել ևս եկամուտների աճի պայմաններում պետք է ակնկալել ներդրումների ընդլայնում և ուղղակի սպառման աճ, թեպետ կարելի է պնդել, թե ֆիրմաների սպառման սահմանային հակումը փոքր է աշխատողների սպառման սահմանային հակումից:

Եկամուտների վերաբաշխումը հնարավոր է նաև ֆիրմաների ու տնային տնտեսությունների միջև: Այն ֆիրմաները, որոնք օգտագործում են ներմուծվող հումք, արժույթի արժեզրկման դեպքում կտուժեն՝ ի տարբերություն արտահանման ոլորտի ձեռնարկությունների: Այն

տնային տնտեսությունները, որոնք արհմիությունների անդամ են, կարող են կանխել իրենց իրական եկամուտների անկումը: Հետևաբար, սպառման վրա եկամուտների վերաբաշխման վերջնական ազդեցությունը կախված է այն բանից, թե որքան է այն ֆիրմաների ու տնային տնտեսությունների սպառման սահմանային հակումը, որոնք տուժածների համեմատությամբ շահել են: Այսպիսով՝ եկամտի վերաբաշխման ազդեցությունը սպառման վրա բնավ միարժեք չէ: Չնայած վերջնական արդյունքի ոչ միարժեքությանը, սպառման մոտեցման հիմնական եզրահանգումն այն է, որ արժույթի արժեզրկումը դրական ազդեցություն կունենա ընթացիկ հաշվի պակասուրդի վրա միայն այն դեպքում, երբ ուղեկցվում է այնպիսի տնտեսական քաղաքականությամբ, որը նպաստում է եկամտի աճին և կանխում ներքին սպառումը:

2.6. Վճարային հաշվեկշռի ընդհանուր հավասարակշռվածության ձևավորման պայմանները

Վճարային հաշվեկշռի ու արժութային փոխարժեքի կապը դիտարկելիս փաստարկվեց, որ ընթացիկ հաշվի վրա արժույթի արժեզրկման ազդեցությունը կախված է տնտեսական քաղաքականության բնույթից: Ստորև վերլուծվում է ինչպես մակրոտնտեսական քաղաքականության, այնպես էլ արժութային փոխարժեքի փոփոխման ազդեցությունը բաց տնտեսության վրա: Բաց տնտեսությունը երկար ժամանակահատվածում պետք է հավասարակշռի իր ընթացիկ հաշիվը, քանի որ երկիրը չի կարող անվերջ կուտակել պարտավորություններ կամ պահանջներ այլ երկրների նկատմամբ, այսինքն՝ երկրի ընթացիկ հաշիվը չի կարող անվերջ լինել պակասուրդային կամ հավելուրդային:

1948-73թթ. միջազգային արժութային համակարգում գործում էր արժույթի հաստատագրված փոխարժեքների համակարգ: Արժույթի փոխարժեքի փոփոխություն թույլատրվում էր միայն «հիմնարար անհավասարակշռության» դեպքում: Ահա թե ինչու, նախորդ դարի 50-60-ական թթ. գործնական մեծ նշանակություն ունեցող դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների հարաբերական արդյունավետության որոշումը, քանի որ արժութային քաղաքականության իբրև մակրոտնտեսական գործիքի կիրառումը հնարավոր է միայն հազվադեպ: Այդ առումով նշանակալի զարգացում էր Ջեյմս Ֆլեմինգի և Ռոբերտ Մանդելի կողմից 60-ականների սկզբին IS-LM մոդելի ընդլայնումը և տնտեսության արտաքին հատվածի ներառումը:


Մակրոտնտեսական քաղաքականության վերջնական նպատակը ներքին և արտաքին հավասարակշռության հաստատումն է, որից առաջինը ենթադրում է լրիվ զբաղվածություն ու գների կայուն մա-

կարդակ, իսկ երկրորդը՝ հավասարակշիռ վճարային հաշվեկշիռ: Նշված խնդիրը ամփոփ (1955թ.) ներկայացրեց Թրևոր Սվանը՝ ընդհանուր հավասարակշռության հաստատման մեխանիզմի մշակմամբ:

Սվանի աղյուսակում (գծանկար 8) ուղղահայաց առանցքը արտահայտում է ազգային արժույթի իրական փոխարժեքը՝ միավոր արտարժույթի հաշվով: Հետևաբար, այդ առանցքով դեպի վեր՝ ազգային արժույթի փոխարժեքը նվազում է, այսինքն՝ երկրի արտաքին մրցունակությունը բարելավվում է: Հորիզոնական առանցքը արտահայտում է իրական ներքին սպառումը, այսինքն՝ սպառման, ներդրումների և պետական գնումների հանրագումարը:

IB կորը բնութագրում է իրական փոխարժեքի և ներքին սպառման բոլոր այն համամասնությունները, որոնց դեպքում տնտեսությունը ներքին հավասարակշռության վիճակում է: Լրիվ զբաղվածություն և կայուն գներ: Կորը վարընթաց է, քանի որ իրական փոխարժեքի բարձրացման (առանցքով դեպի վար) դեպքում արտահանումը կրճատվում է, իսկ ներմուծումը՝ աճում, և, հետևաբար, լրիվ զբաղվածության պահպանումը պահանջում է ներքին սպառման աճ: IB կորից դեպի աջ առկա է ինֆլյացիոն ճնշում, քանի որ յուրաքանչյուր տրված փոխարժեքի համար ներքին ծախսերն ավելին են, քան պահանջվում է լրիվ զբաղվածության ապահովման համար: Կորից դեպի ձախ առկա է դեֆլյացիոն ճնշում և գործազրկություն, քանի որ ներքին ծախսերն անբավարար են լրիվ զբաղվածության հասնելու համար:

EB կորը բնութագրում է արտաքին հավասարակշռությունը: Կորը վերընթաց է, քանի որ փոխարժեքի անկման (առանցքով դեպի վեր) դեպքում արտահանումը աճում է, իսկ ներմուծումը՝ կրճատվում: Հետևաբար, ընթացիկ հաշվի դրական մնացորդի ձևավորումը կանխելու և ներմուծման հակակշռող աճ ապահովելու համար անհրաժեշտ է ներքին սպառման աճ: EB կորից դեպի աջ՝ ներքին կլանումն ավելին է, քան անհրաժեշտ է ընթացիկ հաշիվը հավասարակշռելու համար, հետևաբար, ընթացիկ հաշիվը պակասուրդային է, իսկ դեպի ձախ, ընդհակառակը, ընթացիկ հաշիվը հավելուրդային է:



Գծանկար 8. «Սվանի աղյուսակը»

A

Այսպիսով, Սվանի աղյուսակը ցույց է տալիս տնտեսության անհավասարակշռության չորս տարբերակ, ընդ որում, միաժամանակ ներքին և արտաքին հավասարակշռություն հաստատվում է միայն b կետում: Ենթադրենք՝ տնտեսությունը սկզբնապես գտնվում է a կետում, որում ինֆլյացիոն ճնշումը զուգորդվում է ընթացիկ հաշվի պակասուողի հետ: Եթե տնտեսական քաղաքականություն իրականացնողները հաստատագրված պահեն փոխարժեքը և ընթացիկ հաշվի պակասուողը կրճատեն ներքին սպառման սահմանափակման միջոցով, ապա տնտեսությունը կտեղաշարժվի c կետ, որում արտաքին հավասարակշռության հաստատման հաշվին տնտեսությունը կբախվի գործազրկության մակարդակի բարձրացմանը: Եվ ընդհակառակը, եթե արտաքին հավասարակշռության հաստատումը կատարվի ի հաշիվ իրական փոխարժեքի կրճատման, ապա տնտեսությունը կտեղաշարժվի d կետ՝ պայմանավորելով ինֆլյացիոն ճնշման հետագա ուժեղացում:

Սվանի աղյուսակի էական եզրահանգումներից մեկն այն է, որ մեկ միջոցի կիրառմամբ հնարավոր չէ իրագործել երկու նպատակ: a-ից b տեղաշարժվելու համար անհրաժեշտ է սահմանափակել ինչպես ներքին սպառումը, այնպես էլ կրճատել փոխարժեքը: Այն գաղափարը, որ կիրառվող միջոցների թիվը պետք է լինի այնքան, որքան նպատակներն են, մշակել և ապացուցել է Նորբեյան մրցանակակիր Յան Տինբերգենը (1952):

Եթե երկրի կենտրոնական բանկը իրականացնում է արժույթի հաստատագրված փոխարժեքի քաղաքականություն, ապա վճարային հաշվեկշիռը հավասարակշռվում է այն դեպքում, երբ ռեզիդենտներից

ոչ ռեզիդենտներին կատարված վճարումները հավասար են ռեզիդենտների ստացած վճարումներին, հետևաբար, այդ բանկի տրամադրության տակ գտնվող արժույթային պահուստները չեն փոփոխվում:

Լողացող փոխարժեքի դեպքում ստացված և վճարված միջոցները ինքնըստինքյան հավասարվում են, քանի որ արտարժույթի ավելցուկային պահանջարկը կամ առաջարկը հավասարակշռելու համար փոխարժեքը փոփոխվում է:

Լայնորեն տարածված տեսակետի համաձայն, ցանկալի փոխարժեքն այն է, որի դեպքում ընթացիկ հաշիվը հավասարակշռված է: Այդ դեպքում երկիրը իր ներմուծման դիմաց վճարում է արտահանման, արտասահմանից ստացված եկամուտների ու տրանսֆերտների հաշվին, կապիտալի ներհոսքը հավասար է արտահոսքին, և երկրի միջազգային ներդրումային դիրքը չի փոփոխվում:

Իրականում, սակայն, այս սահմանումը չի կարող համարվել վճարային հաշվեկշռի հավասարակշռության համարժեք սահմանում: Դիցուք՝ տվյալ փոխարժեքի պայմաններում ընթացիկ հաշիվը գտնվում է հավասարակշռության վիճակում, սակայն առկա է գործազրկության բարձր մակարդակ: Վերջինիս մակարդակը կրճատելու համար ներքին քաղաքականության տեսանկյունից համարժեք արձագանքը կլինի խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կիրառումը: Նմանօրինակ քաղաքականությունը կավելացնի ազգային եկամուտը և, հավանաբար, նաև զների մակարդակը: Եկամտի աճը ներմուծումը կավելացնի այնպես, ինչպես զների մակարդակի բարձրացումը, որը հարաբերականորեն ոչ մրցունակ է դարձնում արտահանումը և, ընդհակառակը, նպաստում է ներմուծման ավելացմանը:

Այսպիսով, ներքին հավասարակշռության վերականգնմանը նպատակաուղղված քաղաքականությունը խախտում է *արտաքին հավասարակշռությունը*: Փաստորեն, հաստատագրված փոխարժեքի դեպքում նմանօրինակ քաղաքականությունը հանգեցնում է ընթացիկ հաշվի պակասուրդի ձևավորմանը, իսկ ճկուն փոխարժեքի դեպքում՝ արժույթի արժեզրկմանը: Այդ պատճառով, այն փաստը, որ ընթացիկ հաշիվը ի սկզբանե գտնվում էր հավասարակշռության վիճակում, չի նշանակում, որ այդ ժամանակ առկա փոխարժեքը գտնվում է ցանկալի մակարդակում: Ցանկալի համարվելու համար փոխարժեքը ոչ միայն պետք է ապահովի արտաքին հավասարակշռություն, այլև համապատասխանի ներքին հավասարակշռության ապահովման պայմանին:

**Վճարային հաշվեկշռում կատարվող գործարքների գրանցման
վերաբերյալ օրինակներ**

1. Հայաստանի HPML ընկերությունը ԱՄՆ է արտահանում 20 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ծրագրային ապահովման փաթեթներ, որի դիմաց ST Microelectronics ընկերությունը վճարում է Հայաստանի HSBC բանկում իր հաշվի դեբետավորմամբ:

ՀՀ վճարային հաշվեկշիռ	ԱՄՆ վճարային հաշվեկշիռ
<i>Ընթացիկ հաշիվ</i>	<i>Ընթացիկ հաշիվ</i>
Ծառայությունների արտահանում +20	Ծառայությունների ներմուծում -20
<i>Ֆինանսական հաշիվ</i>	<i>Ֆինանսական հաշիվ</i>
ԱՄՆ ռեզիդենտի նկատմամբ ՀՀ բանկային պարտավորությունների կրճատում - 20	ՀՀ-ում ավանդային ակտիվների կրճատում +20

2. ՀՀ-ն արտահանում է 250 հզ դոլարի ապրանքներ Հունաստան՝ 250 հզ դոլարի ծառայությունների դիմաց:

ՀՀ վճարային հաշվեկշիռ	Հունաստանի վճարային հաշվեկշիռ
<i>Ընթացիկ հաշիվ</i>	<i>Ընթացիկ հաշիվ</i>
Ապրանքների արտահանում + 250	Ապրանքների ներմուծում - 250
Ծառայությունների ներմուծում - 250	Ծառայությունների արտահանում + 250

3. ՀՀ ռեզիդենտը որոշում է գնել 900 ԱՄՆ դոլար արժողությամբ Լատվիայի գանձապետական մուրհակներ՝ դրա դիմաց վճարելով Լատվիայի Parex բանկում իր հաշվի դեբետավորման և նույն բանկում Լատվիայի գանձապետարանի հաշվի կրեդիտավորման միջոցով:

ՀՀ վճարային հաշվեկշիռ	Լատվիայի վճարային հաշվեկշիռ
<i>Ֆինանսական հաշիվ</i>	<i>Ֆինանսական հաշիվ</i>
Լատվիայի գանձապետական մուրհակների ավելացում - 900	ՀՀ ռեզիդենտի նկատմամբ պարտամուրհակային պարտավորությունների մեծացում + 900
Լատվիայում բանկային դեպոզիտային ակտիվների կրճատում +900	ՀՀ ռեզիդենտի նկատմամբ բանկային դեպոզիտային պարտավորությունների

	կրճատում	-900
--	----------	------

4. ՀՀ կառավարությունը 100 հզ ԱՄՆ դոլար արժողությամբ դեղամիջոցների նվիրատվություն է կատարում Իրանին:

ՀՀ վճարային հաշվեկշիռ	Իրանի վճարային հաշվեկշիռ
<i>Ընթացիկ հաշիվ</i>	<i>Ընթացիկ հաշիվ</i>
Ապրանքների արտահանում +100	Ապրանքների ներմուծում -100
Ընթացիկ տրանսֆերտներ. դեբետ -100	Ընթացիկ տրանսֆերտներ. կրեդիտ +100

5. ՀՀ կառավարությունը վճարում է Գերմանիայի կառավարության տրամադրած վարկի տոկոսները՝ 3.5 մլն ԱՄՆ դոլար, գերմանական Դոյչե Բանկում (Deutsche Bank) ՀՀ ԿԲ հաշվի դեբետավորման և նույն բանկում Գերմանիայի Բունդեսբանկի հաշվի կրեդիտավորման միջոցով:

ՀՀ վճարային հաշվեկշիռ	Գերմանիայի վճարային հաշվեկշիռ
<i>Ընթացիկ հաշիվ</i>	<i>Ընթացիկ հաշիվ</i>
Տոկոսների վճարում +3.5	Տոկոսների ստացում -3.5
<i>Ֆինանսական հաշիվ</i>	<i>Ֆինանսական հաշիվ</i>
Գերմանիայում բանկային դեպոզիտային ակտիվների կրճատում +3.5	ՀՀ ռեզիդենտի նկատմամբ բանկային դեպոզիտային պարտավորությունների կրճատում -3.5

Գրականության ցանկ

1. ՀՀ օրենքը «Մաքսատուրքի դրույքաչափերի մասին», 14.04.1997
2. ՀՀ Մաքսային օրենսգիրք, 6.06.2000
3. ՀՀ օրենքը «Մաքսավճարի մասին», 28.12.1998
4. ՀՀ օրենքը «Օտարերկրյա ներդրումների մասին», 31.08.1994
5. ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ ապրանքների (աշխատանքների և ծառայությունների) ներմուծման և արտահանման լիցենզավորման կարգի մասին», 17.01.1995
6. ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ արտադրական նշանակության սարքավորումների, մեքենաների և տեխնիկայի մյուս տեսակների արտահանումը կարգավորելու մասին», 10.09.1994
7. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը (1995-2002թթ.) հունվար-դեկտեմբերին, վիճակագրական ժողովածուներ, Եր., ՀՀ ՎՊՈՎՎ, 1995-1998, ՀՀ ԱՎԾ 1999-2002
8. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը, Եր., ՀՀ ՎՊՈՎՎ, 1995-1998, ՀՀ ԱՎԾ 1999-2002
9. Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը, 1996-1998, ՀՀ ՎՊՈՎՎ, 1997-2001, Եր., ՀՀ ԱՎԾ
10. Դարբինյան Ա.Վ., Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացում, Երևան, «Պետական ծառայություն», 2000
11. Հաստեղ Ս., Մելվին Մ. Միջազգային տնտեսագիտություն, հատոր 2, Միջազգային առևտուր, Երևան, «Գիտանք», 2001
12. Հովակիմյան Ա.Ս., Միջազգային տնտեսական հարաբերություններ, Երևան, «Հայաստան», 2002
13. Ղուշչյան Հ. Բ., Շուկայական տնտեսության ժամանակակից հարցերը, դասախոսություններ, Եր., «Տնտեսագետ», 1995
14. Մակրոտնտեսական կարգավորում, ուսումն. ձեռնարկ, գլխ. խմբագիր Ղուշչյան Հ. Բ., Եր., «Տնտեսագետ», 2003
15. Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ., Նազարյան Գ., Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Եր., «ԱՌՏ», 2002
16. Տիգրանյան Ի.Տ., ՀՀ արտաքին շուկաների ընդլայնման ուղիները, Պայմանագրային գիտահետազոտական աշխատանքների կատարման հաշվետվություն, ԵՊՏԻ, Երևան, 2000
17. Авдокушин Е.Ф., Международные экономические отношения, Москва, "Юрист", 1999
18. Буглай В.Б., Ливенцев Н.Н., Международные экономические отношения, Учебное пособие.-М., "Финансы и статистика", 1998
19. Киреев А.П., Международная экономика: Часть первая, международная микроэкономика: движение товаров и факторов производства, М., "Междун. отнош.", 1997
20. Линдерт П.Х., Экономика мирохозяйственных связей.- М.: Изд-во "Прогресс" Универс, 1992

21. Статистика международной торговли товарами: концепции и определения, методологическое исследования, ООН, Нью-Йорк, 2000
22. Терехов А.Б., Свобода торговли: анализ зарубежного опыта, изд. "Экономика", М., 1991
23. Bhagwati N. Export-Promoting Trade Strategy: Issues and Evidence, The World Bank Research Observer, Vol.3, N 1, Jan. 1988
24. Brander Y. Shaping Comparative Advantage: trade policy, industrial policy and economic performance, Toronto, Howe Institute, 1987
25. Haufbauer G. C., and Schott J.J. Economics Sanctions in Support of Foreign Policy Goals, MIT Press, Cambridge, Massachussetts, 1983
26. Krueger A. "Liberalization Attempts and Consequences", in Foreign Trade Regimes and Economic Development, vol.X , New York, National Bureau of Economic Research, 1978

Բովանդակություն

Թեմա 1. Արտաքին առևտրի պետական կարգավորումը 3

1.1. Արտաքին առևտրի պետական կարգավորման նպատակները, սկզբունքները և հիմնական ուղղությունները	3
1.2. Արտաքին առևտրի հիմնական տեսությունները	9
1.3. Արտաքին առևտրի ազատականացման դերը անցումային տնտեսության երկրներում	20
1.4. Արտաքին առևտրի պետական կարգավորման լծակները	25
1.5. Արտաքին առևտրի քաղաքականության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում	33
1.6. ՀՀ արտաքին առևտրի զարգացման դինամիկան	40

Թեմա 2. Վճարային հաշվեկշռի պետական կարգավորումը45

2.1. Վճարային հաշվեկշռի էությունը և կազմման սկզբունքները	45
2.2. Ընթացիկ գործառնությունների հաշվի մշակման սկզբունքները	52
2.3. Կապիտալի և ֆինանսական հաշվի մշակման սկզբունքները	56
2.4. Վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնական սկզբունքները	60
2.5. Ընթացիկ հաշվի և արժույթային փոխարժեքի փոխկապվածությունը	65
2.6. Վճարային հաշվեկշռի ընդհանուր հավասարակշռվածության ձևավորման պայմանները	71

Վճարային հաշվեկշռում կատարվող գործարքների գրանցման վերաբերյալ օրինակներ 75

Գրականության ցանկ 77

Կարեն Յանկետի Գրիգորյան

ՀՀ արտաքին առևտուրը և վճարային հաշվեկշիռը

(դասախոսություն)

Հրատ. խմբագիր՝ Ռ.Վարդանյան
Սրբագրիչ՝ Զ.Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ Ա.Մարգարյանի

Պատվեր՝ 27: Չափս՝ 60x84 1/16:
4,6 հեղ. մամուլ, 4,7 հրատ. մամուլ,
5 տպ. մամուլ, 4,63 տպ. պայմ. մամուլ:
Տպաքանակ՝ 300:

«Տնտեսագետ» հրատարակչություն
Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչության
տպագրական արտադրամասում
Երևան 25, Նալբանդյան, 128

2.1. Վճարային հաշվեկշռի էությունը և կազմման սկզբունքները

Երկրի բազմաբնույթ արտաքին տնտեսական գործառնություններն իրենց արտացոլումն են գտնում մի հաշվեկշռային հաշվարկում, որն ընդունված է ամվանել վճարային հաշվեկշիռ: Արժույթի միջազգային հիմնադրամի մեթոդաբանական ցուցումներում վճարային հաշվեկշիռը բնորոշվում է որպես հաշվետու երկրի ռեզիդենտների և մնացյալ աշխարհի ռեզիդենտների միջև տվյալ ժամանակահատվածում իրականացված բոլոր արտաքին տնտեսական գործառնությունների գումարային արդյունքների վիճակագրական հաշվետվություն: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական հրապարակումներում նշվում է. «Վճարային հաշվեկշիռն իրենից ներկայացնում է վիճակագրական հաշվետվություն, որում համակարգված տեսքով արտացոլվում են ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակաշրջանում (եռամսյակ, տարի) այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ»:

Վճարային հաշվեկշիռը կազմված է երկու հիմնական բաժիններից՝ ընթացիկ գործառնությունների հաշիվ կամ ընթացիկ հաշիվ և կապիտալի ու ֆինանսական հաշիվ:

Տվյալ երկրի արտաքին առևտրի հաշվեկշռի (ընթացիկ գործառնությունների հաշիվ) և կապիտալի շարժի հաշվեկշռի (կապիտալի և ֆինանսական հաշիվ) կապը բացահայտելու համար օգտվենք ազգային հաշիվների նույնության հավասարումից.

$$Y=C+I+G+NX$$

Եթե այս հավասարումը գրենք $Y-C-G=I+NX$ տեսքով, ապա պարզ կդառնա, որ երկրի ֆինանսական միջոցները կապվում են ապրանքների և ծառայությունների արտաքին առևտրի մնացորդի հետ: Այսպես, վերջին հավասարման ձախ մասը ցույց է տալիս երկրի ազգային խնայողությունը, որը պետական և մասնավոր խնայողությունների գումարն է: Պետական խնայողությունը կազմում է $T-G$, իսկ մասնավոր խնայողությունը՝ $Y-C-T$, իսկ այդ երկուսի գումարը կազմում է.

$$Y - C - G,$$

որը նշանակելով S -ով, $Y-C-G=I+NX$ հավասարումը կարող ենք գրել. $S = I + NX$ տեսքով, կամ $S - I = NX$:

Վերջին հավասարումը արտահայտում է կապիտալի շարժի մնացորդի և արտաքին առևտրի մնացորդի հավասարությունը: Այն հաճախ անվանում ենք նաև վճարային հաշվեկշռի հավասարում՝ նկատի

ունենալով, որ հավասարման ձախ մասը արտահայտում է կապիտալի և ֆինանսական հաշվի, իսկ աջ մասը՝ ընթացիկ հաշվի մնացորդը (այստեղ ընթացիկ հաշիվը հավասարեցված է զուտ արտահանմանը): Եթե կապիտալն ավելի շատ է հոսում երկիր, քան դուրս է հոսում երկրից, ապա երկրի խնայողության ծավալը փոքր է ներդրումների ծավալից, և կապիտալի հաշվի մնացորդը դրական է, այսինքն՝ $(I-S) > 0$: Դա նշանակում է, որ ընթացիկ հաշիվը բացասական մնացորդ ունի և $NX < 0$:

Եթե երկրի խնայողություններն ավելի մեծ են, քան կատարվող ներդրումները, ապա կապիտալը դուրս է հոսում երկրից: Այդ դեպքում կարելի է գրել, որ.

$$S = I + NFI,$$

որտեղ՝ NFI-ն օտարերկրյա զուտ ներդրումների մնացորդն է, այսինքն՝ մեր երկրի գործակալներն ավելի շատ ներդրումներ են կատարում այլ երկրներում, քան օտարերկրյա գործակալները մեր երկրում: Հետևաբար, կարելի է համոզվել նաև այն բանում, որ օտարերկրյա զուտ ներդրումների ծավալը հավասար է ընթացիկ հաշվի մնացորդին, քանի որ, եթե.

$$S = I + NX \text{ և } S = I + NFI$$

ապա՝


$$NFI = NX$$

Այս հավասարումը ցույց է տալիս, որ կապիտալի հաշվի և ընթացիկ հաշվի մնացորդներն արտահայտում են միևնույն մակրոտնտեսական երևույթի երկու կողմերը: Այսինքն, եթե ընթացիկ հաշվի մնացորդը բացասական է, ապա երկրի ազգային հարստության մի մասն անցնում է այլ երկրների գործակալներին, կամ երկիրը դառնում է պարտապան այլ երկրներին ու միջազգային կազմակերպություններին:

Հետևաբար, բաց տնտեսություն ունեցող երկիրը այլ երկրների հետ փոխհարաբերություններ է ստեղծում ոչ միայն ապրանքների ու ծառայությունների, այլև կապիտալի որոշակի հոսքերի տեսքով, որոնք էական ազդեցություն են գործում երկրի տնտեսական զարգացման վրա:

Ինչպես գիտենք, դրամի փոխարժեքի իջեցումը խթանում, իսկ բարձրացումը կաշկանդում է ապրանքների արտահանումը: Հակադարձ երևույթը նկատվում է ներմուծման համար, հետևաբար կարող ենք գրել, որ զուտ արտահանումը կախված է արժույթի իրական փոխարժեքից, այսինքն՝

$$NX = NX(E)$$



Եթե նկատի ունենանք, որ իրական փոխարժեքի բարձրացման դեպքում զուտ արտահանումը կրճատվում է, իսկ իջնելու դեպքում՝ ավելանում, ապա Օ կետից ծախս զուտ արտահանման ծավալը բացասական է, իսկ Օ-ից դեպի աջ՝ դրական:

Գծանկար 2. Զուտ արտահանման կախվածությունը արժույթի իրական փոխարժեքից


Արժույթի իրական փոխարժեքի վրա ազդում են երկու հիմնական գործոններ.

Նախ, այն փոփոխվում է վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի մնացորդի ազդեցությամբ: Որքան երկիրը ավելի շատ արտահանում է, քան ներմուծում, այնքան արտարժույթի առաջարկը մեծանում է, իսկ երկրի արժույթի իրական փոխարժեքը՝ բարձրանում: Դրա հետևանքով մեր ապրանքները դառնում են ավելի թանկ արտասահմանցիների համար, և զուտ արտահանումը կրճատվում է:

Երկրորդ գործոնը հանդես է գալիս կապիտալի շարժի մնացորդի ազդեցությամբ: Եթե վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի մնացորդները պետք է հավասարվեն, և մենք գիտենք, որ կապիտալի հաշվի մնացորդը խնայողության և ներդրումների տարբերությունն է, ապա պետք է դիտարկել նաև այն հանգամանքը, որ խնայողությունը որոշվում է սպառման ֆունկցիայով և հարկաբյուջետային քաղաքականությամբ, իսկ ներդրումները, համաշխարհային ֆինանսական շուկայի տոկոսադրույքից կախված՝ ներդրումների ֆունկցիայով: Այդ երկու խումբ գործոնների ազդեցությամբ ձևավորվում է արժույթի իրական փոխարժեքի մակարդակը (տես՝ գծն. 3):

Գծանկար 3-ը արտացոլում է արտարժույթի պահանջարկի և առաջարկի հավասարակշռվածության մեխանիզմը: Խնայողության և ներդրումների տարբերությունը դրամի այն քանակությունն է, որն անհրաժեշտ է արտարժույթով փոխանակելու և այլ երկրներից ապրանքներ գնելու համար: Քանի որ ՀՀ-ում այդ տարբերությունը բացասական է, նշանակում է՝ անհրաժեշտ է համաշխարհային ֆինանսական շուկայից կամ այլ աղբյուրներից այնքան արտարժույթ պարտք վերցնել,

որ հնարավոր լինի չեզոքացնել արտաքին առևտրի հաշվեկշռի բացասական մնացորդը:



Ուղղահայաց գիծը պատկերում է խնայողության և ներդրումների տարբերությունը, իսկ թեք, ներքև իջած գիծը զուտ արտահանման ֆունկցիան՝ կախված արժույթի փոխարժեքից: Դրանց հատման կետը ցույց է տալիս այն հավասարակշիռ փոխարժեքը (E^), որն ապահովում է կապիտալի շարժի այնպիսի մնացորդ, որն անհրաժեշտ է ընթացիկ հաշվի մնացորդը ծածկելու համար:*

Գծանկար 3. Արժույթի իրական փոխարժեքը որոշող գործոնները

Գծանկար 3-ը ցույց է տալիս նաև, որ որոշակի քաղաքականությամբ ազդելով արժույթի իրական փոխարժեքի վրա՝ կարող ենք ազդել նաև վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի մնացորդների վրա:

Բաց տնտեսության մակրոտնտեսական ցուցանիշների միջև կապերը ավելի լավ պատկերացնելու համար ներկայացնենք դրա մյուս հիմնական նույնությունները:

Բաց տնտեսությունում համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) փակ տնտեսության համանուն ցուցանիշից տարբերվում է ներմուծման ու արտահանման հոսքերի միջոցով:

$$GDP = C + I + G + X - M$$

որտեղ՝

GDP -ն ՀՆԱ-ն է,

M -ը՝ ապրանքների ու ոչ գործոնային ծառայությունների ներմուծումը,

X -ը՝ ապրանքների ու ոչ գործոնային ծառայությունների արտահանումը,

C -ն՝ ներքին սպառումը, I -ն՝ ներքին ներդրումները, G -ն՝ պետական գնումները:

Սակայն, բացի ապրանքների ու ծառայությունների ներմուծումից ու արտահանումից, բաց տնտեսությունում առկա են նաև եկամուտների հոսքեր ու տրամաֆերտներ: Վերջիններիս հաշվառման նպատակով էլ Ազգային հաշիվների համակարգում ներառված են համախառն

ազգային եկամտի և տնօրինվող համախառն ազգային եկամտի ցուցանիշները:

Համախառն ազգային եկամուտը (ՀԱԵ) հավասար է ՀՆԱ-ին՝ հանած ոչ ռեզիդենտներին վճարված և գումարած ոչ ռեզիդենտներից ստացված գործոնային եկամուտները.

$$GNI = GDP + Y_f$$

որտեղ՝

Y_f -ը զուտ գործոնային եկամուտն է: Ի տարբերություն ՀՆԱ-ի, որը և՛ եկամտի, և՛ արտադրության ցուցանիշ է, ՀԱԵ-ն միայն եկամտի ցուցանիշ է:

Տնօրինվող համախառն ազգային եկամուտը հավասար է ՀԱԵ-ի և արտասահմանից ստացված զուտ տրանսֆերտների գումարին.

$$GNDI = GNI + TR$$

Վճարային հաշվեկշռի և ազգային հաշիվների միջև փոխկապվածությունը արտահայտվում է ընթացիկ հաշվի (CAB) և համախառն ազգային տնօրինվող եկամտի (GNDI) միջև առկա վիճակագրական կապով:

Քանի որ $GNDI = C + I + G + (X - M + Y_f + TR)$, ապա.

$$GNDI - C - I - G = CAB$$

Այս հավասարումը ցույց է տալիս, որ երբ երկիրը սպառում է ավելին, քան իր տնօրինվող եկամուտն է, ապա ձևավորվում է ընթացիկ հաշվի պակասուրդ: Հետևաբար, ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատման համար երկիրը պետք է կամ մեծացնի իր տնօրինվող եկամուտը, կամ կրճատի սպառումը:

Վճարային հաշվեկշռի և ազգային հաշիվների միջև կապի արտացոլման երկրորդ տարբերակը ներհուսք - արտահուսք համադրումն է: Եթե համախառն ազգային եկամտից հանենք հարկերը, ապա կստացվի փաստացի տնօրինվող համախառն ազգային եկամուտը:

$$GNADI = C + I + G + (X - M + Y_f + TR) - T$$

$$GNADI - C = I + CAB + (G - T)$$

Քանի որ փաստացի տնօրինվող համախառն ազգային եկամտի և սպառման տարբերությունը կազմում է մասնավոր խնայողությունը (S), ապա.

$$CAB = (S - I) + (T - G)$$

Այսինքն՝ ընթացիկ հաշվի պակասուրդը հավասար է մասնավոր հատվածի զուտ խնայողությունների և պետական բյուջեի հավելուրդի գումարին:

Վճարային հաշվեկշռը կազմելիս օգտագործում ենք որոշակի սկզբունքներ և հասկացություններ:

Վճարային հաշվեկշռում գործարքները գրանցելիս տարբերում ենք երկրի *ռեզիդենտ /գործակալ/* և *ոչ ռեզիդենտ* հասկացությունները:

վճարային հաշվեկշռի մեթոդաբանությամբ՝ տնտեսավարող սուբյեկտը համարվում է այն երկրի ռեզիդենտ, որում գտնվում է իր տնտեսական շահերի կենտրոնը՝ անկախ քաղաքացիությունից: Մասնավորապես.

- *Անհատը կամ տնային տնտեսությունը* համարվում է այն երկրի ռեզիդենտ, որտեղ բնակվում է առնվազն 12 ամիս (ՀՀ օրենսդրությամբ՝ առնվազն 183 օր): Ոչ ռեզիդենտ են համարվում այցելուները (զբոսաշրջիկներ, նավերի ու օդանավերի անձնակազմ, սեզոնային աշխատողներ), հարևան երկրում բնակվող ու սահմանամերձ տարածքում աշխատողները, ինչպես նաև դիվանագետները ու այլ երկրների զինված ուժերի ներկայացուցիչները՝ անկախ տվյալ երկրում գտնվելու տևողությունից:

- *Ձեռնարկությունը* համարվում է այն երկրի ռեզիդենտ, որում իրականացնում է ապրանքների ու ծառայությունների արտադրություն և՛ կամ տնօրինում է հող կամ շինություններ: Ձեռնարկությունը պետք է այդ երկրում ունենա առնվազն մեկ արտադրական հաստատություն, որը նախատեսում է շահագործել անորոշ կամ երկար ժամանակով: Բազմազգային ընկերությունների մասնաձյուղերը համարվում են հյուրընկալ երկրի ռեզիդենտ:

- *Պետական հաստատությունները*՝ ներառյալ կենտրոնական և տեղական կառավարման մարմինները, այդ թվում՝ արտասահմանում գտնվող դեսպանատները, ներկայացուցչությունները և զինված ուժերը համարվում են համապատասխան երկրի ռեզիդենտ:

վճարային հաշվեկշռում ապրանքների արտահանման և ներմուծման համադրելիությունն ապահովելու նպատակով դրանք հաշվարկվում են FOB¹ գներով, որոնք չեն ներառում ապրանքի տրանսպորտային փոխադրման և ապահովագրման արժեքները: Վերջիններս ներառվում են «Ծառայություններ» հոդվածում: Գործարքները գրանցվում են տվյալ երկրի ազգային արժույթով կամ, ինչպես սովորաբար կատարվում է, ԱՄՆ դոլարով՝ ազգային արժույթի և դոլարի փոխարժեքի հիման վրա:

Գործարքը կարող է վճարային հաշվեկշռում գրանցվել, երբ առևտրային պայմանագիրը կնքվում է կամ երբ ավարտվում է ապրանքների բեռնաթափումը և իրականացվում են մաքսային բոլոր ձևակերպումները:

վճարային հաշվեկշռի կազմման հիմքում *կրկնակի գրանցման* վիճակագրական սկզբունքն է, ըստ որի՝ յուրաքանչյուր գործարք գրանցվում է երկու, բացարձակ արժեքով հավասար, բայց հակառակ նշանով գրառումներով: Կրկնակի հաշվառման շնորհիվ բոլոր դեբե-

¹ FOB (Free On Board) - արտահանողը (վաճառողը) պարտավոր է իր հաշվին առաքել ապրանքը պայմանագրում նշված նավահանգիստ, իրականացնել մաքսային ձևակերպումները և ապրանքի բեռնումը գնորդի կողմից վարձված նավի վրա:

տային գրառումների գումարը բացարձակ արժեքով պետք է հավասար լինի բոլոր կրեդիտային գրառումների գումարին, իսկ դրանց հանրագումարը պետք է հավասար լինի գրոյի: Այդ տեսանկյունից վճարային հաշվեկշիռը միշտ հավասարակշռված է:

Աղյուսակ 5

Դեբետային և կրեդիտային գործարքները վճարային հաշվեկշռում

Գործարքի տեսակը	Գործարքների գրառումները	Գրանցման նշանը
Ապրանքների ու ծառայությունների արտահանում	Կրեդիտ	+
Ապրանքների ու ծառայությունների ներմուծում	Դեբետ	-
Արտաքին ֆինանսական պարտավորությունների ավելացում	Կրեդիտ	+
Արտաքին ֆինանսական պարտավորությունների կրճատում	Դեբետ	-
Արտաքին ֆինանսական ակտիվների կրճատում	Կրեդիտ	+
Արտաքին ֆինանսական ակտիվների ավելացում	Դեբետ	-

Վճարային հաշվեկշռում առանձնացվում են երկու բնույթի գործարքներ՝ իրական և ֆինանսական հոսքեր: Իրական հոսքերը ներառում են ինչպես ապրանքների ու ծառայությունների արտահանումը և ներմուծումը, այնպես էլ ուղևորությունները, բեռնափոխադրումները, ապահովագրությունը և այլն: Ֆինանսական հոսք են ակտիվների ու պարտավորությունների փոփոխությունները, ինչպես, օրինակ, վարկի մայր գումարի մարումը, օտարերկրյա ներդրումների ներգրավումը: Իրական գործարքները գրանցվում են ընթացիկ հաշվում, իսկ ֆինանսական գործարքները՝ կապիտալի ու ֆինանսական հաշվում:

Վճարային հաշվեկշռում ներառվում են նաև *տրանսֆերտները*, որոնք համարժեք ֆինանսական փոխհատուցում չեն ենթադրում: Նմանօրինակ գործարքները գրանցվում են «Ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածում՝ պահպանելով կրկնակի հաշվառման սկզբունքը: Այսպես, օրինակ, երբ Չինաստանի կառավարությունը Հայաստանին նվիրում է հացահատիկ, ապա այն ՀՀ վճարային հաշվեկշռում գրանցվում է իբրև ներմուծում (դեբետ), որի դիմաց «վճարվել է» տրանսֆերտով (կրեդիտ):

Տեսականորեն վճարային հաշվեկշիռը պետք է միշտ հավասարակշռված լինի, այնուամենայնիվ, գործնականում դա տեղի չի ունենում, քանի որ գործարքների վերաբերյալ տվյալները հավաքվում են տարբեր աղբյուրներից, շատ գործարքներ մաքսային մարմիններից թաքց-

վում են, որոշ գործարքներ թերհաշվառվում են և այլն: Այդ պատճառով վճարային հաշվեկշռում նախատեսված է «*զուտ սխալներ և բացթողումներ*» հոդվածը: Ընդ որում, քանի որ սխալներն ու բացթողումները կարող են հակակշռել միմյանց, ապա սույն հոդվածի մեծությու-
նը չի կարող վճարային հաշվեկշռի կազմման ճշգրտության հիմնավոր չափանիշ հանդիսանալ:

Վճարային հաշվեկշիռը կազմվում է տնտեսական *հոսքերից*, որոշակի ժամանակահատվածի համար: Դրա փոխարեն երկրի միջազգային ներդրումային դիրքը հաշվարկվում է իբրև *պաշար*՝ ժամանակի որոշակի պահի համար: Միջազգային ներդրումային դիրքը (ՄՆԴ) իրենից ներկայացնում է վիճակագրական հաշվետվություն, որտեղ արտացոլվում է երկրի ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարների մակարդակը որևէ ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ: Միաժամանակ, հաշվետվությունում, ի տարբերություն վճարային հաշվեկշռի, արտացոլվում են այն բոլոր փոփոխությունները, որոնք կատարվել են ուսումնասիրվող ժամանակահատվածում ֆինանսական գործառնությունների, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների արդյունքում: Վերջինս արտահայտում է այլ երկրներին ներկայացվող կուտակային պահանջները և դրանց նկատմամբ ստանձնած կուտակային պարտավորությունները: ՄՆԴ-ն կազմված է երկու մասից՝ ակտիվներից (ուղղակի ներդրումներ արտերկրներ, պորտֆելային ներդրումներ, այլ ներդրումներ, պահուստային ակտիվներ) և պարտավորություններից (ուղղակի ներդրումներ արտերկրներից, պորտֆելային ներդրումներ, այլ ներդրումներ): Ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների տարբերությունը ցույց է տալիս տնտեսության զուտ միջազգային ներդրումային դիրքը: Բնականաբար վճարային հաշվեկշռի գործառնություններն իրենց ազդեցությունն են ունենում ՄՆԴ-ում արտացոլված պաշարների վրա:

Վճարային հաշվեկշռի առանձին մասերը մշակվում են որոշակի սկզբունքներով:

2.2. Ընթացիկ գործառնությունների հաշվի մշակման սկզբունքները

Վճարային հաշվեկշռի ընթացիկ գործառնությունների կամ կարճ ընթացիկ հաշվում ներառվում են. ա) ապրանքների, բ) ծառայությունների, գ) եկամուտների, դ) ընթացիկ տրանսֆերտների հաշիվները: Ընթացիկ հաշվում հաշիվները հաշվարկվում են *ընդամենը* դեբետ կամ կրեդիտ սկզբունքով:

Ընթացիկ հաշվի այդ 4 հիմնական մասերը ներկայացնենք իրենց հոդվածներով.

ա. Ապրանքներ, այդ թվում՝

➤ Ընդհանուր ապրանքներ - տեղափոխման ենթակա բոլոր ապրանքները, որոնք ռեզիդենտները արտահանում կամ ներմուծում են ոչ ռեզիդենտներից, և որոնց նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է:

➤ Ապրանքներ վերամշակման համար - արտասահմանում (հաշվետու երկրում) վերամշակման և հետագա վերաներմուծման (վերաարտահանման) նպատակով արտահանվող (ներմուծվող) ապրանքներ, որոնց արժեքը որոշվում է «Ընդամենը» սկզբունքով՝ վերամշակումից առաջ և հետո:

➤ Ապրանքներ վերանորոգման համար - նավերի, օդանավերի և այլնի վրա ոչ ռեզիդենտների համար կամ նրանց կողմից ապրանքների վերանորոգում: Ի տարբերություն վերամշակման, արժեքը որոշվում է վերանորոգման նպատակով կատարված կամ ստացված վնարումներով և ոչ թե «Ընդամենը» սկզբունքով՝ վերանորոգումից առաջ և հետո:

➤ Ապրանքներ, որոնք ձեռք են բերվել տրանսպորտային կայաններում - ռեզիդենտ (ոչ ռեզիդենտ) փոխադրողներին (նավ, օդանավ և այլն) արտասահմանում (հաշվետու երկրում) մատակարարված ապրանքներ (վառելիք, սննդամթերք և այլն):

➤ Ոչ մոնետար ոսկի - իբրև պահուստ չօգտագործվող ոսկու արտահանումը և ներմուծումը:

բ. Ծառայություններ, այդ թվում՝

➤ Տրանսպորտային ծառայությունների՝ ռեզիդենտ (ոչ ռեզիդենտ) տրանսպորտային ընկերության կողմից բեռների և ուղևորների տեղափոխման ծառայությունների մատուցում ոչ ռեզիդենտին (ռեզիդենտին) տրանսպորտի բոլոր տեսակներով՝ ծովային, երկաթուղային, օդային, խողովակաշարային և այլն, ինչպես նաև օժանդակ ծառայությունների մատուցում՝ տրանսպորտային միջոցների վարձակալում անձնակազմով, բեռների պահպանում, փաթեթավորում, տրանսպորտային միջոցների ուղեկցում և հավաքում:

➤ Ճանապարհորդություն - ոչ ռեզիդենտ ճանապարհորդի կողմից գործարար կամ անձնական նպատակով այցելության (մեկ տարուց պակաս) ընթացքում հաշվետու երկրում ձեռք բերված ապրանքներ ու ծառայություններ՝ ներառյալ առողջական և կրթական նպատակներով: «Ճանապարհորդությունը» չի ներառում միջազգային ուղևորներին մատուցվող տրանսպորտային ծառայությունը, քանի որ այն ներառվում է «Տրանսպորտային ծառայություններ» հոդվածում:

Առողջության և կրթության հետ կապված դեպքերում անձը համարվում է ճանապարհորդ՝ անկախ տվյալ երկրում գտնվելու ժամանակից:

➤ Կապի ծառայություններ - փոստային, սուրհանդակային և տեսահաղորդակցական (ձայնի, պատկերի և այլ տեղեկատվության փոխանցում) ծառայություններ ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև:

➤ Շինարարական ծառայություններ - շինարարական կամ տեղակայման ծառայություններ, որոնք իրականացվում են արտասահմանում (հաշվետու երկրում) ռեզիդենտ (ոչ ռեզիդենտ) ձեռնարկության կողմից:

➤ Ապահովագրական ծառայություններ - ոչ ռեզիդենտին ռեզիդենտ ապահովագրական ընկերության կողմից (և հակառակը) տրամադրատային, կյանքի և այլ ապահովագրական ծառայությունների մատուցում:

➤ Ֆինանսական ծառայություններ - ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև ֆինանսական միջնորդության ծառայություններ՝ կապված ակրեդիտիվի բացման, արտարժույթի փոխանակման, ֆինանսական լիզինգի, վարկերի տրամադրման և բրոկերային ծառայությունների մատուցման հետ:

➤ Համակարգչային կամ տեղեկատվական ծառայություններ - ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև մասնագիտական համակարգչային ծառայությունների (խորհրդատվություն, ծրագրային ապահովման մշակում), տվյալների մշակման և ցանցային ծառայությունների ու էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների (տվյալների տրամադրում ֆինանսական կառավարման, հետազոտությունների, մարքեթինգի, գնումների նպատակով, ինչպես նաև էլեկտրոնային առևտուր ու ինտերնետային տեղեկատվական ծառայություններ) մատուցում:

➤ Արտոնագրային վճարներ և հեղինակային հոնորարներ - ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև կատարված (ներմուծում) և ստացված (արտահանում) վճարումներ. ա) ոչ շոշափելի, չարտադրված, ոչ ֆինանսական ակտիվների և հեղինակային իրավունքների արտոնագրված օգտագործման և բ) արտադրված բնօրինակների կամ կրկնօրինակների պայմանագրային սկզբունքով օգտագործման համար:

➤ Այլ գործնական ծառայություններ - ռեզիդենտի կողմից ոչ ռեզիդենտին (և հակառակը) գործառնական լիզինգի, ինչպես նաև այլ գործնական, մասնագիտական, տեխնիկական ծառայությունների մատուցում (իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, հարկային խորհրդատվություն, կառավարման խորհրդատվություն, հասարակության հետ հարաբերություններ, գովազդ, շուկայի ուսումնասիրում, հասարակական կարծիքի հետազոտում, գիտատեխնիկական հետազոտություններ, ճարտարապետական, ինժեներական ու այլ

տեխնիկական ծառայություններ, հանքարդյունաբերության և արտադրանքի վերամշակման ծառայություններ, թափոնների մշակում և մաքրում):

➤ Անձնական, մշակույթի և հանգստի ծառայություններ - ռեզիդենտի կողմից ոչ ռեզիդենտին (և հակառակը) ռադիո- և հեռուստատեսային ծառայությունների (ֆիլմերի, ռադիո- և հեռուստատեսային հաղորդումների, ծայնագրությունների հետ կապված ծառայություններ, օրինակ, դերասանների կամ պրոդյուսերների կողմից օգտագործման իրավունքի վաճառքից ստացված վճարները) և այլ անձնական, մշակութային ու հանգստի ծառայությունների (ինչպես, օրինակ, կապված գրադարանների, թանգարանների հետ) մատուցում:

➤ Պետական ծառայություններ - ներառում է պետական ոլորտի հետ կապված բոլոր ծառայությունները (որոնք ներառված չեն այլ հոդվածներում), ինչպես օրինակ, դեսպանատների և հյուպատոսությունների, ռազմական միավորումների, ներկայացուցչությունների հետ կապված ծառայությունները:

Նշենք, որ ընթացիկ հաշվի մեջ ապրանքների և ծառայությունների արտահանումը և ներմուծումը ներկայացնում են երկրի առևտրային հաշվեկշիռը, որը հաճախ օգտագործվում է երկրի տնտեսական զարգացման և մյուս երկրների նկատմամբ նրա տնտեսական ինքնուրույնության աստիճանը բնութագրելիս:

գ. Եկամուտներ, որոնք դասակարգվում են երկու հիմնական խմբի՝ աշխատողների վարձատրություն և եկամուտներ ներդրումներից:

➤ Աշխատողների վարձատրությունը ներառում է սահմանային, սեզոնային և այլ ոչ ռեզիդենտ աշխատողներին վճարված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները՝ կատարված կանխիկ կամ բնեղեն ձևով:

➤ Ներդրումներից եկամուտները ներառում են ռեզիդենտի կողմից արտաքին ֆինանսական ակտիվների տնօրինման դիմաց ստացված եկամուտները և ոչ ռեզիդենտի նկատմամբ ռեզիդենտի ունեցած պարտավորությունների դիմաց վճարված եկամուտները: Ներդրումներից եկամուտները ստորաբաժանվում են ուղղակի ներդրումներից, պորտֆելային ներդրումներից և այլ ներդրումներից եկամուտների:

➤ Ուղղակի ներդրումներից եկամուտները բաժանվում են կապիտալի մասնակցությունից եկամուտների (շահաբաժին, մասնաճյուղի եկամուտ, վերաներդրված եկամուտ) և պարտքի հանձնառության եկամուտների (միջֆիրմային պարտքի տոկոսավճարներ), որոնք ձևավորվում են ուղղակի ներդրողին սեփականության իրավունքով այլ երկրի ձեռնարկությունում պատկանող ուղղակի ներդրումային կապիտալից:

➤ Պորտֆելային ներդրումներից եկամուտները ներառում են ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև եկամուտների հետ կապված գոր-

ծառքները և ձևավորվում են բաժնետոմսերի, պարտատոմսերի ու պարտամուրհակների և ֆինանսական այլ տեսակի արժեթղթերի տնօրինումից: Բաժանվում են կապիտալի մասնակցությունից եկամուտների և պարտքի հանձնառության եկամուտների:

➤ Այլ ներդրումներից եկամուտները ներառում են ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև բոլոր մնացյալ պարտավորությունների ու պահանջների հետ կապված տոկոսավճարները, որոնք վերաբերում են երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերին, ավանդներին, այլ առևտրային ու ֆինանսական պահանջներին:

դ. Ընթացիկ տրանսֆերտներ

Ընթացիկ տրանսֆերտները ներառում են պետական կառավարման մարմինների միջպետական նվիրատվությունները, տեխնիկական, մարդասիրական, ֆինանսական օգնությունը և աշխատողների դրամական փոխանցումները, այդ թվում՝ սփյուռքից ստացվող տրանսֆերտները:

Արտասահմանում աշխատող էմիգրանտի փոխանցումները համարվում են տրանսֆերտ միայն այն դեպքում, երբ էմիգրանտը դարձել է այն երկրի ռեզիդենտ, որտեղ աշխատում է: Հակառակ դեպքում, եթե էմիգրանտը շարունակում է մնալ ծագման երկրի ռեզիդենտ, ապա նրա փոխանցումները գրանցվում են «Գործոնային եկամուտներ» հոդվածում:

2.3. Կապիտալի և ֆինանսական հաշվի մշակման սկզբունքները

Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվում ընդգրկված ապրանքների և ծառայությունների միջազգային հոսքերը պետք է որևէ ճանապարհով ֆինանսավորվեն: Այդ ֆինանսավորումը ցույց է տրվում կապիտալի և ֆինանսական հաշվում, որն իր հերթին ստորաբաժանվում է երկու հաշիվների՝ *կապիտալի հաշիվ* և *ֆինանսական հաշիվ*: Կապիտալի հաշիվը ներառում է կապիտալ տրանսֆերտների վճարման և ստացման ու չարտադրված, ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերման և տրամադրման հետ կապված գործարքները: Ֆինանսական հաշիվը ընդգրկում է արտաքին ֆինանսական ակտիվների և պարտավորությունների նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխման հետ կապված գործարքները: Կապիտալի և ֆինանսական հաշվում հաշիվների զգալի մասը հաշվարկվում է *զուտ* սկզբունքով, այսինքն՝ միայն դեբետ կամ կրեդիտ:

Կապիտալի հաշվում ոչ դրամական ձևով իրականացվող տրանսֆերտները որակվում են իբրև կապիտալ տրանսֆերտ այն դեպքում,

երբ տեղի է ունենում [1] հաստատագրված ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխություն, [2] պարտատուի կողմից պարտքի ներում: Դրամական ձևով իրականացման դեպքում տրանսֆերտը որակվում է կապիտալ տրանսֆերտ, երբ կապված է հաստատագրված ակտիվի ձեռքբերման կամ տրամադրման հետ, ինչպես, օրինակ, ներդրումային դրամաշնորհների դեպքում: Այսինքն՝ կապիտալ տրանսֆերտը անպայման պետք է հանգեցնի գործարքի մասնակից կողմերից առնվազն մեկի ակտիվների պաշարի փոփոխությանը:

Ըստ տնտեսության հատվածների՝ պետական հատվածին առնչվող կապիտալ տրանսֆերտներ են (ա) արտաքին պարտքի ներումը, (բ) ներդրումային դրամաշնորհների տրամադրումը, (գ) ռազմական հեճակայանների փոխանցումը և այլն:

Մասնավոր հատվածին առնչվող կապիտալ տրանսֆերտներ են էմիգրանտների տրանսֆերտները, երբ էմիգրացիայի արդյունքում տեղի է ունենում ապրանքների հոսք կամ ֆինանսական ակտիվների սեփականատիրոջ ռեզիդենտության փոփոխում: Վերջին դեպքում հաշվետու երկրի այն ձեռնարկությունները, որոնց բաժնեմասը տնօրինում են այդ երկրից հեռացած էմիգրանտները, դառնում են մյուս երկրի արտաքին ֆինանսական ակտիվներ: Նման փոփոխություն տեղի է ունենում նաև էմիգրանտների պարտավորությունների դեպքում:

Չարտադրված, ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերումը կամ տրամադրումը կապված է [1] շոշափելի ակտիվների հետ, որոնք կարող են օգտագործվել կամ անհրաժեշտ են ապրանքների ու ծառայությունների արտադրման համար, սակայն փաստացի չեն արտադրվել, որպիսիք են հողը և հումքային ռեսուրսները, ինչպես նաև [2] չարտադրված, ոչ շոշափելի ակտիվների հետ, որպիսիք են արտոնագրի, հեղինակային իրավունքի, առևտրային նիշի, ֆրանչայզի, լիցենզիայի գնումը: Չարտադրված, ոչ շոշափելի ակտիվների դեպքում անհրաժեշտ է տարբերակել այդ ակտիվների օգտագործման իրավունքի գնումը դրանց նկատմամբ սեփականության իրավունքի գնումից: Օգտագործման իրավունքի դեպքում դրանք գրանցվում են ծառայությունների հաշվում և միայն սեփականության իրավունքի գնման դեպքում՝ կապիտալի հաշվում:

Ֆինանսական հաշվում արտացոլվող գործարքների դասակարգման հիմքը ֆունկցիոնալ կատեգորիաներն են, որոնցից են՝ ա) ուղղակի ներդրումները, բ) պորտֆելային ներդրումները, գ) այլ ներդրումները, դ) պահուստային ակտիվները:

➤ *Ուղղակի ներդրումները* միջազգային ներդրումների այնպիսի կատեգորիա են, որոնց դեպքում մեկ տնտեսության կառուցվածքային միավորը նպատակ է հետապնդում ձեռք բերել երկարաժամկետ շահ մեկ այլ տնտեսության կառուցվածքային միավորում: Երկարատև

շահը ենթադրում է ուղղակի ներդրողի ու ուղղակի ներդրման օբյեկտ հանդիսացող ձեռնարկության միջև երկարաժամկետ հարաբերությունների առկայություն և ներդրողի կողմից ձեռնարկության կառավարման վրա նշանակալի ազդեցություն: Որպես ուղղակի ներդրում որակվելու ձևական չափանիշ վճարային հաշվեկշռում կիրառվում է ձեռնարկության առնվազն 10% բաժնետոմսերը (կամ դրա համարժեքը) տնօրինելու հանգամանքը:

➤ *Պորտֆելային ներդրումների* դեպքում ներդրողը չունի ձեռնարկության գործունեության վրա ներգործելու բավարար ազդեցության և առավելապես հետաքրքրված է իր կապիտալի ապահովվածությամբ, դրա արժեքի մեծացմամբ և համապատասխան հատույցի ստացմամբ: Պորտֆելային ներդրումները գլխավորապես իրականացվում են *կապիտալի բաժնետոմսերի և պարտքի արժեթղթերի* միջոցով:

➤ *Կապիտալի բաժնետոմսերը* փաստում են ձեռնարկության կապիտալում մասնակցությունը, իսկ *պարտքի արժեթղթերը*՝ վարկատուի իրավունքը՝ պարտատուից պահանջելու պարտքի մարումը: Պարտքի արժեթղթերը ներառում են *պարտատոմսերը, պարտամուրհակները, դրամական շուկայի գործիքները*, որոնք շրջանառում են կազմակերպված շուկաներում, ինչպես օրինակ՝ պետական գանձապետական մուրհակները, բանկային ակցիատները, ավանդային սերտիֆիկատները և ֆինանսական ածանցյալները (օպցիոն, ֆորվարդ, ֆյուչերս, սվոպ):

➤ *Այլ ներդրումները* գլխավորապես ներառում են երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերը, կանխիկը դրամը և ավանդները:

➤ *Պահուստային ակտիվները* բաղկացած են բարձր իրացվելիություն ունեցող այն արտաքին ակտիվներից, որոնք անմիջականորեն գտնվում են Կենտրոնական բանկի վերահսկողության ներքո ու կարող են օգտագործվել վճարային հաշվեկշռի պակասուրդի ֆինանսավորման, արտարժույթի շուկայում ինտերվենցիայի իրականացման կամ այլ համանման նպատակներով: Իրենց կառուցվածքով պահուստային ակտիվները բաղկացած են մոնետար ոսկուց, Զատուկ փոխառության իրավունքի համակարգի (ՅՓԻ՝ SDR) մեջ մտնող արտարժույթներից, Միջազգային արժութային հիմնադրամի պահուստներից, այլ արտարժութային ակտիվներից և այլն:

ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական հոդվածներն իրենց մնացորդներով բերված են աղյուսակ 6-ում:

ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշների դինամիկան 1997-2003թթ. (մլն ԱՄՆ դոլար)

	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Վճարային հաշվեկշիռ							
<i>Ընթացիկ հաշիվ</i>	-306.5	-402.9	-306.9	-278.3	-200.4	-148.0	-190.5
Ապրանքներ	-559.4	-577.4	-473.9	-463.5	-420.2	-368.8	-434.8
Ծառայություններ	-62.8	-63.2	-62.0	-55.8	-17.7	-40.7	-68.3
Եկամուտներ	98.5	60.4	54.9	52.9	63.5	88.1	93.3
Ընթացիկ տրանսֆերտներ	217.2	177.4	174.1	188.1	173.9	173.3	218.4
<i>Կապիտալի և ֆինանսական հաշիվ</i>	298.3	399.3	294.5	261.4	188.9	152.0	192.0
Կապիտալի հաշիվ	10.8	9.7	12.5	28.3	30.1	68.1	89.9
Ֆինանսական հաշիվ	287.4	389.6	281.9	233.0	158.8	83.9	102.1
<i>Պահուստային ակտիվներ</i>	-71.0	-52.5	-20.6	-19.2	-19.7	-81.6	-46.3
<i>Զուտ սխալներ և բացթողումներ</i>	8.3	3.6	12.5	17.0	11.5	-4.1	-1.5

Մեթոդական առումով վճարային հաշվեկշիռը մշտապես հավասարակշռված է, քանի որ գործում է կրկնակի գրանցման հաշվապահական սկզբունքը, այսինքն՝ ընթացիկ հաշվի մնացորդը բացարձակ մեծությամբ և հակառակ նշանով պետք է հավասար լինի կապիտալի և ֆինանսական հաշվի մնացորդին: Սակայն, իրականում վճարային հաշվեկշռի առանձին ենթահաշիվները, մասնավորապես՝ ընթացիկ հաշիվը ու կապիտալի և ֆինանսական հաշիվը հազվադեպ են հավասարակշռվում: Ուստի վճարային հաշվեկշռի հավելուրդի կամ պակասուրդի մասին խոսելիս սովորաբար նկատի է առնվում հենց ենթահաշիվների հավելուրդը կամ պակասուրդը:

Վճարային հաշվեկշռի մնացորդը հաշվում են ընդհանուր ճանաչում գտած մի մեթոդով, որի էությունն այն է, որ հաշվեկշիռը բաժանում են հիմնական և հաշվեկշռող հաշիվների: Հիմնական հոդվածների մնացորդն անվանում են «Վճարային հաշվեկշռի մնացորդ», և կախված այն բանից՝ դրական է այն, թե բացասական, վճարային հաշվեկշիռը լինում է հավելուրդով կամ պակասուրդով և ծածկվում է հաշվեկշռող հաշիվների միջոցով: Վերջիններս ուղղակիորեն կապված են հիմնական հաշիվների վճարումների հավելուրդի կամ պակասուրդի վերացման հետ, ինչպես օրինակ՝ պահուստային ակտիվները:

Վճարային հաշվեկշռի մնացորդը մեծ նշանակություն ունի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին տնտեսական քաղաքականության մշակման գործում: Այն կառուցվածքային ցուցանիշ է, որի մեծությունը կախված է ընտրվող հաշիվներից: Վերջիններս ընտրվում են ոչ թե

պատահականորեն, այլ որոշակի վերլուծության արդյունքում: Ներկայումս համաշխարհային պրակտիկայում առավել ընդունված է վճարային հաշվեկշռի մնացորդ համարել ընթացիկ գործառնությունների հաշվի մնացորդը: Այդ հաշվի պակասուրդը համարվում է ոչ ցանկալի և սովորաբար զնախատվում է որպես երկրի թույլ միջազգային տնտեսական կապերի բնութագիր, սակայն դա առավելապես վերաբերում է զարգացող երկրներին, որոնք մշտապես ֆինանսական մուտքերի պակաս ունեն: Պակասուրդի ծածկման համար երկիրը կարող է օգտագործել պահուստային ակտիվները, ստանալ վարկեր, արժեզրկել ազգային արժույթը և այլն:

2.4. Վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնական սկզբունքները

Վճարային հաշվեկշռը փոխադարձ կապի մեջ է վերարտադրության հետ: Մի կողմից՝ այն կախված է վերարտադրությունում առկա գործընթացներից, մյուս կողմից՝ ներգործում է դրանց վրա, քանի որ ազդում է արժույթի փոխարժեքի, ոսկե-արժութային պաշարների, արտաքին պարտքի, տնտեսության զարգացման ուղղվածության վրա:

Վճարային հաշվեկշռում արտացոլվում են.

- տնտեսության կառուցվածքային անհամաձայնությունները, որոնք որոշում են ապրանքների, ծառայությունների և կապիտալի արտահանման հնարավորությունները և ներմուծման նկատմամբ պահանջարկը,

- տնտեսության շուկայական և պետական կարգավորման հարաբերակցության փոփոխությունը,

- իրավիճակային գործոնները (միջազգային մրցակցության մակարդակը, արժույթի փոխարժեքի փոփոխությունը և այլն):

Վճարային հաշվեկշռի վրա ազդում են մի շարք գործոններ: Դրանք հետևյալն են.

1. երկրների տնտեսական և քաղաքական անհամաչափ զարգացումը և միջազգային մրցակցությունը,

2. տնտեսության պարբերաշրջանային տատանումները,

3. պետության արտասահմանյան ծախսերի աճը,

4. տնտեսության ռազմականացումը և ռազմական ծախսերի աճը,

5. միջազգային ֆինանսական փոխկախվածությունը,

6. միջազգային առևտրում տեղի ունեցող փոփոխությունները,

7. արժութաֆինանսական գործոնների ազդեցությունը:

Վճարային հաշվեկշռի պետական կարգավորումը այդ հաշվեկշռի հիմնական հոդվածների ձևավորման, ինչպես նաև հաշվեկշռի առկա

մնացորդի ծածկման նպատակով իրականացվող պետական միջոցառումների ամբողջություն է:

Վճարային հաշվեկշռի պակասուրդ ունեցող երկրները կիրառում են միջոցառումների այնպիսի համակարգ, որն ուղղված է ապրանքների արտահանման խթանմանը, ներմուծման կաշկանդմանը, արտասահմանյան կապիտալի ներգրավմանը և երկրից կապիտալի արտահոսքի սահմանափակմանը: Այդ միջոցառումներն են.

1. Հակաինֆլացիոն քաղաքականությունը, որի նպատակը ներքին պահանջարկի կրճատումն է և ներառում է պետական ծախսերի սահմանափակումը, գների և աշխատավարձի տվյալ մակարդակի պահպանումը:

2. Ազգային արժույթի փոխարժեքի իջեցումը, որն ուղղված է ապրանքների ու ծառայությունների արտահանման խթանմանը և ներմուծման կրճատմանը:

3. Արժութային սահմանափակումները, ինչպես օրինակ՝ արտահանողների արտարժութային հասույթի պարտադիր վաճառքը պետությանը, ներմուծողներին արտարժութի վաճառքի լիցենզավորումը, արժութային գործարքների կենտրոնացումը լիազորված բանկերում, որոնք ուղղված են վճարային հաշվեկշռի պակասուրդի ծածկմանը՝ կապիտալի արտահոսքի սահմանափակման և ներհոսքի խթանման, ինչպես նաև ապրանքների ներմուծման կաշկանդման միջոցով:

4. Ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունը: Վճարային հաշվեկշռի պակասուրդը կրճատելու նպատակով պետությունը պետական բյուջեից լրահատկացումներ է տրամադրում արտահանողներին, բարձրացնում է ներմուծման մաքսատուրքերը, կապիտալի ներհոսքը խթանելու համար ազատում է հարկումից հայրենական արժեթղթեր ունեցող արտասահմանցիների ստացած տոկոսային եկամուտները, իսկ դրամավարկային քաղաքականության միջոցով կարգավորում է դրամական զանգվածի մեծությունը և տոկոսադրույքը:

Հավելլորդային վճարային հաշվեկշռի դեպքում կարգավորման միջոցառումների նպատակը ոչ ցանկալի, խիստ մեծ մնացորդի վերացումը կամ էական կրճատումն է: Իրականացվող ֆինանսական, վարկային ու արժութային քաղաքականության միջոցառումները, այդ թվում՝ արժույթի փոխարժեքի իջեցումը, նպատակաուղղվում են ապրանքների ներմուծման խթանմանն ու արտահանման կաշկանդմանը, կապիտալի արտահանման ավելացմանը և ներմուծման սահմանափակմանը:

Վճարային հաշվեկշռի պակասուրդի ֆինանսավորման աղբյուր կարող են լինել կապիտալի համաշխարհային շուկայում արդյունաբերական զարգացած երկրների կողմից կենտրոնացված միջոցները: Պակասուրդի ֆինանսավորման համար օգտագործվում են նաև կեն-

տրոնական բանկերի միջև կնքվող սվոպ գործառնությունների հիման վրա տրամադրվող կարճաժամկետ վարկերը:

Վճարային հաշվեկշռի վերջնական հավասարակշռման համար օգտագործվում են երկրի պաշտոնական արժութային պաշարները, մասնավորապես՝ փոխարկելի արտարժույթները և ոսկին: Բացի այդ, օգտագործվում են նաև այլ երկրների կողմից լրահատկացումների և նվիրատվությունների ձևով տրամադրվող օգնությունները:

Վճարային հաշվեկշռի դրական մնացորդը երկրի կողմից օգտագործվում է արտաքին պարտավորությունները փակելու, այլ երկրներին վարկեր տրամադրելու, պաշտոնական ոսկե-արժութային պաշարների մեծացման, ինչպես նաև արտասահմանում ակտիվների ձեռքբերման համար:


Վճարային հաշվեկշռի կարգավորման համաշխարհային փորձը վկայում է, որ դժվար է միաժամանակ հասնել երկրի տնտեսության և՛ արտաքին, և՛ ներքին հավասարակշռության: Դա պայմանավորված է հավելուրդային և պակասուրդային վճարային հաշվեկշռ ունեցող երկրների համագործակցության ձգտմամբ և դրանցում առկա տարածայնություններով:

Պետության տնտեսական քաղաքականության ազդեցությունը վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի մնացորդների վրա պարզելու համար քննարկենք երկրի հարկաբյուջետային քաղաքականության, այլ երկրների հարկաբյուջետային քաղաքականության, ներդրումային պահանջարկի փոփոխության և արտաքին առևտրային քաղաքականության ազդեցությունը արժույթի իրական փոխարժեքի և վճարային հաշվեկշռի վրա:

ա. երկրի հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը

Եթե երկիրը վարում է խթանող հարկաբյուջետային քաղաքականություն և ավելացնում է պետական ծախսերը կամ կրճատում հարկերը, ապա S_2 -ի գիծը (գծանկար 4) դրանց ազդեցությամբ շարժվում է դեպի ձախ, որի հետևանքով արժույթի իրական փոխարժեքը բարձրանում է:

Եթե արժույթի իրական փոխարժեքը բարձրանում է, այլ երկրների ապրանքները մեզ համար դառնում են էժան, իսկ մեր ապրանքները արտասահմանցիների համար՝ թանկ: Դրա հետևանքով արտահանման ծավալը կրճատվում է, և զուտ արտահանման մնացորդը՝ փոքրանում:




Խնայողության կրճատման հետևանքով S_1-I գիծը տեղաշարժվում է դեպի ձախ և ընդունում S_2-I դիրքը: Դրա հետևանքով արժույթի իրական փոխարժեքը՝ E_1 , դառնում է E_2 , որի ազդեցությամբ զուտ արտահանումը NX_1 կետից փոխադրվում է NX_2 կետ:

Գծանկար 4. Խթանող հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը արժույթի իրական փոխարժեքի վրա

բ. Այլ երկրների հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը

Այլ երկրների խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը կրճատում է այդ երկրների խնայողությունների ծավալը: Համաշխարհային ֆինանսական շուկայում կապիտալի առաջարկը փոքրանում է, և դրա հետևանքով բարձրանում է տոկոսադրույքը: Փոքր բաց երկրում կապիտալի տոկոսադրույքը նույնպես բարձրանում է և հանգեցնում ներդրումների կրճատման, որի հետևանքով $S-I$ տարբերությունը մեծանում է (գծանկար 5):




Համաշխարհային ֆինանսական շուկայում տոկոսադրույքի բարձրացման արդյունքում մեր երկրում այն նույնպես բարձրանում է, ներդրումները $I(r_1)$ -ից դառնում են $I(r_2^*)$, ուստի $(S-I(r_1^*))$ գիծը տեղափոխվում է դեպի աջ: Արժույթի իրական փոխարժեքն իջնում է, որը խթանում է զուտ արտահանման ավելացումը:

Գծանկար 5. Այլ երկրների խթանող հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը արժույթի իրական փոխարժեքի վրա

Երկրում չօգտագործված խնայողությունը հոսում է միջազգային ֆինանսական շուկա, որի արդյունքում վճարային հաշվեկշռի կապիտալի շարժի հաշիվը փոքրանում է, իսկ զուտ արտահանումը՝ աճում:

գ. Ներդրումային պահանջարկի փոփոխություն

Եթե փոքր բաց տնտեսություն ունեցող երկիրը խթանում է ներդրումների ավելացումը, ապա դրա արդյունքում S-I տարբերությունը փոքրանում է (գծանկար 6):



Ներդրումների ավելացման արդյունքում S-I₁ գիծը տեղափոխվում է ձախ և ընդունում է S-I₂ դիրքը: Դրա հետևանքով արժույթի իրական փոխարժեքը E₁-ից բարձրանում է E₂ կետը, իսկ NX₁ զուտ արտահանման ծավալը ստանում է NX₂ արժեքը:

Գծանկար 6. Ներդրումների խթանման ազդեցությունը արժույթի իրական փոխարժեքի վրա


Խնայողության և ներդրումների տարբերության կրճատմամբ պայմանավորված՝ կապիտալն ավելի քիչ կհոսի երկրից, ուստի վճարային հաշվեկշռի կապիտալի շարժի հաշիվը կմեծանա, իսկ ընթացիկ հաշվի մնացորդը կփոքրանա:

դ. Արտաքին առևտրային քաղաքականության ազդեցությունը

Արտաքին առևտրի հովանավորչական քաղաքականությունը կապիտալի շարժի մնացորդի վրա ազդել չի կարող, ուստի ընթացիկ հաշվի մնացորդը նույնպես փոփոխվել չի կարող (գծանկար 7):

Փաստորեն արտաքին առևտրային հովանավորչական քաղաքականությունը չի ազդում զուտ արտահանման ծավալի փոփոխության վրա, և միայն բարձրանում է արժույթի իրական փոխարժեքը, որի ազ-

դեցուքամբ զուտ արտահանումը նույնպես հետագայում կվերադառնա իր նախկին վիճակին, եթե երկրում պահպանվեն կայուն գներ:



Եթե երկիրը վարում է ներմուծման կաշկանդման քաղաքականություն, ապա դրանից զուտ արտահանումը կարող է ավելանալ, որի հետևանքով արժույթի իրական փոխարժեքը կբարձրանա և կկաշկանդի արտահանումը այնքան ժամանակ, մինչև որ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի մնացորդը ընդունի իր նախկին ծավալը:

Գծանկար 7. Արտաքին առևտրային քաղաքականության ազդեցությունը արժույթի իրական փոխարժեքի վրա

2.5. Ընթացիկ հաշվի և արժույթային փոխարժեքի փոխկապակցվածությունը

Արտաքին շուկաներում հայրենական ապրանքների մրցունակությունը, արտահանման և ներմուծման ծավալները, հետևաբար նաև երկրի ընթացիկ հաշվի մնացորդը մեծապես կախված են արժույթի փոխարժեքից: Ստորև ներկայացվում է երկու մոդել, որոնցում վերլուծվում է փոխարժեքի փոփոխման ազդեցությունը վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի վրա: Դրանք պարզաբանում են այն հարցը, թե արդյոք ազգային արժույթի փոխարժեքի իջեցումը բարելավում է ընթացիկ հաշիվը:

Առաջինը առաձգականության մոդելն է, որի հիմնադրույթները մշակել են Ալֆրեդ Մարշալն ու Աբբա Լեքները: Ավելի ուշ այն կատարելագործեցին Ջոն Ռոբինսոնը (1937), իսկ ապա՝ Ֆրից Մաքլափը (1955): Մոդելը հիմնվում է այն ենթադրության վրա, որ արտահանվող և ներմուծվող ապրանքների առաջարկը բացարձակ առաձգական է և, հետևաբար, պահանջարկի փոփոխությունը գների վրա որևէ ազդեցություն չունի: Այսինքն՝ ներքին ու արտաքին գները հաստատագրված են, ինչը նշանակում է, որ հարաբերական գների փոփոխությունը

կարող է պայմանավորվել միայն անվանական փոխարժեքի փոփոխմամբ:

Ընթացիկ հաշիվը (CA), արտահայտված ազգային արժույթով, ներկայացվում է հետևյալ կերպ¹.

$$CA = PX - SP^*M,$$

որտեղ՝ P-ն և P*-ը համապատասխանաբար ներքին ու արտաքին գներն են, X-ը՝ արտահանումը, M-ը՝ ներմուծումը, S-ը՝ փոխարժեքը (միավոր օտարերկրյա արժույթի հաշվով՝ ազգային արժույթի միավորները): Ներքին և արտաքին գները իբրև միավոր ընդունելու դեպքում կստանանք, որ.

$$CA = X - SM \Rightarrow dCA = dX - SdM - MdS$$

Վերջինս բաժանելով dS -ի վրա՝ կունենանք.

$$\frac{dCA}{dS} = \frac{dX}{dS} - S \frac{dM}{dS} - M \frac{dS}{dS}: \quad (1)$$

Սահմանենք, որ արտահանման պահանջարկի գնային առաձգականությունը (η_x) ցույց է տալիս արտահանման տոկոսային փոփոխությունը գնի, այն է՝ փոխարժեքի տոկոսային փոփոխության դեպքում:

$$\eta_x = \frac{dX/X}{dS/S} \Rightarrow dX = \eta_x \frac{dS}{S} X \quad (2)$$

Նույն ձևով ներմուծման պահանջարկի գնային առաձգականությունը (η_m) հավասար է.

$$\eta_m = -\frac{dM/M}{dS/S} \Rightarrow dM = -\eta_m \frac{dS}{S} M \quad (3)$$

(2) և (3) հավասարումները (1)-ում տեղադրելու դեպքում կստանանք.

$$\frac{dCA}{dS} = \frac{\eta_x X}{S} + (\eta_m M) - M \Rightarrow \frac{dCA}{dS} \frac{1}{M} = \frac{\eta_x X}{SM} + \eta_m - 1$$

Ենթադրելով, որ առևտուրը սկզբնապես հավասարակշռված էր՝ $X / SM = 1$, կարող ենք գրել.

$$\frac{dCA}{dS} = M(\eta_x + \eta_m - 1):$$

Վերջինս հայտնի է իբրև Մարշալ-Լեոների պայման և փաստում է, որ ընթացիկ հաշվի հավասարակշռված մակարդակից սկսած՝ ազգային արժույթի փոխարժեքի նվազումը կբարելավի ընթացիկ հաշվի

¹ Մոդելում անտեսվում են գործոնային եկամուտները և տրանսֆերտները:

պակասուրդը ($dCA/dS > 0$) միմիայն այն դեպքում, երբ $\eta_x + \eta_m > 1$: Հակառակ դեպքում, եթե երկու առաձգականությունների գումարը փոքր է մեկից, ապա արժույթի փոխարժեքի անկումը բացասաբար կանդրադառնա ընթացիկ հաշվի վրա:

Արժույթի փոխարժեքի նվազումը պայմանավորում է երկու էֆեկտ՝ գնի և ծավալի:

Գնի էֆեկտի էությունը հանգում է հետևյալին. փոխարժեքի արժեզրկման հետևանքով արտահանման արժեքը նվազում է, որովհետև արտահանման ծավալները կարճ ժամկետում չեն փոխվում, իսկ ներմուծման արժեքը մեծանում է, ինչն ընթացիկ հաշվի վրա բացասական ազդեցություն է ունենում:

Ծավալի էֆեկտի էությունն այն է, որ արտահանվող ապրանքների էժանացումը ընդլայնում է արտահանումը, իսկ ներմուծվող ապրանքների թանկացումը կրճատում է ներմուծումը, ինչը ընթացիկ հաշվի վրա դրական է անդրադառնում:

Հետևաբար, ընթացիկ հաշվի վրա փոխարժեքի նվազման վերջնական ազդեցությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե որ էֆեկտն է գերակշռում:

Ավելի ուշ Ստերնը (1973) ցույց տվեց, որ երբ ներմուծվող ու արտահանվող ապրանքների առաջարկը բացարձակ առաձգական չէ, ապա արժույթի արժեզրկումը կբարելավի ընթացիկ հաշիվը, եթե.

$$\frac{\varepsilon_x(\eta_x - 1)}{\varepsilon_x + \varepsilon_m} + \frac{\eta_m(\varepsilon_m + 1)}{\eta_m + \varepsilon_m} > 0,$$

որտեղ՝ ε_x -ը արտահանվող ապրանքի առաջարկի առաձգականությունն է, իսկ ε_m -ը՝ ներմուծվող ապրանքի առաջարկի առաձգականությունը:

Ընթացիկ հաշիվը կարող է բարելավվել նաև այն դեպքում, երբ պահանջարկի առաձգականությունների գումարը փոքր է մեկից:

Բանն այն է, որ երբ առաջարկի առաձգականությունները բացարձակ չեն, ապա արտահանման պահանջարկի աճը մասամբ կբարձրացնի արտահանվող ապրանքի գինը՝ ընդլայնելով արտահանումից ստացվող հասույթը, իսկ ներմուծման նկատմամբ պահանջարկի անկումը, ընդհակառակը, կնվազեցնի ներմուծվող ապրանքի գինը, համապատասխանորեն կրճատելով ներմուծման վրա կատարվող ծախսերը:

Այն, որ արժույթի արժեզրկումը կարող է բացասաբար անդրադառնալ ընթացիկ հաշվի վրա, բազմաթիվ հետազոտողների մղել է էմպիրիկ ուսումնասիրությունների: Այդ հետազոտությունների ընդհանրական եզրահանգումն այն է, որ Մարշալ-Լեոնների պայմանը գործում է

միայն երկարատև (ավելի քան երկու տարի) ժամանակաշրջանի համար: Կարճատև շրջանում ծավալի էֆեկտը աննշան է, և գնի էֆեկտի գերակշռման հետևանքով ընթացիկ հաշիվը վատթարանում է. միայն երկար ժամանակահատվածում է ծավալի էֆեկտը դառնում գերակշռող:

Ծավալի էֆեկտի դանդաղ գործողությունը բացատրվում է այն հանգամանքով, որ գոյություն ունի ժամանակային խզում շուկայում գների փոփոխման և դրանք՝ սպառողների ու արտադրողների որոշումներին համապատասխանեցնելու միջև: Բացի այդ, ավելի հավանական է, որ արտաքին արտադրողները տեղական շուկայում գնային մրցունակության կորստի դեպքում նախընտրեն իջեցնել գները, քան թե կորցնել շուկան: Այնուհետև, արտաքին շուկայում ներմուծման հետ մրցող արտադրությունները նույնպես՝ ի պատասխան տեղական արտահանման աճի, կիջեցնեն գները: Արձանագրենք, որ գների իջեցման հնարավորությունը վկայում է, որ շուկան կատարյալ մրցակցային է:

Քանի որ առաձգականության մոդելը դրսևորում է որոշակի թերություններ, ապա օգտագործվում է երկրորդը՝ կլանման մոդելը:

Առաձգականության մոդելի թերություններից մեկն այն է, որ չի դիտարկվում փոխարժեքի փոփոխման ազդեցությունը տնտեսության մյուս հատվածներում տեղի ունեցող փոփոխությունների վրա: Այնինչ, ներմուծման և արտահանման փոփոխությունը անխուսափելիորեն ազդում է ազգային եկամտի վրա և, հետևաբար, արժույթի արժեզրկման հետևանքների վերլուծությունը պահանջում է նաև եկամտի էֆեկտի դիտարկում:

1952թ-ին Ս.Ալեքսանդրի կողմից առաջարկված կլանման մոդելի հիմքում այն դրույթն է, ըստ որի՝ ընթացիկ հաշվի պակասուրդը ներքին արտադրության և ներքին սպառման (կլանման) անհավասարակշռության արդյունք է՝ $CA = Y - A$: Հետևաբար, ունենք, որ $dCA = dY - dA$, այսինքն՝ ընթացիկ հաշվի վրա արժույթի արժեզրկման ազդեցությունը կախված է այն բանից, թե որքանով է ազդում ազգային եկամտի և ներքին սպառման վրա:

Ազգային եկամտի վրա ազգային արժույթի փոխարժեքի արժեզրկման ազդեցությունը դրսևորվում է հետևյալ կերպ. երբ տնտեսությունը ոչ լրիվ զբաղվածության վիճակում է, և եթե սպառման սահմանային հակումը մեկից փոքր է, ապա եկամտի աճը կբարելավի, իսկ նվազումը կվատթարացնի ընթացիկ հաշիվը: Այստեղ գործում է երկու տեսակի էֆեկտ՝ զբաղվածության և առևտրի պայմանների:

Զբաղվածության էֆեկտի էությունը հանգում է հետևյալին. եթե տնտեսությունը ոչ լրիվ զբաղվածության վիճակում է, և երբ տեղի ունի Մարշալ-Լեոնների պայմանը, ապա արժույթի արժեզրկման դեպքում տեղի կունենա զուտ արտահանման աճ, ինչը բազմարկչային ար-

դյուներով կբերի ազգային եկամտի ու զբաղվածության ընդլայնմանը: Սակայն եթե Մարշալ-Լերների պայմանը տեղի չունի, ապա արժույթի արժեզրկման դեպքում զուտ արտահանումը կնվազի և, հետևաբար, ազգային եկամուտը կկրճատվի: Փաստորեն զբաղվածության էֆեկտի ազդեցությունը ազգային եկամտի վրա որոշակի չէ:

Առևտրի պայմանների էֆեկտի էությունն այն է, որ արժույթի արժեզրկման դեպքում ներմուծումն արտահանման համեմատ թանկանում է, այսինքն՝ միավոր ներմուծում ձեռք բերելու համար ավելի մեծ քանակի արտահանում է անհրաժեշտ: Հետևաբար, ազգային եկամտի վրա առևտրի պայմանների էֆեկտի ազդեցությունը բացասական է:

Այսպիսով, նույնիսկ եթե Մարշալ-Լերների պայմանը տեղի ունի և զուտ արտահանումն արժույթի արժեզրկման դեպքում աճում է, ապա առևտրի պայմանների բացասական էֆեկտը հանդես է գալիս իբրև հակակշռող գործոն:

Ավելին, եթե նույնիսկ ազգային եկամուտը զբաղվածության էֆեկտի հետևանքով աճի, ապա, այնուամենայնիվ, ընթացիկ հաշվի վրա դրա ազդեցությունը կախված կլինի սպառման սահմանային հակման մեծությունից: Մասնավորապես, ընթացիկ հաշիվը կբարելավվի միայն այն դեպքում, երբ $a < 1$: Ս.Ալեքսանդրը պնդում էր, որ նոր աշխատանք ստացած աշխատողների սպառման հակումը մեկից բարձր է, այնպես, ինչպես եկամտի աճի պարագայում ապագայի նկատմամբ դրական սպասումներ ունեցող ֆիրմաներինը: Իսկ այդ դեպքում եկամտի աճը կվատթարացնի ընթացիկ հաշիվը:

Ինչ վերաբերում է լրիվ զբաղվածության տարբերակին, ապա արժույթի արժեզրկման պարագայում այն բնականորեն չի կարող մեծացնել ազգային եկամուտը և, հետևաբար, ընթացիկ հաշվի բարելավումը հնարավոր է միայն ի հաշիվ ներքին ուղղակի սպառման կրճատման:

Այժմ պարզաբանենք ազգային արժույթի փոխարժեքի արժեզրկման ազդեցությունը սպառման վրա:

Փողի իրական պաշարի հաշվեկշռման էֆեկտի էությունն այն է, որ փողի նկատմամբ պահանջարկը ենթադրում է իրական պահանջարկի հաշվեկշռում. եթե գները աճում են, ապա փողի նկատմամբ պահանջարկը պետք է աճի միևնույն չափով.

$$M/P = k,$$

որտեղ՝ k -ն հաստատուն է, իսկ $P = \alpha p + (1 - \alpha)SP^*$, որում a -ն տեղական ապրանքների ծախսի տեսակարար կշիռն է ընդհանուր ծախսերում, P -ն՝ այդ ապրանքների գինը, P^* -ը՝ ներմուծվող ապրանքների գինը, S -ը՝ փոխարժեքը:

Երբ փողի առաջարկը հաստատուն է, և տնտեսավարող սուբյեկտները մտադիր են k -ն պահել հաստատուն, ապա արժույթի ար-

ժեզրկման (S-ի աճի) արդյունքում P-ի աճը նշանակում է, որ փողի իրական հաշվեկշիռը հաստատումն պահելու համար տնտեսավարող սուբյեկտները հարկադրված են կրճատել ուղղակի սպառումը: Նրանք կփորձեն տնօրինվող փողի քանակությունը ընդլայնել պարտատոմսերի վաճառքի միջոցով, որի հետևանքով ներքին տոկոսադրույքը կբարձրանա: Վերջինս կնվազեցնի ներդրումները և մասնավոր սպառումը, այսինքն՝ ուղղակի սպառումը: Շեշտենք, որ իրական հաշվեկշռի էֆեկտի գործողության համար անհրաժեշտ է, որ Կենտրոնական բանկը չընդլայնի փողի առաջարկը:

Եկամտի վերաբաշխման էֆեկտը դրսևորվում է այն դեպքում, երբ արժույթի արժեզրկման հետևանքով գների ընդհանուր մակարդակի (P₁) աճը այս կամ այն ազդեցությունն է ունենում եկամտի բաշխման վրա: Ընդ որում, եթե եկամուտը վերաբաշխվում է սպառման ցածր հակում ունեցող ապրանքներից դեպի բարձր հակում ունեցողները, ապա ուղղակի սպառումը աճում է, հակառակ դեպքում այն կրճատվում է:

P₁-ի աճի դեպքում հաստատագրված եկամուտ ունեցողների իրական եկամուտը կնվազի, և եթե ընդհանուր եկամուտը չի փոխվել, ապա փոփոխում եկամուտ ունեցողների իրական եկամուտը կաճի: Սովորաբար, հաստատագրված եկամուտ ունի հարաբերականորեն ոչ ապահով խավը, որի սպառման սահմանային հակումը բարձր է՝ ի տարբերություն փոփոխում եկամուտ ունեցող ապահով խավի, որի սպառման հակումը ցածր է: Արդյունքում՝ եկամտի նմանօրինակ վերաբաշխման դեպքում ուղղակի սպառումը կկրճատվի:

Արժույթի արժեզրկման արդյունքում, սովորաբար, արտահանող ճյուղի և ներմուծման հետ մրցող ճյուղի եկամուտներն ավելանում են, միաժամանակ գների ընդհանուր մակարդակի աճի հետևանքով իրական աշխատավարձը կրճատվում է: Սակայն այս դեպքում ուղղակի սպառման վրա ազդեցությունն անորոշ է, քանի որ, եթե ֆիրմաները ապագայի նկատմամբ ունեն դրական սպասումներ, առավել ևս եկամուտների աճի պայմաններում պետք է ակնկալել ներդրումների ընդլայնում և ուղղակի սպառման աճ, թեպետ կարելի է պնդել, թե ֆիրմաների սպառման սահմանային հակումը փոքր է աշխատողների սպառման սահմանային հակումից:

Եկամուտների վերաբաշխումը հնարավոր է նաև ֆիրմաների ու տնային տնտեսությունների միջև: Այն ֆիրմաները, որոնք օգտագործում են ներմուծվող հումք, արժույթի արժեզրկման դեպքում կտուժեն՝ ի տարբերություն արտահանման ոլորտի ձեռնարկությունների: Այն տնային տնտեսությունները, որոնք արհմիությունների անդամ են, կարող են կանխել իրենց իրական եկամուտների անկումը: Հետևաբար, սպառման վրա եկամուտների վերաբաշխման վերջնական ազդեցությունը կախված է այն բանից, թե որքան է այն ֆիրմաների ու տնային

տնտեսությունների սպառման սահմանային հակումը, որոնք տուժածների համեմատությամբ շահել են: Այսպիսով՝ եկամտի վերաբաշխման ազդեցությունը սպառման վրա բնավ միարժեք չէ: Չնայած վերջնական արդյունքի ոչ միարժեքությանը, սպառման մոտեցման հիմնական եզրահանգումն այն է, որ արժույթի արժեզրկումը դրական ազդեցություն կունենա ընթացիկ հաշվի պակասուրդի վրա միայն այն դեպքում, երբ ուղեկցվում է այնպիսի տնտեսական քաղաքականությամբ, որը նպաստում է եկամտի աճին և կանխում ներքին սպառումը:

2.6. Վճարային հաշվեկշռի ընդհանուր հավասարակշռվածության ձևավորման պայմանները

Վճարային հաշվեկշռի ու արժույթային փոխարժեքի կապը դիտարկելիս փաստարկվեց, որ ընթացիկ հաշվի վրա արժույթի արժեզրկման ազդեցությունը կախված է տնտեսական քաղաքականության բնույթից: Ստորև վերլուծվում է ինչպես մակրոտնտեսական քաղաքականության, այնպես էլ արժույթային փոխարժեքի փոփոխման ազդեցությունը բաց տնտեսության վրա: Բաց տնտեսությունը երկար ժամանակահատվածում պետք է հավասարակշռի իր ընթացիկ հաշիվը, քանի որ երկիրը չի կարող անվերջ կուտակել պարտավորություններ կամ պահանջներ այլ երկրների նկատմամբ, այսինքն՝ երկրի ընթացիկ հաշիվը չի կարող անվերջ լինել պակասուրդային կամ հավելուրդային:


1948-73թթ. միջազգային արժույթային համակարգում գործում էր արժույթի հաստատագրված փոխարժեքների համակարգ: Արժույթի փոխարժեքի փոփոխություն թույլատրվում էր միայն «հիմնարար անհավասարակշռության» դեպքում: Ահա թե ինչու, նախորդ դարի 50-60-ական թթ. գործնական մեծ նշանակություն ուներ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների հարաբերական արդյունավետության որոշումը, քանի որ արժույթային քաղաքականության՝ իբրև մակրոտնտեսական գործիքի կիրառումը հնարավոր է միայն հազվադեպ: Այդ առումով նշանակալի զարգացում էր Ջեյմս Ֆլեմինգի և Ռոբերտ Մանդելի կողմից 60-ականների սկզբին IS-LM մոդելի ընդլայնումը և տնտեսության արտաքին հատվածի ներառումը:

Մակրոտնտեսական քաղաքականության վերջնական նպատակը ներքին և արտաքին հավասարակշռության հաստատումն է, որից առաջինը ենթադրում է լրիվ զբաղվածություն ու գների կայուն մակարդակ, իսկ երկրորդը՝ հավասարակշռված վճարային հաշվեկշիռ: Նշված խնդիրը ամփոփ (1955թ.) ներկայացրեց Թրևոր Սվանը՝ ընդհանուր հավասարակշռության հաստատման մեխանիզմի մշակմամբ:

Սվանի աղյուսակում (գծանկար 8) ուղղահայաց առանցքը արտահայտում է ազգային արժույթի իրական փոխարժեքը՝ միավոր արտար-

ծույթի հաշվով: Հետևաբար, այդ առանցքով դեպի վեր՝ ազգային արծույթի փոխարժեքը նվազում է, այսինքն՝ երկրի արտաքին մրցունակությունը բարելավվում է: Հորիզոնական առանցքը արտահայտում է իրական ներքին սպառումը, այսինքն՝ սպառման, ներդրումների և պետական գնումների հանրագումարը:

IB կորը բնութագրում է իրական փոխարժեքի և ներքին սպառման բոլոր այն համամասնությունները, որոնց դեպքում տնտեսությունը ներքին հավասարակշռության վիճակում է: Լրիվ զբաղվածություն և կայուն գներ: Կորը վարընթաց է, քանի որ իրական փոխարժեքի բարձրացման (առանցքով դեպի վար) դեպքում արտահանումը կրճատվում է, իսկ ներմուծումը՝ աճում, և, հետևաբար, լրիվ զբաղվածության պահպանումը պահանջում է ներքին սպառման աճ: IB կորից դեպի աջ առկա է ինֆլյացիոն ճնշում, քանի որ յուրաքանչյուր տրված փոխարժեքի համար ներքին ծախսերն ավելին են, քան պահանջվում է լրիվ զբաղվածության ապահովման համար: Կորից դեպի ձախ առկա է դեֆլյացիոն ճնշում և գործազրկություն, քանի որ ներքին ծախսերն անբավարար են լրիվ զբաղվածության հասնելու համար:



Գծանկար 8. «Սվանի աղյուսակը»

A

EB կորը բնութագրում է արտաքին հավասարակշռությունը: Կորը վերընթաց է, քանի որ փոխարժեքի անկման (առանցքով դեպի վեր) դեպքում արտահանումը աճում է, իսկ ներմուծումը՝ կրճատվում: Հետևաբար, ընթացիկ հաշվի դրական մնացորդի ձևավորումը կանխելու և ներմուծման հակակշռող աճ ապահովելու համար անհրաժեշտ է ներքին սպառման աճ: EB կորից դեպի աջ՝ ներքին կլանումն ավելին

է, քան անհրաժեշտ է ընթացիկ հաշիվը հավասարակշռելու համար, հետևաբար, ընթացիկ հաշիվը պակասուրդային է, իսկ դեպի ձախ, ընդհակառակը, ընթացիկ հաշիվը հավելուրդային է:

Այսպիսով, Սվանի աղյուսակը ցույց է տալիս տնտեսության անհավասարակշռության չորս տարբերակ, ընդ որում, միաժամանակ ներքին և արտաքին հավասարակշռություն հաստատվում է միայն b կետում: Ենթադրենք՝ տնտեսությունը սկզբնապես գտնվում է a կետում, որում ինֆլյացիոն ճնշումը զուգորդվում է ընթացիկ հաշվի պակասուրդի հետ: Եթե տնտեսական քաղաքականություն իրականացնողները հաստատագրված պահեն փոխարժեքը և ընթացիկ հաշվի պակասուրդը կրճատեն ներքին սպառման սահմանափակման միջոցով, ապա տնտեսությունը կտեղաշարժվի c կետ, որում արտաքին հավասարակշռության հաստատման հաշվին տնտեսությունը կբախվի գործազրկության մակարդակի բարձրացմանը: Եվ ընդհակառակը, եթե արտաքին հավասարակշռության հաստատումը կատարվի ի հաշիվ իրական փոխարժեքի կրճատման, ապա տնտեսությունը կտեղաշարժվի d կետ՝ պայմանավորելով ինֆլյացիոն ճնշման հետագա ուժեղացում:

Սվանի աղյուսակի էական եզրահանգումներից մեկն այն է, որ մեկ միջոցի կիրառմամբ հնարավոր չէ իրագործել երկու նպատակ: a-ից b տեղաշարժվելու համար անհրաժեշտ է սահմանափակել ինչպես ներքին սպառումը, այնպես էլ կրճատել փոխարժեքը: Այն գաղափարը, որ կիրառվող միջոցների թիվը պետք է լինի այնքան, որքան նպատակներն են, մշակել և ապացուցել է Նոբելյան մրցանակակիր Յան Տինբերգենը (1952):

Եթե երկրի կենտրոնական բանկը իրականացնում է արժույթի հաստատագրված փոխարժեքի քաղաքականություն, ապա վճարային հաշվեկշիռը հավասարակշռվում է այն դեպքում, երբ ռեզիդենտներից ոչ ռեզիդենտներին կատարված վճարումները հավասար են ռեզիդենտների ստացած վճարումներին, հետևաբար, այդ բանկի տրամադրության տակ գտնվող արժույթային պահուստները չեն փոփոխվում:

Լողացող փոխարժեքի դեպքում ստացված և վճարված միջոցները ինքնըստինքյան հավասարվում են, քանի որ արտարժույթի ավելցուկային պահանջարկը կամ առաջարկը հավասարակշռելու համար փոխարժեքը փոփոխվում է:

Լայնորեն տարածված տեսակետի համաձայն, ցանկալի փոխարժեքն այն է, որի դեպքում ընթացիկ հաշիվը հավասարակշռված է: Այդ դեպքում երկիրը իր ներմուծման դիմաց վճարում է արտահանման, արտասահմանից ստացված եկամուտների ու տրանսֆերտների հաշվին, կապիտալի ներհոսքը հավասար է արտահոսքին, և երկրի միջազգային ներդրումային դիրքը չի փոփոխվում:

Իրականում, սակայն, այս սահմանումը չի կարող համարվել վճարային հաշվեկշռի հավասարակշռության համարժեք սահմանում: Դիցուք՝ տվյալ փոխարժեքի պայմաններում ընթացիկ հաշիվը գտնվում է հավասարակշռության վիճակում, սակայն առկա է գործազրկության բարձր մակարդակ: Վերջինիս մակարդակը կրճատելու համար ներքին քաղաքականության տեսանկյունից համարժեք արձագանքը կլինի խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կիրառումը: Նմանօրինակ քաղաքականությունը կավելացնի ազգային եկամուտը և, հավանաբար, նաև գների մակարդակը: Եկամտի աճը ներմուծումը կավելացնի այնպես, ինչպես գների մակարդակի բարձրացումը, որը հարաբերականորեն ոչ մրցունակ է դարձնում արտահանումը և, ընդհակառակը, նպաստում է ներմուծման ավելացմանը:

Այսպիսով, ներքին հավասարակշռության վերականգնմանը նպատակաուղղված քաղաքականությունը խախտում է *արտաքին հավասարակշռությունը*: Փաստորեն, հաստատագրված փոխարժեքի դեպքում նմանօրինակ քաղաքականությունը հանգեցնում է ընթացիկ հաշվի պակասուրդի ձևավորմանը, իսկ ճկուն փոխարժեքի դեպքում՝ արժույթի արժեզրկմանը: Այդ պատճառով, այն փաստը, որ ընթացիկ հաշիվը ի սկզբանե գտնվում էր հավասարակշռության վիճակում, չի նշանակում, որ այդ ժամանակ առկա փոխարժեքը գտնվում է ցանկալի մակարդակում: Ցանկալի համարվելու համար փոխարժեքը ոչ միայն պետք է ապահովի արտաքին հավասարակշռություն, այլև համապատասխանի ներքին հավասարակշռության ապահովման պայմանին:

Վճարային հաշվեկշռում կատարվող գործարքների գրանցման վերաբերյալ օրինակներ

1. Հայաստանի HPML ընկերությունը ԱՄՆ է արտահանում 20 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ծրագրային ապահովման փաթեթներ, որի դիմաց ST Microelectronics ընկերությունը վճարում է Հայաստանի HSBC բանկում իր հաշվի դեբետավորմամբ:

ՀՀ վճարային հաշվեկշիռ	ԱՄՆ վճարային հաշվեկշիռ
<i>Ընթացիկ հաշիվ</i>	<i>Ընթացիկ հաշիվ</i>
Ծառայությունների արտահանում +20	Ծառայությունների ներմուծում -20
<i>Ֆինանսական հաշիվ</i>	<i>Ֆինանսական հաշիվ</i>
ԱՄՆ ռեզիդենտի նկատմամբ ՀՀ բանկային պարտավորությունների կրճատում - 20	ՀՀ-ում ավանդային ակտիվների կրճատում +20

2. ՀՀ-ն արտահանում է 250 հզ դոլարի ապրանքներ Հունաստան՝ 250 հզ դոլարի ծառայությունների դիմաց:

ՀՀ վճարային հաշվեկշիռ	Հունաստանի վճարային հաշվեկշիռ
<i>Ընթացիկ հաշիվ</i>	<i>Ընթացիկ հաշիվ</i>
Ապրանքների արտահանում + 250	Ապրանքների ներմուծում - 250
Ծառայությունների ներմուծում - 250	Ծառայությունների արտահանում + 250

3. ՀՀ ռեզիդենտը որոշում է գնել 900 ԱՄՆ դոլար արժողությամբ Լատվիայի գանձապետական մուրհակներ՝ դրա դիմաց վճարելով Լատվիայի Parex բանկում իր հաշվի դեբետավորման և նույն բանկում Լատվիայի գանձապետարանի հաշվի կրեդիտավորման միջոցով:

ՀՀ վճարային հաշվեկշիռ	Լատվիայի վճարային հաշվեկշիռ
<i>Ֆինանսական հաշիվ</i>	<i>Ֆինանսական հաշիվ</i>
Լատվիայի գանձապետական մուրհակների ավելացում - 900	ՀՀ ռեզիդենտի նկատմամբ պարտամուրհակային պարտավորությունների մեծացում + 900
Լատվիայում բանկային դեպոզիտային ակտիվների կրճատում +900	ՀՀ ռեզիդենտի նկատմամբ բանկային դեպոզիտային պարտավորությունների կրճատում -900

4. ՀՀ կառավարությունը 100 հզ ԱՄՆ դոլար արժողությամբ դեղամիջոցների նվիրատվություն է կատարում Իրանին:

ՀՀ վճարային հաշվեկշիռ	Իրանի վճարային հաշվեկշիռ
<i>Ընթացիկ հաշիվ</i>	<i>Ընթացիկ հաշիվ</i>
Ապրանքների արտահանում +100	Ապրանքների ներմուծում -100
Ընթացիկ տրանսֆերտներ. դեբետ -100	Ընթացիկ տրանսֆերտներ. կրեդիտ +100

5. ՀՀ կառավարությունը վճարում է Գերմանիայի կառավարության տրամադրած վարկի տոկոսները՝ 3.5 մլն ԱՄՆ դոլար, գերմանական Դոյչե Բանկում (Deutsche Bank) ՀՀ ԿԲ հաշվի դեբետավորման և նույն

բանկում Գերմանիայի Բունդեսբանկի հաշվի կրեդիտավորման միջոցով:

ՀՀ վճարային հաշվեկշիռ	Գերմանիայի վճարային հաշվեկշիռ
Ընթացիկ հաշիվ	Ընթացիկ հաշիվ
Տոկոսների վճարում +3.5	Տոկոսների ստացում -3.5
Ֆինանսական հաշիվ	Ֆինանսական հաշիվ
Գերմանիայում բանկային դեպոզիտային ակտիվների կրճատում +3.5	ՀՀ ռեզիդենտի նկատմամբ բանկային դեպոզիտային պարտավորությունների կրճատում -3.5

Գրականության ցանկ

1. ՀՀ օրենքը «Մաքսատուրքի դրույքաչափերի մասին», 14.04.1997
2. ՀՀ Մաքսային օրենսգիրք, 6.06.2000
3. ՀՀ օրենքը «Մաքսավճարի մասին», 28.12.1998
4. ՀՀ օրենքը «Օտարերկրյա ներդրումների մասին», 31.08.1994
5. ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ ապրանքների (աշխատանքների և ծառայությունների) ներմուծման և արտահանման լիցենզավորման կարգի մասին», 17.01.1995
6. ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ արտադրական նշանակության սարքավորումների, մեքենաների և տեխնիկայի մյուս տեսակների արտահանումը կարգավորելու մասին», 10.09.1994
7. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը (1995-2002թթ.) հունվար-դեկտեմբերին, վիճակագրական ժողովածուներ, Եր., ՀՀ ՎՊՈՎՎ, 1995-1998, ՀՀ ԱՎԾ 1999-2002
8. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը, Եր., ՀՀ ՎՊՈՎՎ, 1995-1998, ՀՀ ԱՎԾ 1999-2002
9. Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը, 1996-1998, ՀՀ ՎՊՈՎՎ, 1997-2001, Եր., ՀՀ ԱՎԾ
10. Դարբինյան Ա.Վ., Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացում, Երևան, «Պետական ծառայություն», 2000
11. Հաստեղ Ս., Մելվին Մ. Միջազգային տնտեսագիտություն, հատոր 2, Միջազգային առևտուր, Երևան, «Գիտանք», 2001
12. Հովակիմյան Ա.Ս., Միջազգային տնտեսական հարաբերություններ, Երևան, «Հայաստան», 2002
13. Ղուլշյան Հ. Բ., Շուկայական տնտեսության ժամանակակից հարցերը, դասախոսություններ, Եր., «Տնտեսագետ», 1995
14. Մակրոտնտեսական կարգավորում, ուսումն. ձեռնարկ, գլխ. խմբագիր Ղուլշյան Հ. Բ., Եր., «Տնտեսագետ», 2003
15. Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ., Նազարյան Գ., Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Եր., «ԱՌՏ», 2002
16. Տիգրանյան Ի.Տ., ՀՀ արտաքին շուկաների ընդլայնման ուղիները, Պայմանագրային գիտահետազոտական աշխատանքների կատարման հաշվետվություն, ԵՊՏԻ, Երևան, 2000
17. Авдокушин Е.Ф., Международные экономические отношения, Москва, "Юрист", 1999
18. Буглай В.Б., Ливенцев Н.Н., Международные экономические отношения, Учебное пособие.-М., "Финансы и статистика", 1998
19. Киреев А.П., Международная экономика, Часть первая, международная микроэкономика: движение товаров и факторов производства, М., "Междун. отнош.", 1997
20. Линдерт П.Х., Экономика мирохозяйственных связей.- М.: Изд-во "Прогресс" Универс, 1992
21. Статистика международной торговли товарами: концепции и определения, методологическое исследования, ООН, Нью-Йорк, 2000

22. Терехов А.Б., Свобода торговли: анализ зарубежного опыта, изд. "Экономика", М., 1991
23. Bhagwati N. Export-Promoting Trade Strategy: Issues and Evidence, The World Bank Research Observer, Vol.3, N 1, Jan. 1988
24. Brander Y. Shaping Comparative Advantage: trade policy, industrial policy and economic performance, Toronto, Howe Institute, 1987
25. Haufbauer G. C., and Schott J.J. Economics Sanctions in Support of Foreign Policy Goals, MIT Press, Cambridge, Massachussetts, 1983
26. Krueger A. "Liberalization Attempts and Consequences", in Foreign Trade Regimes and Economic Development, vol.X , New York, National Bureau of Economic Research, 1978

Կարեն Յանկետի Գրիգորյան

ՀՀ արտաքին առևտուրը և վճարային հաշվեկշիռը

(դասախոսություն)

Հրատ. խմբագիր՝ Ռ.Վարդանյան
Սրբագրիչ՝ Ջ.Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ Ա.Մարգարյանի

Պատվեր՝ 27: Չափս՝ 60x84 1/16:
4,6 հեղ. մամուլ, 4,7 հրատ. մամուլ,
5 տպ. մամուլ, 4,63 տպ. պայմ. մամուլ:
Տպաքանակ՝ 300:

«Տնտեսագետ» հրատարակչություն
Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչության
տպագրական արտադրամասում
Երևան 25, Նալբանդյան, 128